

ՎԱՍՄ
ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ

1/2016

ԲՈՒՄ ՀԱՅՈՑ 4508 ԱՄԻ

For the Sake of
JUSTICE

1/2016

Gore Armenian 4508

(73)

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԳՈՐԴՄԻ «ՍՅՈՒՆԻՔ»
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ:

Գլխավոր խմբագիր
ԳԵՎՈՐԳ ԳԱԳԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Իրավաբան

Գիտական խմբագրական խորհուրդ

ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓԻ ԱՎԱԳՅԱՆ
*Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ՄԱՆՈՒԿ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ
*Մանկավարժական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների
թեկնածու, դոցենտ, ՌԴ Սոցիալական և
մանկավարժական գիտությունների
ակադեմիայի
ակադեմիկոս*

ԳԱՐԻԿ ՄԻՇԱՅԻ ՔԵՆՅԱՆ
*Քաղաքական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ՀԵՆՋԵԼ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ
*Պատմական գիտությունների թեկնածու,
փիլիսոփայական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր*

ԱՐՄԵՆ ՄԵՐՈՋԱՆԻ ՄԱԶՄԱՆՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր

ՄԱՄՍՈՆ ՄԱՆԹԱՇԻ ՔԱՌՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳՐԱՎԻԿ ԱՇՈՏԻ ԲԱԲԱՅԱՆ
*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր*

ԻԶԱԲԵԼԼԱ ԳՐԱՎԻԿԻ ԲԱԲԱՅԱՆ
*Մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ*

ԶՆԼՖՈՒՂԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՆ ՄՍՏՎԵՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու

Խմբագիրներ
ՍՈՃՅԱ ՄԻՄՈՆԻ ԲԱԲԱՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՊԱՐՄԱՍՅԱՆ

Համակարգչային ձևավորող
ԼՈՐԱ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

PUBLISHED ON THE RECOMMENDATION OF
THE SCIENTIFIC COUNCIL OF THE "SYUNIK" IN-
STITUTE OF GORIS

Editor-in-Chief
GEVORK GAGIK MANOUKIAN
Lawyer

Scientific Editorial Board

RUBEN HOVSEP AVAGYAN
Doctor of Law, Professor

MANOUK ASHOT MKRTCHYAN
*Doctor of Pedagogical Sciences, Candidate of Physical
and Mathematical Sciences, Academician of the Russ-
ian Academy of Pedagogical and Social Sciences*

GARIK MISHA KERYAN
Doctor of Politology, Professor

HENZEL GERASIM MANOUCHARYAN
*Candidate of Historical Sciences,
Doctor of Philosophy, Professor*

ARMEN MERUJAN MAZMANYAN
Doctor of Law

SAMSON MANTASH KARYAN
Doctor of Historical Sciences, Professor

GRAVIK ASHOT BABAYAN
Candidate of Pedagogical Sciences, Professor

IZABELLA GRAVIK BABAYAN
*Candidate of Pedagogical Sciences,
associate professor*

MARTIN MATVEY ZILFOUGHARYAN
Candidate of Law Sciences,

Editors
SOFIA SIMON BABAYAN
RUBEN VACHAGAN PARSAMYAN

Designer
LORA MATEVOSYAN

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

IN THIS ISSUE

ՄԱՆՈՒԿ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՉՅԱՆ.

«Մարդու իրավունքների հայկական դպրոցի հայեցակարգի վերամշակում համագործակցային ուսուցման մեթոդների (մտագործունեական խաղերի տեխնոլոգիայի) կիրառմամբ»..... 4

MANOUK ASHOT MKRTCHYAN:

Redevelopment of the Armenian Human Rights School Concept Using Collaborative Teaching Methods (Technology of Intellectual Games)4

ԵՂԻԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՍՁՅԱՆ.

Պետության և Շաամու հիմնարկի ծագումը հայկական բարձրավանդակում.....18

EGHIA HOVHANNES MOMJIAN:

Origin of the State and Shaam Institution in the Armenian Highland..... 18

ԵՂԻԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՍՁՅԱՆ.

«Թե ինչեր են հնարում թուրք լեզվաբանները»32

EGHIA HOVHANNES MOMJIAN:

”What Turkish Linguists are Inventing”32

ՌՈՒԲԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ՊԱՐՍԱՍՅԱՆ.

«Մի քանի հարցեր առաջին աշխարհամարտում հայերի դերի վերաբերյալ»47

RUBEN VACHAGAN PARSAMYAN:

A Few Questions About the Role of Armenians in the WWI.....47

ՄԱԿ-ի էջ

«ՄԱԿ-ի զարգացման նպատակների իրագործումը մեկնարկել է 2016թ. հունվարից».....56

UN page:

The United Nations Sustainable Development Goals Went Live.....58

Սույն համարից սկսած «Վասն արդարության» իրավական գիտամեթոդական հանդեսը հրատարակվում է ԳՈՐԻՍԻ «ՍՅՈՒՆԻՔ» ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՆԵՐԻ երաշխավորությամբ: Հավատարիմ իր քառորդդարյա ավանդույթներին, հանդեսը ներառում է Մարդու իրավունքների, իրավունքի, այդ թվում՝ ֆինանսական իրավունքի, քաղաքագիտության և հարակից ոլորտները:

ՄԱՆՈՒԿ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՁՑԱՆ

*Մանկավարժական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՌԴ Սոցիալական և մանկավարժական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս*

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ (ՄՏԱԳՈՐԾՈՒՆԵԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ) ԿԻՐԱՌՄԱՄԲ**

*(Կողմնորոշիչ զեկույց, արտասանվել է 2010թ. հունվարի 30-31-ին,
ՀՄԻԿ Կրթամշակութային կենտրոնում)*

Տարիներ առաջ ՀՄԻԿ-ում իսկապես բավականին համարձակ որոշում կայացվեց, երբ աշխարհագրական իմաստով Վանաձորը ձևակերպվեց որպես Մարդու իրավունքների կրթության ապագա տարածաշրջանային կենտրոն: Դա և պատվաբեր, և շատ համարձակ որոշում էր: Եվ ձեր գործունեությունը ունեցած իմ մասնակցությունը հնարավորություն է տալիս ասել, որ դա իրականանալի խնդիր է: Ես նույնիսկ համարում եմ, որ շատ բաներով այն արդեն իրականացել է: Այսինքն՝ ոչ միայն ցանկությունը, նպատակն է հայտարարվել, այլ նաև հիմքեր են ստեղծվել նման հավակնության համար:

Կրթության ոլորտի հիմնահարցերի տեսանկյունից համընդհանուր խնդիր է դրված. մենք ստեղծում ենք բոլորովին այլ տեսակի ու որակի կրթական համակարգ: Ես արդեն առիթ ունեցել եմ բարձրաձայն ասել և նաև գրել: Նոր համակարգը շատ նոր բաղադրիչներ ունի: Բաղադրիչներից մեկը կադրերի հետ աշխատանքի կազմակերպումն է և բովանդակության, և՛ ձևի իմաստով: Եվ այդ իմաստով ՀՄԻԿ-ը բավականին նվաճումներ և հավակնություններ ունի, որ ոչ միայն գաղափարներ է առաջադրում, այլև մշակում մոդելներ, իրականացնում և տարածում դրանք: Նախագծում ձևակերպված են երկու շատ հետաքրքիր նպատակներ.

1. Ուրվագծել Մարդու իրավունքների հայկական դպրոցի (ՄԻՀԴ) հեռապատկերը՝ ձևակերպելով նրա առաջիկա 5 տարիների գործունեության ուղղությունները:
2. Բարելավել համագործակցային ուսուցման արդյունավետությունը մտագործունեական խաղերի տեխնոլոգիայի ներդրմամբ:

Անցած տարիներին մենք արդեն ներդրել ենք համագործակցային ուսուցման մի քանի մեթոդիկաներ: Կառուցվել են դասապրոցեսի կազմակերպման մեթոդներ, տեխնոլոգիա: Բայց մտագործունեական խաղերի տեխնոլոգիան ներդնելու համար նախ պետք է նրա կրողը դառնալ, այսինքն՝ այստեղ խնդիր է առաջանում, թե ՄԻՀԴ թիմը, ձեր առաջնորդներն ինչքանով են տիրապետում այդ տեխնոլոգիային: Եվ այդ իմաստով ներկա հավաքն ավելի շատ պետք է նպատակաուղղված լինի այդ տեխնոլոգիայի յուրացմանը: Չնայած, յուրացումն ինքնին նպատակ չէ: Յուրացումը նրա համար է, որ այնուհետև այդ տեխնոլոգիաներն օգտագործվեն դասապրոցեսները կազմակերպելու՝ հատկապես Մարդու իրավունքների կրթության համար: Այս նպատակները, կարծում եմ, հասանելի են, բայց մեզնից պահանջվում է բավականին ծանր աշխատանք: Իմ փորձից ելնելով կարող եմ ասել, որ աշխատանք

ման ձևի վրա: Կձևավորենք մի քանի աշխատանքային խմբեր, որոնցից մեկն այս բոլոր հարցերը կքննարկի նպատակի և բովանդակության հարցադրումների տեսակետից:

Մնացած հարցերին չանդրադառնալը չի նշանակում, որ դրանք կարևոր չեն այդ խմբի համար, բայց խումբը կկենտրոնանա որոշակի, իրեն առաջադրված հարցերի վրա: Եվ դա կլինի մեր *առաջին խումբը*:

Երկրորդ խումբը կկենտրոնանա այն ասպեկտի, համապատասխան հարցերի վրա, որոնք կազմում են դպրոցի կազմակերպման ձևերի և կրթական պրոցեսների տեխնոլոգիաները, որը նույնպես չի նշանակում, թե երկրորդ խմբում ընդգրկված մասնակիցներին հետաքրքիր չեն նպատակն ու բովանդակությունը: Բայց նրանք, ինչպես և առաջին խմբի անդամները, հույս ունենալով, որ իրենց գործընկերները կաշխատեն, իրենք էլ իրենց թույլ կտան կենտրոնանալ միայն այս հարցերի վրա:

Երրորդ խումբը կկենտրոնանա միայն ՄԻՀԴ-ի գործունեության որակի և արդյունավետության հարցերի վրա. ինչպիսի՞ն է, ի՞նչ ձևով ենք դա արտահայտում, որտե՞ղ է դա բացահայտվում, ի՞նչ է դա նշանակում և մնացյալը, ինչ առնչվում է դրան:

Հիմա մենք կառանձնացնենք նաև *չորրորդ*՝ մի հատուկ խումբ, որը բոլոր խմբերի, մեր ընդհանուր աշխատանքների, գլխավոր մտքերի ժողովողը, շտեմարանը, մշակողը և ձևակերպողը կլինի: Ըստ էության, այս հատուկ խմբի նպատակն է ուրվագծել ՄԻՀԴ-ի հեռուստակերպը՝ ձևակերպելով առաջիկա հինգ տարիների գործունեության ուղղությունները, այս դպրոցի հետագա գործունեության ծրագիրն ու հայեցակարգը:

Ահա այսպիսի խմբերով կկատարվեն համապատասխան աշխատանքները,

այնուհետև մենք նորից կհավաքվենք այստեղ և միասին կքննարկենք բոլոր այս հարցերը և կանցնենք աշխատանքի հաջորդ փուլին:

Հարցեր և պատասխաններ.

Հարց. Աստղիկ Հովեյան. (Գավառի Մարդու իրավունքների գրադարանավար)

- Առաջին խմբում առանձնացրեցիք նպատակը և բովանդակությունը: Արդյո՞ք ռազմավարությունն այդ խմբի աշխատանքում պետք է ներկայացվի.

Պատասխան.

- Դե, ինքը՝ նպատակը, բավականին լայն հասկացություն է: Դուք կարող եք նպատակաուղղվել վաղվան, ընթացիկ տարվան, կարող եք նաև նպատակաուղղվել ընդհանրապես ՄԻՀԴ գործունեությանը: Նայած, թե ինչ նպատակներ կդնեք ձեր առաջ: Դրանով էլ կերևա՝ դրանք ռազմավարական նպատակներ են, թե՛ ոչ: Բայց հիշենք, որ ունենք չորրորդ խումբը, որը համապատասխան շտկումները կկատարի:

Հարց. Արայիկ Պապիկյան. (ՄԻՀԴ ուսուցանող)

- Չորրորդ խումբը մինչև առաջին երեք խմբերից նյութ ստանալը, ինքը կարո՞ղ է աշխատել:


Պատասխան.

-Այո, իհարկե: Որովհետև չորրորդ խումբը պասիվ խումբ չէ, որ սպասի թե ինչ առաջարկներ են ներկայացվում, հետո դրանցից ընտրություն կատարի: Դա մի կողմից՝ հավաքող, ժողովող, մյուս կողմից՝ պատվիրող, մեկ այլ՝ երրորդ կողմից էլ ստեղծագործ խումբ է: Այսինքն, մի կողմից պետք է ուսումնասիրի, թե ինչ գաղափարներ, ինչ տեսակետներ, ինչ արդյունքներ կան և դրանք մշակի, իսկ մյուս կողմից, որպես պատվիրող խումբ, այն պետք է ասի, թե տվյալ հայեցակարգը վերամշակելու և առաջիկա հինգ տարվա գործունեության ուղղությունները որոշելու համար ինչ հարցեր կան համա-

պատասխանաբար առաջին, երկրորդ, երրորդ խմբերի տիրույթներում, որոնց տվյալ խումբը համապատասխան ուշադրության է արժանացրել: Եվ երրորդը՝ ինքը ստեղծագործ խումբ լինելով, գաղափարներ կարող է հղանալ և դրանք դնել քննարկման: Հետևաբար, չորրորդ՝ հատուկ խումբը պետք է աշխատի և՛ ինքնուրույն, և՛ մյուս խմբերի հետ:

Հիմա ես կներկայացնեմ ձեզ մի սխեմա, որն ինչ-որ իմաստով առանցքային է հիմնական աշխատանքի համար: Նախորդ նկարում արդեն զօծել եմ աշխատանքի սխեման գործընթացի, կառուցվածքի իմաստով:

Երկրորդ օրվա աշխատանքը, որպես համակարգ, որպես հոսքագիծ, որը հումքը ստանում և արտադրանք է տալիս, կարելի է ասել՝ տեխնոլոգիական մասն է: Իսկ այս նկարը՝ մտածողության պատկերն է: Այսինքն, թե մենք ինչ հարցերի վրա պետք է աշխատենք, ինչ հարցեր պետք է բարձրացնենք, ինչ հարցեր պետք է պարզաբանենք և, այդ իմաստով, ինչ սխեմայով պետք է մտածենք բոլորս միասին:



Նկար 2. Նախագծման սխեմա

Սա հայտնի նախագծման սխեման է: Դիցուք մենք ունենք մի կառույց, որը ՄԻՀԴ-ն է: Մի համակարգ, որն ունի նախապատմություն, այսինքն՝ նա

արդեն ծավալել է համապատասխան գործունեություն և հիմա գտնվում է իր գործունեության ամբողջ պատմության վերանայման և հետագա անելիքների ռազմավարական պլանավորման շրջանում: Այսինքն, մեր առջև դրված խնդիրն է՝ **առաջիկա հինգ տարիների գործունեության հիմնական ուղղությունների ճշգրտումը**: Այլ կերպ ասած՝ սա ՄԻՀԴ-ի ներկան է և մենք ուզում ենք կերտել նրա ապագան: Ապագան նախ կառուցենք որպես նախագիծ, հետո իրագործենք: Մխեման ապագան կապում է անցյալի հետ՝ առանձնացնելով հետևյալ բաղադրիչները:

Առաջին. ներկա գործունեության նվաճումների առումով պետք է առանձնացնել այն ամենը, ինչը մենք համարում ենք նվաճում, ինչը ցանկանում ենք չկորցնել, պահպանել և զարգացնել: Դա կարող է վերաբերվել նպատակներին, բովանդակությանը, աշխատանքի կազմակերպմանը, նյութատեխնիկական բազային: Ամեն ինչին կարող է վերաբերվել: Այդ պահելը բավականին բարդ հարցադրում է: Դա ինքնին չի պահպանվում: Եթե դուք մի բան ունեք,

լինի դա շենք, լինի մասնագիտություն, լինի ինչ-որ մի նվաճում, լինի գիրք և այլն, ինչ ուզում է լինի, եթե դուք ինչ-որ բան ձեռք եք բերել, և ուզում եք պահպանել այն, ապա դուք պետք է անպայման հատուկ ջանքեր գործադրեք, որոնց իմաստն ու նշանակությունն այդ նվաճումի պահպանումն է: Այսինքն՝ եթե դուք նպատակաուղղված գործողություններ չկատարեք, ինքնին այն չի պահպանվի, և դուք կկորցնեք տարիների ձեռքբերումը:

Երկրորդ. Առանձնացնել այն, ինչ առկա է ներկա իրավիճակում, բայց կատարելագործման անհրաժեշտությո-

յուն կա: Ենթադրենք, թե պատրաստել ենք որոշակի քանակով որակյալ մանկավարժներ մարդու իրավունքների գծով, բայց նրանք դեռ կատարելագործվելու կարիք ունեն: Կամ այն, որ սկզբից ասացի. ՄԻՀԴ-ում մի քանի մեթոդիկաներ ենք սովորեցրել ուսուցչին, բայց պետք է հիմա մտազործունեական խաղերի տեխնոլոգիա կիրառել դասապրոցեսի որակը բարձրացնելու համար: Դա կարող է վերաբերվել ՄԻՀԴ բուն դասընթացների կատարելագործմանը:

Երրորդ. Պետք է սեփական գործունեության մեջ կարողանալ առանձնացնել, մեղմ ասած, իր նշանակությունը կորցրած գործողությունը: Այն բացասականը, ինչ չէիք ցանկանա պահպանել ձեր գործունեության մեջ, պետք է անպայման աշխատել դուրս մղել: Եվ պետք է նախագծել գործընթացները, որոնք կարողանում են այս բացասականը ոչնչացնել: Դա շատ դժվար խնդիր է, որովհետև այն միայն կազմակերպական ոլորտում չէ, որ վերցնես ու ասես. «Մրանից հետո այս բանը չենք անի»: Ենթադրենք, մի մարդ ՄԻՀԴ-ում ինչ-որ վատ բան յուրացրեց: Հիմա ի՞նչ անենք, որ մարդն իր յուրացրածն արդեն մոռանա: Այսինքն՝ այս լավն ու վատը այդպես հակադիր բնույթի են: Դրականը, երբ թողնում ես, ինքնըստինքյան, կամաց-կամաց կորցնում է իր արժեքը, սպառվում, վերանում է: Իսկ բացասականը, երբ թողնում ես, ինքնըստինքյան ավելի զարգանում, ավելի ուժեղանում է: Հետևաբար, պետք է նախագծել գործընթացներ, որոնք կօգնեն ազատվել վատից:

Իհարկե, ապագայի նախագծման կարևոր սկզբունքներից մեկն այն է, որ ապագան մենք նախագծում, կառուցում ենք, ոչ թե այն հաշվով, որ ներկան բարելավենք, այլ մենք միշտ կերտում, կառուցում ենք հենց ապագան: Այսինքն, կան խնդիրներ, որոնք մենք

դնում ենք մեր առջև և ուզում ենք լուծել դրանք: Եվ այդ իմաստով ապագայում միշտ կա մի բաղադրիչ, որն ամբողջությամբ նոր է, ներկայումս չկա, չի նախատեսվել, բայց հիմա՝ նախատեսվում է ապագայում և պետք է դա անպայման հայտնվի: Սա արդեն վերջին, հատուկ գործընթացն է, որին պետք է նպատակաուղղել ծրագիրը, որպեսզի դա հայտնվի: Ընդհանուր առմամբ, հիմնական սխեման է՝ ՄԻՀԴ ներկան և ապագան:

**ՆՊԱՏԱԿ
ԵՎ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ**

Սա շատ լուրջ հարց է: Նպատակը առաջադրվում է, և նպատակից կախված՝ կառուցվում է բովանդակությունը: Բայց այդ կապն այնքան էլ ակնհայտ չէ: Այսինքն, ուսուցիչը եկավ, մենք նրան ուսուցանեցինք: Ինչպիսի՞ ուսուցիչ պատրաստեցինք. ուսուցիչ, որ ինքը մարդու իրավունքներ ուսուցանի, պատրաստեցինք ուսուցիչ, որը մարդու իրավունքների վերաբերյալ ունի որոշակի տեղեկություններ, թե՞ մարդու իրավունքների վերաբերյալ ունի ամբողջական պատկերացում և ըմբռնում: Դրանք տարբեր բաներ են: Օրինակ՝ գիտենք Մարդու իրավունքների գլխավոր անհեթեթությունը (պարադոքսը), որ «*իմ իրավունքները վերջանում են այնտեղ, որտեղ սկսվում են մյուսի իրավունքները*»: Լեզվի տեսակետից հայերեն, գեղեցիկ նախադասություն է: Բայց հայերենով այս նախադասությունը խոր բովանդակություն ունի: Այն ոչ թե բառերի կույտ է, այլ մի ամբողջ փիլիսոփայական միտք արտահայտող նախադասություն: Ամբողջ աշխարհում ընդունված է այս նախադասությունը, բայց այն հակասության մեջ է այն իրողության հետ, որ հասարակական կյանքը համակեցություն է: Կյանքը

միշտ կա մեկի համար, միշտ կա մյուսի առկայության համար: Այսինքն, ստացվում է՝ մարդը իրավունք չունի, որովհետև իր կողքին կա մեկ ուրիշը: Դա շատ ծանր գին ունեցող գեղեցիկ արտահայտություն է, որովհետև մարդը գոյություն ունի միշտ ուրիշի հետ և այդ ուրիշն էլ միշտ սահմանափակում է իր իրավունքը: Եվ, եթե դասի ընթացքում հանկարծ դա շեշտադրվի, ուշ թե շուտ աշակերտներից մի խելոքը կգտնվի, որ այդ բանը կասի: Ուսուցիչը բավականին խորը պետք է իմանա այդ հարցերը, որպեսզի կարողանա բացատրել: Բավարար չի լինի, որ ասես՝ այս կամ այն հռչակագրում գրված է: Ինքը տեղեկացված է, բայց չունի պատկերացումներ և ըմբռնումներ, համապատասխան ընկալում: Կամ՝ հակառակը, մենք նպատակ ենք դնում պատրաստել ուսուցիչներ, որոնք ունեն այդպիսի պատկերացումներ, ընկալումներ, ըմբռնումներ, որոնց մեջ որոշակի տեղեկացվածություն կա և դա համարվում է մեր նպատակը: Նպատակ կարող ենք դնել՝ ունենալ այնպիսի ուսուցիչ, որը նույնը ապահովի նաև աշակերտների համար: Մի խոսքով, նպատակ կարող ենք դնել, որ այնպես անի, որ աշակերտների մի մասը գոնե այդ ամենը յուրացնի:

Նպատակի, բովանդակության մեջ հանկարծ առաջ են գալիս պրոցեսի, մեթոդիկայի, տեխնոլոգիայի հարցեր: Տեխնոլոգիայի հարցը մեկ առաջ է գալիս որպես նպատակ և բովանդակություն, մեկ՝ որպես դպրոցի կազմակերպման ձևերի և կրթական գործընթացների առումով: Նույն համապատասխան ընդհանուր մասերը ծագում են որակի և արդյունավետության հարցերը քննարկելիս: Նայած, թե ինչ նպատակ էս դրել, ըստ դրա կարելի է որոշել արդյունավետությունը: Մեկ այլ նպատակի դեպքում նույն մոտեցումը կարող է արդյունավետ լինել, այսինքն՝ արդյունավետությունը և որակը չափելու

համար պետք է հասկանալ, թե ինչ նպատակ, ինչ բովանդակության արդյունավետություն է ակնկալվում: Թե այստեղից ինչպիսի մարդ է դուրս եկել: Թե այդ մարդը կրթական համակարգում ինչ դեր ու նշանակություն է ունենում: Մենք կարող ենք նպատակ դնել, որպեսզի պատրաստենք այնպիսի ուսուցիչներ, որոնք, ճիշտ է, մարդու իրավունքների մասնագետ են, բայց իրականում դպրոց են գալիս և ընդհանրապես դպրոցի կատարելագործման, որակի բարձրացման հարցեր են լուծում, առավել ևս՝ նոր համակարգի ստեղծման հարցեր: Կարող ենք այսպիսի նպատակ դնել: Կարող ենք նաև՝ շատ նեղ նպատակ դնել:

Տեսն ք, հետաքրքիր մի հարց. ինչո՞վ է մեր այս միջոցառումը, որն անվանում ենք մտագործունեական խաղ, տարբերվում խորհրդակցությունից: Խորհրդակցությանը մասնակցում են մարդիկ, որոշակի անձինք, պաշտոնյաներ, մասնագետներ: Ենթադրենք՝ խորհրդակցությանը մասնակցում է որոշակի դպրոցի տնօրենը, որոշակի առարկայի ուսուցիչը, որոշակի համայնքի ղեկավարը և որում մարդիկ խոսում, կարծիքներ են հայտնում: Խորհրդակցում են՝ ինչ անել, ինչ չանել. օրինակ՝ լսեն ուսուցիչների կարծիքը: Ուսուցիչները բողոքում են ինչ-որ բանից: Այդ իմաստով մտածողության մեջ մարդիկ չեն հանդես գալիս, այլ դիրքորոշումները: Եթե ես Արմինեի հետ եմ խոսում, որոշակի իմաստով դա Արմինեի հետ չեմ խոսում, ոչ էլ խոսում եմ Կրթության ազգային ինստիտուտի ներկայացուցիչի հետ, չնայած կարող է խոսակցության մեջ այդ հանգամանքը նշեմ, ասեմ, օրինակ՝ <Արմինե, դուք այնտեղ՝ ազգային ինստիտուտում ինչ եք անում>: Դա նշանակում է, որ ես Արմինեին դիմեցի որպես ազգային ինստիտուտի աշխատողի: Ասենք, երբեմն դա անհրաժեշտ է լինում, բայց իրականում

Արմինեն այստեղ երրորդ խմբի ներկայացուցիչ է: Այսինքն, ես Արմինեին դիմում եմ որպես արդյունավետության և որակի գնահատման խնդիրների տեսակետից, մարդու իրավունքների այս հարցը քննարկողի, ուրիշ բան ինձ համար Արմինեն չի նշանակում և այդ իմաստով Արմինեն չկա, այլ այդ առումով՝ կա խումբ: Դա շատ կարևոր առանձնահատկություն է, որով մեր մտագործունեական խաղը տարբերվում է աշխատանքային խորհրդակցությունից: Երկրորդ առանձնահատկությունը, որն արդեն ակնարկեցի խորհրդակցության ժամանակ, ամեն մարդ իր կարծիքն արտահայտում է, որպեսզի ծանոթանանք միմյանց կարծիքներին և տեսնենք, թե այդ իրավիճակում ինչ առաջարկ կատարենք, ինչ որոշում ընդունենք: Չի կարելի ասել, թե դա ընդհանրապես մտածողությունն չէ, բայց դա մտածողության շատ ցածր աստիճան է: Մտածողությունը միշտ պետք է արդյունք, միտք տա: Միտքը պետք է լինի նշանակալից, արժեքավոր: **Հետևաբար, բոլոր իրավիճակները, բոլոր գործընթացները նպատակաուղղված են միտք ստանալու, ոչ թե խորհուրդ հարցնելու, ոչ թե որոշում կայացնելու, այլ պատկերացումներ ունենալու, փոխելու, ստեղծելու, ձևավորելու:** Դա է մտագործունեական խաղի ցանկացած իրավիճակի, ցանկացած գործընթացի հիմնական իմաստը: Եվ այդ պատճառով, այն տեխնոլոգիապես շատ տարբեր ձևով է կազմակերպված: Հիմա, եթե դուք ուզում եք այդ տեխնոլոգիան ներառել ձեր դպրոցի գործընթացները կազմակերպելու համար, ապա դուք պետք է բավականին լրջորեն ուսումնասիրեք այդ մեքենան, այսինքն՝ մենք արդեն մի կտոր ունենք, որը կարևոր է ձեր վերլուծության համար, որ թույլ կտա հասկանալ, թե դա ինչ բան է:

ՕՐ 2-ՐԴ

Մենք խնդիր ունենք, ինչ-որ իմաստով, փոխել մեր հասարակության որակը: Բհարկե, դա մեկ մարդու գործ չէ, մեկ ինստիտուտի գործ չէ, դա մեկ ոլորտի գործ չէ: Ամբողջ հասարակությունն ինքն է կառուցում իր ապագան և, այդ շինարարությունն ինչ-որ տեղ ընթանում է ինքնըստինքյան, հընթացս, մինչ մարդիկ որոշակիորեն նպատակաուղղված իրենց տեղային ժամանակավոր խնդիրներն են լուծում: Ընդ որում, յուրաքանչյուր ոլորտ իր չափով մասնակցություն է ունենում այդ շինարարությանը:

Եթե մենք վերցնենք կրթության ոլորտը, ապա վերջին հաշվով մեր մասնակցության նպատակը նոր սերնդի ձևավորումն է համապատասխան արժեքային համակարգով, գաղափարախոսությամբ, նիստ ու կացի նորմերով: Սա առաջին հայացքից կարող է հնչել որպես շատ դաժան թեզիս: Բայց հատկապես այն տիրույթներում, այն ոլորտներում և այն մարդկանց համար, ովքեր ընդհանրապես զբաղվում են իրավունքի հարցերով, նրանց համար դա կարող է ավելի դաժան հնչել:

Կրթության ոլորտն ընդհանրապես ոչ մի առնչություն չունի երեխայի, անհատի հետ: Երբ մենք քննարկում ենք կրթության ոլորտի խնդիրները, երբեք երեխայի վերաբերյալ հարց չի առաջանում. խոսքը երեխայի մասին չէ՝:

Ես կարող եմ այսպիսի պարզ օրինակ բերել: Վերջին հաշվով, գոյություն ունի մարդկային հասարակություն և այդ հասարակությունն ապահովում է իր հարատևումը, և հարատևման կարևորագույն պահերից մեկը մշակութային ժառանգության փոխանցման խնդրի լուծումն է: Այն ամենն, ինչ մարդկությանն է տրված, ներկա սերունդն իր ամբողջ պատմական ընթացքում իրականացնում է որպես պահ հարատևման: Այդ ամ-

բողջը պետք է հնարավոր լինի փոխանցել հաջորդ սերունդներին:

Կրթությունն ապահովում է ընդհանրապես հասարակական, սոցիալական իրողության գոյը, որ նա հարատևելի լինի: Եթե կրթություն չլինի, ապա պատմություն չի լինի: Պատմությունը պատմություն է դառնում միայն այն պատճառով, որ մենք կարողանում ենք նոր կրողներ ձևավորել, որոնք հինը կրում են իրենց մեջ և դրանով ստեղծում պատմական իրողություն: Այսինքն, պատմական իրողության հիմնական մեխանիզմը կրթությունն է, կրթության ոլորտը: Հետևաբար, կրթության ոլորտը երեխաների հետ կապ չունի. կրթության ոլորտը այլ ոլորտների է առնչվում: Ամբողջ մտագործունեական ոլորտը, ընդհանրապես համամարդկային այդ իրողությունն իր մտագործունեական դաշտում, կարող ենք ասել, որ ոլորտային կառուցվածք ունի, և այդ իմաստով ամեն ոլորտ, այդ թվում կրթության ոլորտն ունի իր իմաստն ու նշանակությունը: Կրթության ոլորտի իմաստն ու նշանակությունը պետք է փորձել փնտրել, կամ որսալ, կամ իմաստավորել մյուս ոլորտների ամբողջության համատեքստում: Մա բավականին բարդ իրավիճակ է:

Հաջորդ քայլն այն է, թե ի՞նչ բան է մարդը: Ինքը՝ մարդը, բավականին առեղծվածային էություն է, և միակը, որ եզակի էություն է ամբողջ արարչագործության մեջ, որը հանդիսանում է երեք իրողությունների կրող: Այդ երեք իրողությունները մարդու մեջ բավականին խորհրդավոր ու առեղծվածային կերպով միասնական են, և շատ ծանր է հասկանալ այդ միասնության մեխանիզմը: Մարդը կենսաբանական էակ է, ինչպես և կենդանիները, զուտ նյութական իմաստով միս ու արյուն, մարմին ունի և շնչավոր է: Այսինքն, մարդը նյութական, կենսաբանական աշխարհի կրող է: Միաժամանակ, մարդն օժտված

է բավականին տարօրինակ հատկությամբ, որն ըստ էության ոչ թե հատկություն է, այլ մեկ այլ էություն է, մեկ այլ բնույթ է: Այսինքն, մարդը մտագործունեական իրողության կրող, մտագործունեական աշխարհի սուբյեկտ, մտածող և գործող էակ է: Միաժամանակ, մարդն ինքը՝ հոգեղեն իրողության կրող է, և այդ մասով նա հոգեղեն աշխարհից է: Այս երեքը միասին կազմում են մարդու էությունը:

Եթե նայենք առանձին-առանձին, օրինակ՝ կենսաբանական կողմը, այսինքն՝ որպես մարմին, այստեղ շատ հաճախ ավելի ընդգծելու, շեշտադրելու համար կիրառում ենք *անհատ* հասկացությունը: Երբ մարդուն դիտարկում ենք որպես ինչ-որ մի բան անող, մտածող կամ գործող, ավելի շատ կիրառվում, շեշտադրվում է սուբյեկտ հասկացությունը: Մարդու հոգևոր բնույթը նկատի ունենալով՝ նրան ընկալում ենք որպես անձ և կիրառում անձ բառը: Մարդը չի կարող ուղղակի պայմանավորվածությամբ իր ամբողջ անհատականությունն ու սուբյեկտիվությունը թողնել, մի քանի ժամով հեռանալ ու հոգեղեն բնույթով հանդես գալ, կամ հակառակը՝ հոգեղեն բնույթն ամբողջությամբ թողնել, վերարկու հանելու նման օտարվել դրանից՝ ու հանդես գալ որպես մտագործունեության սուբյեկտ:

Մարդը բնույթով ազատ է, այսինքն նրա ներքին էությունը ազատության ձգտումն է: Մարդն իր համար իրեն իմաստավորում է ազատ միջավայրերում: Նա պետք է ազատ լինի նաև մտածողության դաշտում, և դա որպես փաստ, երևույթ նկատելի է մարդկանց մեջ: Յուրաքանչյուր մարդ ուզում է մտածողության մեջ ազատ լինել, գործողությունների սահմանափակում չունենալ: Որպես անհատ՝ նա միշտ իր էությամբ ազատության է ձգտում. նրա կոմֆորտն (հարմարավետությունը) ազատությունն է: Երբ ասում ենք

մարդն իրեն կոմֆորտ (հարմարավետ) է զգում, դա նշանակում է, որ նա իրեն ազատ է զգում: Մարդն ուզում է տարածության մեջ քայլել ու տեղաշարժվելու սահմանափակում չունենալ: Նյութական աշխարհում աննշան սահմանափակումն արդեն համապատասխան դիսկոմֆորտ (անհարմարավետություն) է ստեղծում: Կարևոր չէ, ինքն այդ ազատությունից կօգտվի, թե չէ, նա պետք է ունենա այդ ազատությունը:

Այդպես է նաև հոգևոր աշխարհում. մարդը միշտ ձգտում է ազատության, ուզում է ազատ լինել, դրա համար էլ ուրախանում է, երբ ասում են. «Աստված քեզ ազատ կամքով է ստեղծել, ինչ ուզում ես արա, ի՛նքդ ընտրիր, ուզում ես չարն ընտրիր, ուզում ես բարին ընտրիր, ուզում ես սա ընտրի, ուզում ես նա ընտրի»:

Շատ հետաքրքիր է սրանց փոխապամանավորվածությունը: Ենթադրենք՝ մարդու ատամը ցավում է, մտածողությունը սկսում է մթազնել, տուժել կամ հակառակը՝ համապատասխան մտածողության հաշվին իր կենսաբանական խնդիրներին լուծում է տալիս և ստեղծում կոմֆորտ (հարմարավետություն): Նա մտածում է իր մարմնական պահանջների շուրջ, կամ հակառակը՝ մարմնական պահանջներն ենթարկեցնում է մտածողության արդյունքներին: Հետաքրքիր է, որ առանձին-առանձին մարդը չի կարողանում առանձնանալ ու ապրել այս աշխարհում, հետո գնալ մտնել այն մյուս աշխարհը: Եվ այդ միասնությունն ինչ-որ մի խորհրդավորություն է, և այդ իմաստով ազատության ձգտումը փոխկապակցված, փոխապայմանավորված, փոխապահովող ձգտում է:

Հիմա անցնենք հասարակությանը: Ի՞նչ ենք հասկանում հասարակական կյանք, հասարակություն, սոցիալական իրողություն ասելով: Հասարակական իրողության բնույթը, ինչ-որ իմաստով՝

էությունը, համակեցությանին իրողություն է, համակեցությանին հանգամանք: Այսինքն, երբ ասում ենք հասարակություն, այն կա հենց միայն այն պատճառով, որ կան երկու կողք-կողքի գտնվողներ: Հասարակական իրողությունը համակեցությանին բնույթ ունի, միաժամանակ և միատեղ կան մի քանիսը:

Հիմա բերեմ մի քանի օրինակ: Հենց հիմա մենք նստած ենք, չէ: Ես խոսում եմ: Ես իմ ինքնագիտակցությամբ և ինքնագզացողությամբ գիտակցում եմ, որ ձեզ հետ միասին եմ: Անկախ նրանից՝ ես ինչ կխոսեմ, ինչ կանեմ, ես ինձ պահում, գիտակցում, իմաստավորում, ընկալում եմ, որ ինձ հետ էլի մարդիկ կան, և համապատասխան վարվելակերպ եմ դրսևորում: Իսկ հիմա՝ այսպես, որ գնում-գալիս եմ, ամեն անգամ, ես գիտակցաբար, ինքս ինձ չեմ ասում. «Նայի՛ր հա կողքիդ մարդ կա»: Ուղղակի, արդեն իմ ամբողջ վարքը, պահվածքը, իմ աշխարհընկալումն ինքնըստինքյան ենթարկված է այդ ընկալմանը, որ ինձ հետ միասին մարդ կա: Մարդը միշտ հենց այդպիսին է: Անկախ նրանից, ամեն անգամ ինքն իրեն հարց է տալիս, թե ոչ, մարդը, երբ իր մասին խոսում է, իր պատկերացումները միշտ կան նախապես արդեն ընդունված մարդու կողմից, որ կան ուրիշները, և այդպես ապրում է, դա է մարդու ապրելաձևը: Երբեք, ոչ մի պահի մարդը չի գիտակցում, որ մարդ չկա, ոչ թե մարդ չկա, այլ ընդհանրապես մարդ կողքիս չկա. ես եմ:

Այսպիսով, մենք կողք-կողքի դրեցինք երկու հակադիր օրինակներ՝ մարդն իր ազատ էությանը, ազատության ձգտումով, բայց միաժամանակ մարդը միշտ կա համակեցությանին հանգամանքով: Այսինքն, մենք ունենք բավականին լուրջ հակադրությունների միասնություն՝ որ անհամատեղելիությունն է: Մարդու ազատ էությունը միշտ սահմա-

նափակվում է համակեցության հանգամանքով, սա մարդկության հիմնական խնդիրն է:

Մարդը, լինելով ազատ, կարող է գտնվել այնտեղ, որտեղ ուրիշ մարդիկ էլ կան, որոնք նույնպես ազատ են, և այդ համակեցության հանգամանքը սահմանափակող մարդու համար հիմնական խնդիրը ստեղծում է մյուս մարդը: Երբ անհատ մարդը խնդիր ունի, ու երբ մենք խորությամբ քննարկելով հասնում ենք մինչև այդ խնդրի ակունքը, ապա տեսնում ենք, որ պատճառը միայն այն է, որ կա նաև մեկ այլ մարդ: Այսինքն, մարդու ցանկացած խնդրի սկզբնապատճառը մյուս մարդու գոյությունն է:

Եվ այսպես, մարդկությունը կա և չվերանալու համար ստիպված է լինում ժամանակ առ ժամանակ վերադառնալ և այս անհամատեղելիությունը ինչ-որ իմաստով համատեղել: Դրա համար առաջ են գալիս համապատասխան հասկացություններ, նորմեր, որոնք բնորոշ են միայն տվյալ ժամանակահատվածին. արժանապատվություն, իրավունք, պարտավորվածություն, օրենք, նորմեր և այլն: Այդ բոլորը անհրաժեշտաբար իմաստավորվում և վերաիմաստավորվում են, որպեսզի հնարավոր լինի այս իրողությունը: Անհնար է հասկանալ, թե ինչ բան է *մարդու իրավունքը* կամ պարտականությունը, եթե դու դրանք չես դիտում որպես այսօրվա վիճակում այս հակասության լուծում:

Հավատացյալ աշխարհում այսպիսի բան է ընդունված, որին հավատում ենք, որ Աստված ստեղծեց մարդուն համապատասխան որակներով՝ հավերժ իր հետ լինելու համար: Մարդն իրեն լավ չպահեց, կործանվեց, վայր ընկավ, և քանի որ Աստծո ամենասիրելի արարածն իր ստեղծագործություններում մարդն է, նա մտածեց մարդու փրկության ծրագիր: Այսինքն, մարդը ինչ-որ

իմաստով ի սկզբանե փրկված է, որովհետև ծրագիրը կա, ճանապարհը կա: Պատկերացրե՛ք այսպիսի մի բան, որ մարդկանց մեջ էլ է պատահում: Ասենք, գալիս ես, տեսնում մի գազան, գազանը սոված է ու հաց է ուզում, իր հաց ուզելն էլ շատ ահավոր է, երախը բացում ու ինչ-որ ձայն է հանում և դու չգիտես՝ ինչ է ուզում, քանի որ այդ լեզուն չես հասկանում: Իսկ քանի որ չես հասկանում, կարծում ես, թե քեզ վրա է հարձակվում: Պաշտպանվելու համար դու ես նրա վրա հարձակվում, ինքն էլ ստիպված պաշպանվելու համար քեզ վրա է հարձակվում: Իրականում, լեզուն չհասկացար, կարծեցիր, որ ինքը եկավ քեզ ուտելու: Բայց երբ շատ ես շփվում, կամաց-կամաց զգում ես, որ նա չի գալիս քեզ ուտելու: Օրինակ՝ շներին, կատուներին մենք մի քիչ ճանաչում ենք, չէ՞, իրենց մոտեցումից ու հաչոցից զգում ենք՝ նա գալիս է կծելու, թե ինչ-որ մի բան խնդրելու: Նրանք էլ մեզ են զգում, ինչ-որ բան ընկալում: Օրինակ՝ եթե նա գալիս է դեպի մեզ, ու մենք կանգնում ենք, ինքը հասկանում է, որ մենք չենք ուզում իրեն խփել: Դրա համար շան հետ հաղորդակցվելու ինչ-որ բաներ կան մշակված:

Հաղորդակցվելու, միմյանց ըմբռնելու հարցը շատ ծանր է ու հաճախ աղավաղվում է: Մարդը, որ Աստծո հետ հաղորդակցվում է, նա իր ընկալածը միշտ աղավաղում է, և նա շատ դեպքերում չգիտի դա Աստծուց է գալիս, թե որտեղից: Գաղափարներ կան, որոնց մարդը գերի է դառնում, բայց ըստ էության, դրանք Աստծո տված նշաններն են, որոնք ինքը աղավաղված է ընկալել: Ամբողջ մարդկության պատմությունը ընթանում է հետևյալ ձևով. մարդը ինչ-որ գործողություններ է կատարում բավականին լավ, մտածված, բայց հետո պարզվում է, որ ինքը աղավաղված է ընկալել արդարությունը, ճշմարտությունը, փրկության ճանապարհը, վա-

տությունը, իմաստը, թե այս ուր է տանում, դեպի լավն է տանում, թե դեպի վատը: Հենց այդ ժամանակ էլ տեղի են ունենում կատաստրոֆաներ: Այդ կատաստրոֆաները կարող են մի քանի անգամ լինել, մինչև որ մարդը դրա վրա ուշադրություն կդարձնի: Հենց որ մարդն ուշադրություն է դարձնում, այստեղ մարդկությունը անցնում է ռեֆլեքսիայի դիրքի, սկսում է վերլուծել, փորձում հասկանալ, թե ինչու այսպես եղավ: Օրինակ, եթե մեկ մարդու մի բան է պատահում, մտածում է՝ ուրեմն դիմացինը հիմար էր կամ չար էր կամ իրեն չէր հասկանում: Բայց երբ դա հաճախակի կրկնվում է, երկար մտածում, երկար քննարկում է ու վերջում պարզվում է, որ պատճառն իր մեջ է:

Մարդը երբեք հենց սկզբից մեղքը չի ընդունում: Մակայն ժամանակ, իրադրություններ են պետք, որպեսզի մարդը վաղ թե ուշ հասկանա, որ ինքը պետք է իր տեսակետն, իր մտտեցումն, իր արժեքային համակարգը փոխի: Երբ փոխվում է այս բոլորը, մարդկությունը սկսում է այլ ձևով ապրել և այլ ճանապարհով գնալ:

Այստեղ էլ շատ հետաքրքիր խաղեր կան: Որոշ ժամանակ մարդու հիշողության մեջ թարմ է այն, որ մարդը մահացել է, երեխային է պատմել այդ մասին, ինչ-որ գիրք է գրվել, ինչ-որ նշան է դրվել, ինչ-որ ձևերով հիշողության մեջ դեռ թարմ է, և քանի դեռ թարմ է հիշողության մեջ, ապա հին սխալը չի կրկնի: Մակայն այս ընթացքում պատահում է այնպես, որ մարդկությունը մոռանալով այդ ամբողջ պատմությունը, նորից է կրկնում նույն սխալը: Այդ փուլն (ցիկլն) է այստեղ, այսինքն՝ պատմական հիշողությունը: Այդ փուլերը (ցիկլերը) կարող են շատ երկար տևել, բայց վերջի վերջո մարդկությունը հասկանում է, որ դրանք վերջացան: Մարդկությունը արդեն դա չի կրկնի: Դա ձևակերպվում է արժեքային համա-

կարգով, նոր աշխարհընկալմամբ, նոր մակարդակներ ձեռք բերելով, բայց շարունակվում է մի նոր հերթական աղավաղում: Եվ այս ճանապարհով, մեկ անգամ եզրակացություն անելով՝ մարդկությունը չի կարողանում առաջ շարժվել: Նա մի մասով անում է, որ մյուս մասով՝ մնում աղավաղված: Ամբողջ պատմության մի մասն այն է, մարդկությունն անցնի, բոլոր հնարավոր կատաստրոֆաներով (աղետներով). ուրիշ ճանապարհ չկա: Եվ դրանից հետո նոր վերադառնում է Աստծուն: Աստվածաշնչում նույն այդ բանը գրված է, թե երբ է լինելու. երկրորդ գալստյանը, երբ որ լրանա պղծությունը: Այն ամենը, ինչ մարդկությունից կարելի է սպասել, դա պետք է լինի, որպեսզի մարդը դրանից հրաժարվի: Ուրիշ ձև չկա, ինչքան էլ ասես՝ չի հրաժարվի: Երեխային, երբ ասում են չի կարելի, մեկ է նա չի լսում: Մարդկությունը միշտ Աստծո առջև համապատասխան մակարդակում է:

Բայց մեզ համար ծանրը հիմա սա չէ, ծանրը ուրիշ բան է: Համապատասխան պղծությունը գործելու համար մարդը պետք է դա ձևակերպի, որպես լավ (բարի) բան, հակառակ դեպքում՝ նա այդ չի անի: Եվ երբ նա սկսի դա անել, ժամանակ է պետք, որպեսզի հասկանա, որ դա վատ բան է: Իսկ լավ բանը (բարին) ձևակերպվում է փոքր դոզայով (չափաբաժնով): Ամբողջ մարդու իրավունքների գաղափարախոսությունը գերագույն պղծությունն է, որովհետև գտնվել է մի քաղցր, բաղձալի բան. մարդը պետք է ազատ լինի, և մարդը ամենաբարձր արժեքն է: Դրա համար մարդու ազատությունը չպետք է սահմանափակել, եթե ինքը թեզ վնաս չի տալիս:

Բայց ի՞նչ է նշանակում՝ թե մարդը գերագույն արժեքն է: Դա նշանակում է Աստծուն հանել, տեղը դնել մարդուն: Օրինակ՝ հիմա, երբ մենք ասում ենք՝

կռապաշտությունը վատ բան է, բոլորս ընդունում ենք: Այսինքն, արդեն անցել ենք այդ մի խեղաթյուրումից: Մարդկությունը մի քանի կատաստրոֆաներ (աղետներ) ստանալուց հետո ինքնանորոգարձ վերլուծությամբ հասկացել է, որ կռապաշտությունը ընկալվում է, որպես արձան, միստիկական ինչ-որ մի բան. ինչ-որ հզորություն է վերագրում դրան և պաշտում: Հիմա կռապաշտության մի քաղցր ձև են գտել. եկեք մարդուն դարձնենք պաշտամունքի առարկա: Կռապաշտությունը եկել է ամենաբաղցր ձևով՝ ոչ թե արձանը պաշտենք, այլ մարդու ն: Այս է, եկեք պաշտենք: Ամենամեծ արժեքը մարդն է, ամենաբարի մարդասիրական բանը մարդու ազատությունը չսահմանափակելն է, և ամենաճիշտ մոտեցումը հետևյալն է. «Արի՛ պայմանավորվենք՝ ես քեզ ոչ մի բանով չեմ սահմանափակում, դա քո գործն է, գնա քեզ վնասի»:

Կա անհրաժեշտություն հանրակրթական դպրոցով նպաստելու հասարակության փոփոխմանը ընդհանրապես, և այդ իմաստով խնդիր է դրված՝ դպրոցական կյանքը ամբողջովին փոփոխելու, դպրոցը արմատապես փոխելու, նոր կրթական համակարգ ստեղծելու, որը բավականին բարդ խնդիր է:

Եվ այստեղ բավականին շատ դիրքեր կան, շարժումներ կան, տարբեր ուղղություններ կան, որոնց գործունեությունը դրան է նպատակաուղղված: Այստեղ պետք է գիտակցել Մարդու իրավունքների հայկական դպրոցի մասնակցության աստիճանը: Դա երկու ձևով է. կամ մենք ստեղծում ենք մի քանի հուսալի տեղեր, որտեղ Ձեր ուսուցիչներն ակտիվ դիրքեր են գրավում, և նրանց նպատակաուղղում ենք այդ կետերը փոխելուն: Այսինքն, նրանք զբաղված են ոչ միայն Մարդու իրավունքների դասավանդմամբ, ոչ միայն իրավական մշակույթի դրսևորմամբ

(արմատավորմամբ), այլ նաև ավելի ակտիվ դիրք են գրավում հասարակության նկատմամբ, այդ թվում նաև դպրոցի կյանքն ընդհանրապես փոխելու ուղղությամբ: Իհարկե, այստեղ առաջ կգա անհրաժեշտություն համագործակցել բոլոր այն ուժերի հետ, որոնք նույն այդ նպատակն են դրել իրենց առջև: Կամ էլ դուք խնդիր եք դնում, որ մարդը գա դպրոց, հետո գնա. ցանկացած ուսուցիչ, որ գալիս է, ընկնում ձեր ձեռքի տակ և գնում է դպրոց, նրան դուք պատրաստում եք ոչ թե ընդամենը որպես Մարդու իրավունքների ուսուցիչ, այլ դպրոցի վերափոխող՝ Մարդու իրավունքների ուսուցչի դիմակով: Այս ամենը վերաբերում էր նպատակների և բովանդակության բաղադրիչին:

Հիմա՝ հանուն ինչի՞ դպրոցական կյանքը պետք է փոխվի և ինչ աստիճանականությամբ: Դա հետևյալն է. ինչպես կազմակերպել համատեղ գործունեություն, ուսուցում անհատական կրթական ծրագրերով: Հիմնական մեխը, հիմնական հարցը այն է, որ յուրաքանչյուրը պետք է ունենա իր սեփական կրթական անհատական ծրագիրը, բայց այդ ծրագրի իրականացումը պետք է լինի համընդհանուր համագործակցության միջոցով:

Հիմա դպրոցի ամենամեծ խնդիրն այն է, որ համընդհանուր հանրակրթություն չկա: Հասկանալի է, և չկա այն պատճառով, որովհետև ընդհանուր խնդիր չկա, որպեսզի յուրաքանչյուրին որակյալ ուսուցանեն: Եվ այդ պատճառով չկա անհատական ծրագիր, կա դասի ծրագիր, կա առարկայի ծրագիր, կա հաստատության ծրագիր, այսինքն՝ հիմնական անցում, որ կատարվում է հաստատության ծրագրից անհատական ծրագրերին: Հիմա դա ընդհանուր դպրոցական խնդիրն է: Կոնկրետ՝ մարդու իրավունքների առարկայի համար խնդիրն այդպես է դրված: Այսինքն՝ եթե

մենք ուզում ենք հարցին լուծում տալ, պետք է չափենք՝ իրականացվում էն արդյոք անհատական ծրագրեր, և այդ անհատական ծրագրերը իրականաց-

վում են համընդհանուր համագործակցությամբ, թե՛ ամեն մեկը գնում, իր համար կարդում է ու գալիս: Սա էլ հենց մեր խնդիրն է:

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
ՀԱՅՅՏԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ (ՄՏԱԳՈՐԾՈՒՆԵԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ) ԿԻՐԱՌՄԱՄԲ**

*(Կողմնորոշիչ գեկույց. արտասանվել է 2010թ. հունվարի 30-31-ին,
ՀՄԻԿ Կրթամշակութային կենտրոնում)*

ՄԱՆՈՒԿ ԱՇՈՏԻ ՄԿՐՏՁՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների դոկտոր,
Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՌԴ Սոցիալական և մանկավարժական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս*

ԱՄՓՈՓՈՒՄ

Մույն կողմնորոշիչ գեկույցը հեղինակը ներկայացրել է կրթության ոլորտի մի խումբ տեսաբանների, մեթոդաբանների, ուսուցանողների առաջ և նպատակ է հետապնդել ուրվագծել Մարդու իրավունքների հայկական դպրոցի հեռապատկերը և ապագա դերակատարումը հասարակական, կրթական գործընթացներում:

Երկօրյա գիտական ֆորումում քննարկելով մարդու իրավունքների հայեցակարգի զարգացման ժամանակակից միտումները, փիլիսոփայական վերլուծություններով, մասնակիցների ակտիվ ստեղծագործական ներգրավումով, մտագործունեական խաղերի տեխնոլոգիայի, սխեմատիկ պատկերների կիրառմամբ ուրվագծվում է Մարդու իրավունքների հայկական դպրոցի հայեցակարգի հետագա ուրույն, հոգևոր հենքի վրա զարգացման ուղին, ինչպես նաև դպրոցի էական դերակատարումը ընդհանրապես մարդկային հասարակության բարեփոխման գործում:

Բանալի բառեր. Մանուկ Աշոտի Մկրտչյան, Մարդու իրավունքների հայկական դպրոց, ՄԻՀՇ, գիտական ֆորում:

ОБРАБОТКА КОНЦЕПЦИИ АРМЯНСКОЙ ШКОЛЫ ПРАВ ЧЕЛОВЕКА С ИСПОЛЬЗОВАНИЕМ ОБУЧАЮЩИХ МЕТОДОВ СОТРУДНИЧЕСТВА (ТЕХНОЛОГИЯ ОРГДЕЯТЕЛЬНОСТНЫХ ИГР)

МАНУК АШОТОВИЧ МКРТЧЯН

*Доктор педагогических наук,
Кандидат физико-математических наук,
академик Академии социальных
и педагогических наук РФ*

РЕЗЮМЕ

Данный установочный доклад автор представил группе теоретиков, методистов, преподавателей и преследовал цель очертить перспективу Армянской Школы Прав Человека и ее роль в развитии общественных и образовательных процессов.

Во время двухдневного научного форума обсуждались современные тенденции развития концепции Прав Человека с философским анализом. При активном творческом участии коллег очертается путь развития собственной концепции Армянской Школы Прав Человека.

Ключевые слова: Манук Ашотович Мкртчян, Армянская Школа Прав Человека, АШПЧ, научный форум:

REDEVELOPMENT OF THE ARMENIAN HUMAN RIGHTS SCHOOL CONCEPT USING COLLABORATIVE TEACHING METHODS (TECHNOLOGY OF INTELLECTUAL GAMES)

MANOUK ASHOT MKRTCHYAN

*Doctor of Pedagogical Sciences,
Doctor of Physical and Mathematical Sciences, Associate Professor, Academician of the Russian Federation
Academy of Pedagogical and Social Sciences*

SUMMARY

The author presented this indicative report to a group of theorists, methodologists, trainers in the field of education and aimed to outline the Armenian Human Rights School perspectives and future role in public and educational processes.

During the two-day scientific forum the spiritual-based development path of the future unique concept of the Armenian Human Rights school, as well as school's essential role in the process of human society reform is outlined by discussing the modern trends in the development of human rights concepts, using philosophical analyses, active creative involvement of participants, technology of intellectual games, schematic images.

Key words: Manouk Ashot Mkrтчyan, Armenian Human Rights School, AHRS, scientific forum.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՍՄՈՒ ՀԻՄՆԱՐԿԻ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ¹

Այժմ ընդհանրացած կարծիք է, որ բիայնական հասարակությունը եղել է Հայկական լեռնաշխարհում կազմակերպված ամենահին պետությունը, որ քաղաքական ասպարեզ է իջել մ.թ. ա. 9-րդ դարի կեսերին: Բայց բավական է ի նկատի ունենալ նրա աստուրական տիպի զարգացած ռազմաստրկատիրական բնույթը, որպեսզի հնարավոր լինի ենթադրել պետական կազմակերպության ավելի նախնական ձևի ներկայությունը Հայկական լեռնաշխարհում, որին իր վերջո հաջորդել է Բիայնական թագավորության վարչա-քաղաքական կառուցվածքը: Այս տեսակետից, հետաքրքրական նյութ է հայթայթում բիայներեն «թագավոր» իմաստով Erieli (երիելի) բառի նախնական իմաստը: Վանկարերով $\triangle \gamma \beta \cdot \Delta \gamma \gamma \zeta \gamma \cdot \triangle \gamma \beta \cdot \triangle \zeta \gamma$ նըշված այդ բառը, որ գտնվում է լեզվի կապակցական վիճակում, կազմված է սումերական eri-eli արմատներով և բառացի վերաբերում է թե՛ «ցեղի-առաջնորդ» և թե՛ «ամրացված-բնակավայրի-կառավարիչ» իմաստներին: Այդ բառը կապակցական eri-û-eli (երի ու էլի) կազմությամբ և «քաղաքի-ազնվական-կառավարիչ» իմաստով եղել է նաև հին հայերենում, որից առաջացել է *երևելի* ածականը:

Սումերերենում պահպանված այդ $\triangle \zeta \gamma \gamma$ - eri-երի² արմատով են բացատր-

վում հայերենի *երկիր* և *երկին* բառերը, որոնց մասին առանձին կխոսվի: Այդ *երի* արմատով են կազմվել բիայնական արձանագրություններում նշվող *երիա*, *երինու*, *երիդիա*, *երիէլտուա*, *երիկու*, *երիունի* տեղանունները, որոնք, պատկանելով ազգագրական միևնույն խմբին, իրենցից ներկայացրել են աշխարհագրական մեծ շառավիղ ընդգրկող ցեղային ամրացված բնակավայրերի կենտրոններ: Այդ *երի* արմատով է բացատրվում ոչ միայն սումերական *երիդու* և *երեխ* քաղաքների անունները, այլև՝ պատմական Հայաստանին փոխանցված *երևարք*, *երիզա* և *երևան* տեղանունները, որոնց ծագման մասին խոսելու համար անհրաժեշտ է զբաղվել ոչ թե հնչյունափոխական մեկուսի դատողություններով, այլ՝ վերականգնելով նրանց այն նախնական իմաստները, որոնք հատուկ են եղել հասարակության զարգացման տոհմացեղական վիճակից դասակարգային հարաբերություններին անցնելու ժամանակաշրջանին: Որովհետև ըստ մարքսիստական փիլիսոփայության՝ «բովանդակությունը առարկայի և երեկվոյթի հիմքն է: Առարկաների (և տվյալ դեպքում լեզվական երևույթների) փոփոխությունը, զարգացումը միշտ սկսվում է նրանց բովանդակության փոփոխությունից, որպես առարկաների (և երևույթների) գլխավոր կողմի, գլխավոր

1 / 73 2016

ՎԵՍՏ
ԱՐԿԻՄՈՒԹԵՆ

¹ Վանաձորի Լոռի – Փամբակի երկրագիտական թանգարանում պահվող Եղիա Մոսջյանի արխիվում առկա են սույն հոդվածի առնվազն երկու տարբերակներ՝ ձեռագիր, վերնագրված «Հայաստանում պետության ծագման և ժամու հիմնարկության պատմությունից» և տպագիր, որը մենք վերցրել ենք որպես հիմք այն հիմնավորումով, որ հեղինակն իր հոդվածները ձեռագիր գրելուց հետո անձամբ էր մեքենագրում, ընթացքում կատարելով որոշակի խմբագրումներ և հավելումներ: Բացի այդ, մեքենագիր տարբերակի վրա հեղինակն անձամբ կատարել է որոշակի նշումներ, ուղղումներ: Հղումները նույնպես կատարված են իր ձեռքով:

² Hilaire de Barenton, Hilaire de Barenton-Lexique Sumériens-Français, p. 32, Paris, 1932

հիմքի»³:

Լեզվի և պատմության փոխադարձ կապերի սույն ըմբռնումներով շարունակենք զարգացնել առաջադրվող հարցերը:

Ուրեմն, *էրի-էլի* բառի իմաստային երկակի բնույթից կարելի է եզրակացնել, որ Հայկական լեռնաշխարհում ցեղը, որպես հասարակական միավոր, հատկանշվել է ոչ միայն ընտրովի առաջնորդով, այլև ամրացված այնպիսի կենտրոնական բնակավայր - սրբավայրով, ուր բնակվել է ցեղապետը յուրայիններով: Այդպիսի պաշտպանված վայրում պիտի կենտրոնացված լինեին ցեղի հիմնական հարստություն հանդիսացող անասունները և արհեստավորների այն հիմնական մասը, որոնց համար կյանքի, գույքի և հումքի ապահովությունը անհրաժեշտ նախապայման կլինեին արտադրությունն անարգել զարգացնելու և կատարելագործելու համար: Միջցեղային արյունալի ընդհարումների ժամանակ կենտրոնական այդ ամրացված բնակավայրում են ապաստանել մերձակա բնակավայրերում ծվարած ցեղի շարքային անդամները, ուր ռազմական գործին հմուտ ղեկավարների հետ և ցեղի գլխավոր աստուծո «օգնությամբ» օրհասական կռիվ են մղել կողոպտչական հորդանների դեմ:

Ցեղի առաջնորդ և միաժամանակ ամրացված կենտրոնական բերդ - շենի կառավարիչ *էրի-էլի* ղեկավարությամբ գործող քաղաքական այս հիմնարկությունը, որն համապատասխանում է հին Հունաստանի տոհմերից ընտրովի առաջացած Բազիլեիյաին, ըստ Ֆ. Էնգելսի՝ համարվում է պետության հնագույն ձևերից մեկը, ուր «Բասիլևսը բացի զինվորական իրավունքներից ունեւր նաև քրմական և դատավորական իրավունքներ»⁴:

Սա քուրմ-թագավորներով կառավարվող պետության այն հնագույն ձևն է, ուր ազատների համայնքից ընտրված առաջնորդն իր անձի մեջ համատեղել է քաղաքական և կրոնական ղեկավարի բավականին բարդ և պատասխանատու պաշտոնները: Կառավարման մի ձև, որից տրամաբանականորեն ծագել են քաղաք պետությունների հետագա կազմակերպությունները ռազմական դեմոկրատիայի ոգուց բխող իրենց ուրույն հիմնարկներով և հովանավոր աստվածներով: Պետության այդ նախնական ձևը, որը հին Հունաստանում երևան է եկել մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին, սումերական հասարակության մոտ մինչև մ.թ.ա. 1750 թվականը, այլ խոսքով՝ մինչև ակկադական միավորող ուժերի հանդես գալը, *քաղաք-պետությունների* համակարգում այն ավելի քան երկհազարամյա կյանք ունեցող քաղաքական հիմնարկություն է եղել իր զարգացման տարբեր աստիճաններով:

Սումերական հասարակության այդ *քուրմ-թագավորը*, որն հետագայում հանդես է եկել ժառանգական իրավունքի հիման վրա, կոչվել է *Պատեսի*, մի բառ, որն իր նախնական *պատ-խսի* կազմությամբ նշանակել է «գերագույն-կառավարիչ»: Սա հիմնականում զբաղվել է ոչ միայն քաղաքական և կրոնական գործերով, այլև՝ համայնքի տնտեսական և մշակութային կյանքի կազմակերպման ավելի բարդ և բազմակողմանի աշխատանքներով: Այդ տեսակետից *պատեսի-ն* եղել է իր ժամանակի լավագույն մաթեմատիկոսը, երկրաչափը, աստղաբաշխ-տոմարագետը, ջրանցքաշինարար վարպետը, արդյունաբերական արհեստագործության հմուտ կազմակերպիչն ու մանավանդ անգերագանցելի առևտրականը: Եվ այս հասկանալի է այն պատ-

³ Մարքսիստական փիլիսոփայության հիմունքները, էջ՝ 337, Երևան, 1959

⁴ Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ՝ 148, Երևան 1965թ.

ճառով, որ եփրատ-տիգրիսյան Միջագետքում, ուր զարգացման աննախընթաց հունի մեջ էր մտել արհեստական ռոռզման հիման վրա ծնունդ առած երկրագործությունը, չափազանց մեծ կարիք էր զգացվել շինարարական տեխնիկայի և աշխատող ձեռքերի, որոնց հնարավոր չէր ձեռք բերել տեղերում, առանց առևտրական լայն կապեր հաստատելու հարևան երկրների հետ:

Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի սումերական քաղաքների միջև կատարվող տնտեսական հարաբերությունների մասին գրավոր հիշատակությունն է պահպանված սումերական *Էնմերկար* կոչված էպոսի այն բեկորային աղյուսատախտակի վրա, որի բովանդակությունը ըստ ամերիկացի հայտնի սումերագետ Ս. Ն. Կրամերի վերաբերվել է մ.թ.ա. 4-րդ հազարամյակում սումերական հասարակության և նրա հարևանների միջև տիրող խաղաղ հարաբերություններին, նախքան տարալեզու ժողովուրդների ներխուժումով Միջագետքում ստեղծված «*լեզուների խառնակությունը*»: Հեղինակի աշխատությունից թարգմանաբար բերում ենք այդ էպոսի մեզ հետաքրքրող տողերը:

«Այդ օրերում Շուբուր (արևելք) երկրամասը (էր) առատության և արդար վճիռների վայր:

Լեզվով ներդաշնակ սումերը (հարավ) (էր) իշխանական վճիռների մեծ երկիր,

Ուրի (հյուսիսը) (էր) երկրամասը ունենալով բոլոր (մեզ) անհրաժեշտ բաները»⁵:

Այս Ուրի-ն, որ նշանակում է «*հյուսիս*», վերաբերում է Հայկական լեռնաշխարհին ընդհանրապես, բայց մ.թ.ա. 4-րդ հազարամյակի պայմաններում անմիջականորեն նրա հարավային մասի Ծովք, Աղձինք և Մոկք նահանգ-

ներին, ուր ապրում էին հայերի սուբարական կամ խուրրիական ցեղակիցները:

Հայկական լեռնաշխարհի համայնքները, որոնք այդպիսի հեռավոր անցյալում տնտեսական և մշակութային կապերի մեջ են գտնվել Միջագետքի սումերական ցեղակիցների և նրանց պատեսիների հետ, պիտի անպայման ազդված լինեին պետական կազմակերպության այդ աստվածապետական կառուցվածքից այն հարմարեցնելով մեր լեռնաշխարհում զարգացող նյութական կյանքի պայմաններին: Մեր կողմից հայտնաբերված հնագիտական փաստերը, որպիսիք բրոնզի դարի աստղագիտական և տոմարական պատկերացումներով զարդարված *էրիուէլիների* մետաղե գոտիներն են, դրականորեն են պատասխանում այդ հարցին: Թե ինչպիսի դեր է կատարել քուրմ-թագավորների հիմնարկությունը մեր լեռնաշխարհի արհեստագործական և առևտրական հարաբերությունների զարգացման բնագավառում, այդ մասին լռում են գրավոր աղբյուրները: Այդ բացը մենք կաշխատենք լրացնել այնպիսի բառերի վերլուծումներով, որոնք իրենց նախնական իմաստներով առնչվեն նրա դրսևորման տարբեր կողմերի հետ:

Այս տեսակետից հետաքրքրական նյութ է հայթայթում հայերեն *ժամ* բառի պատմությունը: Ինչպես հայտնի է, հայերենում այն ունի երկու իմաստ: Դրանցից առաջինը նշանակում է «*տաճար*» և հոմանիշ է հունական ծագման վերագրվող *եկեղեցի* բառին: Երկրորդը՝ վերաբերում է օրվա մեկ-քսանչորսերորդական մասի անվանմանը:

Որպես ժամանակի միավոր, *ժամ* բառը ցարդ համարվել է իրանական «*ժամանակ*» իմաստով *զաման* բառից փոխառություն: Եթե նույնիսկ ճիշտ

⁵ Samuel Noah Kramer. Sumerian Mythology, 1961 New-York, p. 107

համարենք փոխառության այդ միտքը, դրանով ոչ կբացատրվի *գաման* բառի ծագման և զարգացման պատմությունը և ոչ էլ ցույց կտա «*տաճար*» իմաստով *ժամ* բառի առնչությունը իրանական որևէ լեզվի⁶ հետ:

Վերոհիշյալ հանգամանքները կռահել են տալիս, որ հայերենի *ժամ* բառն իր երկակի իմաստներով, անկախ իրանական լեզուներից, պիտի ունեցած լիներ զարգացման հնագույն անցյալ, կապված հայ հասարակության և նրա բաղադրիչ մասերի նախապատմական երբեմնի գործունեության հետ:

Սումերական լեզվի նախնական ձևերի հետ ունեցած մեր ծանոթությունն ու այդ սկզբնաղբյուրի հիման վրա ստուգաբանելու պատմական եղանակը նոր լույս են սփռում առաջադրվող հարցի շուրջը: Առ այդ հետազոտությունները ցույց տվին, որ հայերենի *ժամ* բառերն հակառակ իրենց միավանկային պարզագույն կազմության, ներկայացնում են ոչ թե արմատական կամ նախնական ձևեր, այլ՝ տարբեր արմատների կապակցություններից սղված լեզվական բաղադրություններ: Այդ բառերի հնագույն իմաստների խորքը թափանցելու համար անհրաժեշտ է վերականգնել այն արմատները, որոնցով կազմվել են նրանց կապակցական վիճակները:

Լեզվի զարգացման հանգամանքներով այդ արմատները այժմ չեն գիտակցվում և բավական մեծ ճիգեր են պահանջվում նրանց վերականգման համար: Շնորհիվ սումերական հասարակության բաղադրիչ մասերի հետ ունեցած հայ ժողովրդի ազգակցական և մշակութային վաղեմի կապերի, հնարավոր է լինում այդ հասարակության թողած գաղափարազիր աղբյուրների օգնությամբ մասամբ վերականգնել հա-

յերենի ոչ միայն վավերական արմատները, այլև նրանցով կազմված արդի բաղադրված բառերի կապակցական վիճակները: Հայերենի այդ նախնական վիճակների վերականգնումը օգնում է երևան հանելու բառերի ապրած ոչ միայն հնչյունական որոշ փոփոխությունները, այլև՝ իմաստային այն հակադրությունները, առանց որոնց հնարավոր չէ լեզուն կապել տվյալ ժողովրդի պատմության հետ և խոսել գիտական ստուգաբանության մասին:

Առաջարկված եղանակով էլ փորձենք երևան բերել «*տաճար*» իմաստով *ժամ* բառի ծագման հնարավոր պատմությունը:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ բառը ծագել է սուբարական «*առևտուր*» իմաստով *շաամու*⁷ բառից, որը գրաբարում ծանոթ է սեռական *ժամու* և *ժամուց* հոլովաձևերով: Սուբարական այդ *շաամուն* իր հերթին փոխ է առնված սումերերենի միննույն իմաստով *շաամ*, *սասամ* կապակցությունից, որ հնում բառացի վերաբերվել է «առևտրի սենյակ» և «*Շա կամ Սա աստուծո սրբավայր*» իմաստներին:

Այս *շա*, *սա* արմատական բառերը, որոնք այնքան լայնորեն տարածված են հայերենի և բիայներենի կապակցական և բաղադրական վիճակներում, բացի «*առևտուր*» իմաստից, անվան բարբառային տարբերակներն են սումերական առևտրի, արհեստների, աստղագիտության և դպրության աստուծո: Սումերական *շաամ* և սուբարական *շաամու* բառերն ունենալով հանդերձ «առևտրի-սենյակ» և «առևտուր» իմաստները, հնում վերաբերվել են հատկապես առևտրի *Շա*, *Սա* աստուծո անունով կատարվող «տաճարական-առևտուր» և «տաճարական-վաճառանոց» իմաստներին⁸:


⁶ Շողվածի ձեռագիր տարբերակում՝ «իրանական որևէ բառի հետ»:

⁷ H.de Barenton - Les Radicaux Sumeriens, p. 82, 1932, Paris

⁸ H.de Barenton - Les Radicaux Sumeriens, 1932, Paris

Այստեղ հարկ է նշել, որ քուրմ-թագավոր *Էրի-Էլինների* կամ *Էրիու-Էլինների* կառավարման նախնական շրջանում ինչպես դրսի արտադրական հիմնարկներում, այնպես էլ տաճարներում տեղի ունեցող բոլոր ձեռնարկություններն ու գործառնությունները կատարվել են քաղաքային ազատների համայնքները ներկայացնող համապատասխան աստվածների անուններով, որպիսին տվյալ դեպքում առևտրի հովանավորի դերում հանդես է եկել *Շա* կամ *Սա* աստվածը:

Գտնվելով քուրմ-թագավոր՝ *Էրիու-Էլինների* անմիջական ղեկավարության տակ, տաճարական *շասմու* վաճառանոցները տեղավորված են եղել այդ նպատակով կառուցված տաճարների առաջամասում կամ էլ նրանց կից կառուցված հատուկ մասնատներում: Այս տեսակետից գեղեցիկ օրինակ է տալիս սումերական *Նիպպուր* քաղաքի տաճարի ճարտարապետության վերակազմությունը:




Նիպպուր քաղաքի պեղված մի շինություն⁹

⁹ Հեղինակի կողմից օգտագործված նկարները նրա արխիվում բացակայում են: Այստեղ տեղադրված նկարները վերցված են համացանցից: <http://sanyok-belarus.narod.ru/index/0-66> (խմբ.):

Մրա առաջին մասը, որն իր վերապրուկային դրսևորումն է գտել հայկական ճարտարապետության *Ժամատուն* կոչված հայտնի կառուցվածքում, առևտրի աստուծո պատվանդանով հատկացված է եղել տաճարական *շասմու*

առևտրի գործառնություններին: Երկրորդ մասը՝ իր *գիկկուրատ* կոչվող աշտարակային շինությամբ, որպես *Էնլի* աստուծո բնակարան՝ հատկացված է եղել պաշտամունքային նպատակի:



Մեծ սանդուղքավոր տաճար-աշտարակ (գիկկուրատ)
<http://bse.sci-lib.com/particle010251.html>

ճարտարապետական այս երևույթը երևան է գալիս Մեծամորի տաճարական կառուցվածքում, ինչպես նաև Արին-Բերդում՝ խալդյան տաճարին կից՝ առևտրի սխալ ընթերցվող մի աստուծո անվանը նվիրված *Է-Մուսի* կոչվող շինությամբ:

Հայերեն «եկեղեցի» իմաստով *Ժամ* բառի ծագման կապակցությամբ բերված լեզվական և ճարտարապետական փաստերը վկայում են, որ Հայաստանում բիայնական ռազմա-ստրկատիրական պետությանը նախորդել է քաղաք-պետությունների ձևով հանդես եկող էրի-էլիների կամ ստրկատիրական նախնական դեմոկրատիայի պետական կառուցվածքը:

Արաքսի հովտում իր ամրացված կենտրոնական էրի բնակավայրով, այդ քուրմ-թագավորների աստվածապետական կազմակերպություններից մեկն էլ՝ առնվազն 4 հազար տարի առաջ եղել է պտղաբուծական արտադրությամբ հռչակված *էրի-ուա-նան*, որն հետագայում ստացավ Երեվան անունը¹⁰:

Ժամ բառի ծագման կապակցությամբ բերված փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի անմիջական նախնիները անմասն չեն մնացել սումերո-սուրարական ծավալուն առևտրի տաճարական գործառնություններում: Այդ մասին են վկայում Մովսես Խորենացու Պատմության առաջին գրքում հիշատակված դիցաբանական, տեղագրա-

¹⁰ Այս պարբերությունը բացակայում է մեքենագիր տարբերակում:

կան և անձնական անունների այն բացառիկ կարևորություն ունեցող շարքը, որոնք ցարդ մնացել են անբացատրելի: Դրանցից մենք կաշխատենք բացատրել այն մասը, որոնք առնչվելով Հայաստանում զարգացող տաճարական առևտրի հետ, ավելի ցայտուն կդարձնեին սումերո-սուրբարահայ հասարակությունների միջև գոյություն ունեցող առևտրական և մշակութային այն վաղեմի կապերը, առանց որոնց կարելի չէր լուսաբանել ժամ բառի ծագման նյութական հիմքերը:

1 *Շամուշատ* կամ *Սամուսատ*. եղել է գետային առևտրի գլխավոր կենտրոն Ստորիքի Կոմագենե նահանգում՝ հիմնված Եփրատ գետի աջ ափին: Անունը ծագել է լեզվական *Շասամու-շատ*, *Սասամու-Սատ* կապակցություններից, բառացի վերաբերվելով «*առևտրի-պալատ*» իմաստին: Այս և այլ կապակցություններում *Շասամու* բառի իմաստն իր սկզբնական շրջանում պիտի հասկանալ «տաճարական-առևտուր» բովանդակությամբ:

2 *Արշամուշատ*. հայկական հնագույն քաղաք Ծոփաց աշխարհում, հիմնված՝ Արածանի գետի ձախ ափին: Գետային տարանցիկ առևտրի գլխավոր կենտրոն: Անունը ծագել է «*մետաղի-առևտրի-պալատ*» իմաստով *ար-շասամու-շատ* կապակցությունից:

3 *Արշամունիք*. ըստ «Աշխարհացույցի» անունն է Հայաստանի Տուրուբերան նահանգի 4-րդ գավառի: Այն ծագել է լեզվական *ար-շասամու-նի(ք)* կապակցությունից, բառացի վերաբերվելով «*մետաղի-վաճառականների-միություն*» կամ *մետաղի – վաճառականներ* իմաստին:

4 Շամքոր. աղվանական քաղաք, որի անունը ծագել է սումերո-սու-

բարական «*առևտրական-պալատ*» իմաստով *շասամու-կուր* կապակցությունից:

5 Արշամ. անձնանուն է, հիշատակված՝ Խորենացու Պատմության Բ. Գրքի ԻԴ գլխում, որպես թե հայր Աբգար անունով թագավորի: Այդ անունը սղվել է «*մետաղավաճառ*» իմաստով *ար-շասամու* կապակցությունից: Արշամայ Աբգար հարակցությամբ անունը վերաբերվել է «*Մետաղավաճառի – Աբգար*» իմաստին, հավանաբար որպես ընդգծում Աբգարի ազնվական ծագմանը:

6 Շամբատ-Սամբատ-Սմբատ. հայկական անձնանուններ են, որոնք ծագել են սումերո-սուրբարական *շասամ-բատ*, *սասամ-բատ* կապակցություններից բառացի վերաբերվելով «*առևտրի-կառա-վարիչ*» իմաստին: Պատմահոր այն պլենդուրը, թե Բագրատունիների մեջ գործածական այդ անունները հրեական ծագում ունեն և առնչվում են սեմական եբրայերենի հետ, գիտության ընձեռած արդի տվյալներով չեն համապատասխանում պատմական իրականությանը:

Բերված լեզվական ոչ լրիվ փաստերի լույսի տակ մեր առջև սկսում է բացվել սումերո-սուրբարական քաղաքակրթության շրջանին Հայկական լեռնաշխարհում ծավալված արհեստագործական և առևտրական եռուն գործունեության պատկերը, որն իր լուսավոր հետքերն է թողել հայկական տեղանունների և անձնանունների նախնական իմաստներում: Ներկայացվող օրինակներից երևում է, որ սումերական և ասսուրաբաբելոնական քաղաքների հետ կատարվող առևտրի հիմնական առարկան հանդիսացել են մետաղներն ու մետաղային առարկաները, որոնք պիտի պատրաստված լինեին տեղական ար-

հետստանոցներում և արտահանված թե՛ ցամաքով և թե՛ մանավանդ գետային ուղիների տարանցիկ կայաններով, ինչպես ցույց տրվեց առևտրական Արշամուշատ, Շամուշատ քաղաքների ներկայությունը Եփրատի ափերին:

Միջագետքի և Ասորիքի շուկաների հետ ունեցած հարաբերություններում հիմնական դերը կատարել են Հայկական լեռնաշխարհում տիրություն անող քուրմ-թագավորները ոչ միայն իրենց Շամու¹¹ վաճառանոցներով, այլև տաճարներին կից և նրանց ենթակա մետաղագործական, մանածագործական և այլ արտադրությունների արհեստանոցներով, ինչպես ցույց տվեց վերջին տարիներին Արարատյան դաշտավայրում պեղված Մեծամոր տաճարի մետաղագործական ընդարձակ և բարդ շինությունների համալիրը, մասնագիտական իր տարբեր բաժանմունքներով: Հայաստանի միայն սովետական տարածքում հայտնաբերված նման արհեստանոցների թիվը, ըստ պաշտոնական հաղորդագրության, հասնում է մոտ չորս հարյուրի¹²: Իսկ եթե դրանց գումարենք պատմական Հայաստանի հանքաշատ շրջանների հնարավորությունները, հեշտ է պատկերացնել, թե քանի հազարի կհասնեն Օոփքից և Աղձնիքից մինչև Սյունիք, Արցախ, Գուգարք, Տայք և այլուր տարածվող մետաղագործական արհեստանոցների և տաճարական ժամու¹³ վաճառանոցների թիվը, որոնք մի քանի հազարավայրերի ընթացքում հանդիսացել են մետաղագուրկ Միջագետքի շուկաներին մետաղներ հայթայթող հիմնական դարբնոցները:

Տնտեսական այդ վաղեմի հարաբերությունների արձագանքը պահպանված է սումերական ծագում ունեցող

ջրհեղեղյան առասպելի աստվածաշնչական տարբերակում, ուր Նոյ նահապետի երկնային ջրերում լողացող դիցաբանական տապանը զուր տեղը չէ, որ կայան է ընտրել մետաղներով և շինանյութերով հարուստ «ի լերինս Արարատայ» - Արարատ երկրի լեռների վրա: Այդ մասին ավելի պարզ վկայություն կա հայկական այն ավանդության մեջ, ըստ որի Նոյան տապանի սկզբնական կայանն եղել են Տուրուբերան նահանգում գտնվող Միփան և Գրգուռ լեռները: Պատահական չէ, որ այդ անունը ծագել է սուբարական «մետաղագործ» իմաստով *գուրգուրրու*¹⁴ բառից: Այս բառի սղումով է առաջացել ոչ միայն լեռան *Գրգուռ* անունը, այլև հայերենի *գրգռել* բայը, որն հնում վերաբերվել է մշակելու - նպատակով մետաղը շիկացնելու իմաստին:

Նետնելով հայերենի «տաճար» իմաստով *ժամ* բառի հետքերին, հանգում ենք այն եզրակացության, որ սումերո-սուբարական առևտրի հետ զուգընթաց Մերձավոր Արևելքի և Այսրկովկասի հարևան երկրներն է թափանցել, քուրմ-թագավորների կառավարման այն ձևը, որն հատուկ է եղել ստրկատիրական նախնական հարաբերություններին: Բայց ոչ մի տեղ աստվածապետական այդ հիմնարկությունը իր ամրացված բերդաքաղաքների կենտրոնախույս համայնքներով զարգացման այնքան նպաստավոր հող չի գտել, որքան Հայկական լեռնաշխարհում: Դրան նպաստել են այդ երկրի աշխարհագրական կտրտվածությունը և նրանից բխող տնտեսական զարգացման տարբեր պայմաններն ու տեղական հակադիր շահերի մշտական բախումները: Վանի *բիսյնական* կոչված ռազմաստրկատիրական գիշատիչ պետությունը

¹¹ Ձեռագիր տարբերակում՝ Ժամու

¹² Դոկտ. Ն. Մարտիոսյան - Քարի դարից Ուրարտու, էջ՝ 86, Երևան - 1971

¹³ Տպագիր տարբերակում՝ Շամու

¹⁴ H.de Barenton- Les Radicaux Sumeriens, p.90, 1932, Paris

ձգտել է ոչ թե նրանց միավորմանը, այլ օգտվելով այդ մասնատված համայնքների քաղաքական թուլությունից, շարունակ կողոպտել ու ավերել է երկիրը, խանգարելով իր իսկ տիրապետության տակ գտնվող ժողովուրդների բնականոն զարգացումը: Այդ է պատճառը, որ նրա անկումից հետո նրան փոխարինող Հայոց Երվանդյան և Արտաշիսյան կոչված թագավորները ջանացել են բիայնական ամայացած տիրություններում վերականգնել արհեստագործական և առևտրական երբեմնի աշխույժ գործունեությունը՝ համապատասխան ժողովուրդներ բերելով Մեծ Հայքի ծայրամասերից և հունական ու հրեական գաղութներից: Հենց որ կենտրոնացած պետականությամբ հայ հասարակությունը սկսել է մտնել զարգացման քիչ թե շատ նպաստավոր հունի մեջ, նրան զուգահեռ նոր զարթոնք է ապրել արհեստագործության և տաճարական առևտրի Շամու կոչված հիմնարկությունը՝ մեծ ազդեցության հասնելով երկրի կառավարման մարմիններում: Դրա հետևանքով պետությունը աստիճանաբար նորից ստացել է աստվածապետական բնույթ, ուր, որոշ հեղինակների կարծիքով, Արտաշես Ա-ի և Տիգրան Բ-ի նման ինքնակալներն անգամ հանդիսացել են հին արևելյան տիպի քուրմ-թագավորներ¹⁵:

Բոլոր հիմքերը կան հաստատելու, որ Հայաստանի և Մերձավոր Արևելքում նրա հարևանների հեթանոսական տաճարներում առևտրի առարկա են դարձրել ոչ միայն արհեստագործական և գյուղատնտեսական արտադրանքները, այլև պարտքի դիմաց և պատերազմական գերությունից ստրկացված մարդկային բազմություններն ու կրոնական քողով վարագուրված հատուկ կանայք:

Տաճարական տարածված առևտրի մասին վկայություններ են պահպան-

ված չորս ավետարանիչների գրքերում, որոնցից մեջ ենք բերում Հովհաննես Առաքյալի խոսքերը. «Եւ էր մերձ գատիկն Հրէից, եւ էլ Յիսուս յԵրուսաղէմ. Եւ եգիտ ի տաճարին զի վաճառէին զարջառս, եւ զոչխարս եւ զաղաւնիս, եւ զլումայափոխսն որ նստէին: Եւ արար խարազան չուանեայ, եւ եհան զամենեմիս ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատավաճառացն ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց: Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, եւ մի առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի»¹⁶:

Քրիստոնեական զարգացմանը հաղորդված նման փաստերը, մեր կարծիքով, հեռավոր արձագանքն են այն հերոսական պայքարի, որ մղել են քրիստոնյա առաջին համայնքները, անսահման հարստության հետ քաղաքական իշխող դիրքի հասած քրմության դեմ, իր էությամբ հակաստրկատիրական քաղաքական պայքարին տալով կրոնա-գաղափարախոսական բնույթ: Այս տեսակետից հետաքրքրական նյութ է հայթայթում հայ մատենագրության 7-րդ դարի հեղինակ՝ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» աշխատությունը: Այդ գրքում, բացի հայ պարսկական պատերազմներից, նկարագրված են նաև քրիստոնեության պայքարի դրվագներ հեթանոսության դեմ, ուր հիշատակվող հերոսներից են «յոյժ պատերազմող Արձան քրմապետն»: Մա գլխավորելով տաճարական շամու վաճառանոցների կենտրոն հանդիսացող Աշտիշատի անահիտյան տաճարի իշխանությունը, բացի առևտրական գործարքներից առաջացող հարստությունից, իր տրամադրության տակ ունեցել է նաև տաճարական սեփականության Կուռոս, Մեղտի, Բրեխ, Տումբ, Խորնի, Կեղք և Բագու ավանների կալվածքներից ստացվող

¹⁵ Կ. Վ. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, էջ՝ 68, 120, Երևան, 1963

¹⁶ Ավետարան ըստ Հովհաննես, Գլ. Բ.13-16

եկամուտները: Իսկ եթե դրանց գումարենք թագավորների և իշխանների պարբերական նվիրատվություններն ու պատերազմական ավարներից հանված բաժինները, հեշտ կլինի պատկերացնել, թե ինչու նույնիսկ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ճանաչվելուց հետո, Աշտիշատի անահիտյան տաճարի քուրմերը, հանձին առասպելական Արձան քրմապետի շարունակել են հակաքրիստոնեական արյունահեղ պատերազմն ի խնդիր ստրկատիրական կարգերում քրմական դասի շահերի պաշտպանության:

Ափսոս, որ բացի ավետարանիչների այնքան սեղմ և վերապահ հաղորդումներից, ոչինչ չի պահպանվել Մերձավոր Արևելքի և Հայաստանի տաճարական առևտրի և արհեստանոցների գործունեությունից և քրմության դեմ քրիստոնյա առաջին համայնքների ձեռնարկած ծավալուն պայքարից: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հովհան Մամիկոնյանի աշխատության մեջ նկարագրվող դեպքերն ու դեմքերը կրում են առասպելական բնույթ: Այդտեղ ներկայացվող անուններից Գիսանե, Ղեմետրե և այլ անունների գիտական վերլուծումը ցույց է տալիս, որ իրար են խառնված տաճարական պաշտոնյաների և աստվածների անունները, փոխարինելով մեկը մյուսին: Էլ չենք խոսում այդ անուններին վերագրվող հնդկական ծագման միտումնավոր հերյուրանքի մասին, որպիսին գուրկ է որևէ հիմքից:


Մի բան պարզ է, որ պայքարելով քրմական դասի, և հատկապես տաճարներում կատարվող կանանց և ստրուկների զանգվածային վաճառքի դեմ, ըստ էության, Հայաստանում քրիստոնեության պայքարը հեթանոսության դեմ եղել է հակաստրկատիրական առաջադեմ շարժում, որի ընթացքում սկսել է կազմակերպվել լուսավորչական եկեղեցին:

Հայաստանի առաջին քրիստոնյաների անձնուրաց գրոհների առջև ի վերջո նահանջել են ոչ միայն ստրկատերերը, այլև տաճարական առևտրի մեջ հարստացած քուրմերը, որոնք խմբովին հարել են նոր կրոնին: Այդ քուրմերն էլ ժողովրդական զանգվածների հետ սումերո-սուբարական շատում կապակցությունը սղված ժամու և ժամ ձևերով, որպես քրիստոնեական տաճարի անուն, հայերենին են փոխանցել բոլորովին տարբեր բովանդակությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ [բառի] իմաստային այդ փոփոխությունը միանգամից չէր կարող կատարվել: Այդ փոփոխությունը լուսավորչական եկեղեցուց պահանջել է երկար դարերի համառ և հետևողական պայքար հեթանոսական կրոնի դեմ ընդհանրապես և տաճարական վաճառանոցներում բուն դրած տխուր բարքերի դեմ մասնավորաբար, որոնք հազարամյակներով արմատացած են եղել ժողովրդի առօրյա կենցաղում և հավատալիքներում: Գաղափարախոսական այդ պայքարն է եղել պատճառը, որ եկեղեցու հայրերը փորձել են ժամանակին ժամու-ժամ բառը փոխարինել հունարենին վերագրվող *եկեղեցի* բառով: Հակառակ դրան, ժամ բառը չի կորցրել իր կենսունակությունն, այն պատճառով, որ նա որպես լեզվական բաղադրություն, իր արմատական ձևերով և զարգացման նյութական հանգամանքներով այնքան սերտորեն կապված է եղել հայկական մշակույթի ամենատարբեր կողմերի իմաստավորման հետ, ինչպես ցույց է տալիս մեր աշխատանքների փորձը: Արմատական բառերի այդ իմաստային աղերսը ամենատարբեր բառերի կապակցական վիճակներում, հավաստում է ոչ միայն լեզվում երևան եկող հասկացությունների կապակցականության, այլև նրանց դիալեկտիկ զարգացման ընթացքի

մասին, որը տվյալ դեպքում *Էրիուելի* և *շաամու* կապակցությունների նկատմամբ դրսևորվել է իմաստային և հնչյունական հակադրություններով: Լեզվական ձևի և բովանդակության միջև առաջացող այդ հակադրությունն իր համապատասխան արտացոլումն է գտել նաև հայկական ճարտարապետության մեջ: Օրինակ՝ հայկական միջնադարի 9-12-րդ դարերում եկեղեցական գաղափարախոսության մեջ թափանցող աշխարհիկ տարրերի ազդեցության տակ մեր ճարտարապետության մեջ վերածնվող *շաամու* շինության հին ձևը, որը *ժամատուն*¹⁷ անունով սկսել է ծառայել ոչ թե իր դարն ապրած տաճարական առևտրի գործառնություններին, այլ՝ ֆեոդալական հասարակության հոգևոր և քաղաքական կարիքներին:

Հողվածում նշվող փաստերն ապացուցում են, որ բիայնական ռազմաստրկատիրական բնույթի պետականությունից շատ առաջ, դեռ 4-3-րդ հազարամյակներից սկսած, Սումերական հասարակության հետ ունեցած առևտրական, մշակութային և ցեղակցական սերտ կապերի շնորհիվ մեր լեռնաշխարհում կազմակերպված է եղել քուրմ-թագավորներով կառավարվող պետական այն հնագույն ձևը, որն իր արտադրական և առևտրական հիմնարկներով հատուկ է եղել ստրկատիրական դեմոկրատիայի նախնական հարաբերություններին: Այդ մասին է վկայում ոչ միայն *տաճար* իմաստով *ժամ* բառի և *երևելի* ածականի նախնական իմաստները, այլև *ժամանակի միավոր* իմաստով *ժամ* բառի ծագման հետ կապված լեզվական և հնագիտական փաստերի համադրման աշխատանքները, որոնք կդառնան առանձին մենագրության առարկա:



ժամատան հասակագիծ <http://www.pravenc.ru/text/161231.html>

¹⁷ Թորոս Թորոմանյան, Հայկական ճարտարապետություն, հատոր Ա

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱԱՄՈՒ ՀԻՄՆԱԴԻ ԾԱԳՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿՈՒՄ

ԵՂԻԱ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ ՄՈՍՁՅԱԼ

Հնազետ, լեզվաբան, շումերագետ

ԱՍՓՈՓՈՒՄ

Հեղինակը Հայկական բարձրավանդակում պետության ծագման վերաբերյալ իր տեսանկյունը հիմնավորում է լեզուների ստուգաբանական մեթոդներով:

Հողվածում բացատրվում է լեզվի կապակցական վիճակում գտնվող որոշ բառերի, ինչպես օրինակ՝ «թագավոր»-ի, իմաստը: Թագավորն, ըստ Մոմջյանի, բիայներեն *eri-eli* արմատից է, որից ածանցվել է *eri-â-eli-ն*՝ «քաղաքազնվական-կառավարիչ» իմաստով:

Շումերերենի (սումերերեն) և Շումերի պատմության օրինակով հողվածագիրը կարևորում և հիմնավորում է իրավունքի, լեզվի և պատմության կապերն իրենց զարգացման մեջ, ստուգաբանում է մի շարք բառեր, որոնք թեև սփռված են աշխարհագրական մեծ շառավղով, բայց ունեն իմաստային ծագումնաբանական կապ:

Կենտրոնանալով հայերեն *ժամ* (շամ) բառի ստուգաբանության վրա, Մոմջյանը ներկայացնում է տվյալ բառի զարգացման պատմությունը՝ իր գործածության երկու իմաստներով՝ 1. «տաճար» և 2. որպես օրվա 1/24-րդ մասի անվանում: Կասկածի տակ է դնում դրանց իրանականից կատարված փոխառություն համարելը:

«Տաճար» իմաստը նա բխեցնում է *շամու* սուրբարական բառից, որը հնում, ըստ հողվածագրի, կապված տաճարական տնտեսության հետ, նշանակել է «առևտրի սենյակ» և Շա կամ Մա աստծու սրբավայր: Նա փաստերով ապացուցում է, որ բիայնական ռազմատրկատիրական բնույթի պետականությունից շատ առաջ, դեռ մ.թ.ա. 4-3-րդ հազարամյակներից սկսած, սումերական հասարակության հետ ունեցած առևտրական, մշակութային և ցեղակցական սերտ կապերի շնորհիվ Հայկական լեռնաշխարհում կազմակերպված է եղել քուրմ-թագավորներով կառավարվող պետական հնագույն ձևը, որն իր արտադրական և առևտրական հիմնարկներով հատուկ է եղել ստրկատիրական դեմոկրատիայի նախնական հարաբերություններին:

Բանալի բառեր. Եղիա Մոմջյան, Պետության և շամու հիմնարկի ծագումը հայկական բարձրավանդակում, շումերերեն, տաճարական տնտեսություն, տաճարական առևտուր, սումերական հասարակություն:

ВОЗНИКНОВЕНИЕ ГОСУДАРСТВА И УЧРЕЖДЕНИЯ ШААМУ В АРМЯНСКОМ НАГОРЬЕ

ЕГИЯ ОГАННЕСОВИЧ МОМДЖЯН

Археолог, лингвист, шумеролог

РЕЗЮМЕ

Автор обосновывает свою точку зрения о возникновении государства в Армянском нагорье методами этимологизации.

Статья разъясняет смысл некоторых слов, в частности “*тагавор*” (король, венценосец), рассматривая его в историческом развитии. Слово «тагавор», согласно Момджяну, происходит от биайнийского *egi-elī*. В значении “город-дворянин-управляющий” его употребляли также древние армяне.

Применяя этимологический подход, автор на примере истории Шумера и Шумерского языка рассматривает эти слова в конкретной связи с правом, историей возникновения и развития, объясняет, в частности, армянское слово *ժամ* [Жам (Шаам)] в двух его смыслах: 1. собор (жрецкий) и 2. 1/24-я часть дня.

Слово *Շիշինի* (шааму), согласно автору, в древности, в период возникновения атрибутов государства (период рабовладельческой, племенно-родовой демократии), означало – торговый зал, а

также – святилище, место, храма бога Ша [Са]. Такое объяснение вполне убедительно, т.к. именно жрецы и жрецкие храмы управляли хозяйством и в том числе торговлей.

Основываясь на убедительных фактах, автор доказывает, что задолго до биайнской рабовладельческой государственности, начиная с 4-3 тысячелетий до нашей эры, благодаря коммерческим, культурным и родственным связям с Сумерским обществом, в Армянском нагорье с королями-жрецами был организован древний вид государственного правления, что вместе с производственными и коммерческими учреждениями было свойственно начальным отношениям рабовладельческой демократии.

Ключевые слова: Возникновение государства и учреждения шааму в Армянском нагорье, Егия Оганнесович Момджян, Шумерский язык, Сумерское общество.

ORIGIN OF THE STATE AND SHAAM INSTITUTION IN THE ARMENIAN HIGHLAND

YEGHIA HOVANNES MOMJIAN

Archeologist, Linguist, Sumer Scientist,

SUMMARY

The author justifies his view on the origin of the state in the Armenian Highland with the etymological methods of languages.

The article explains the meaning of a number of coherent words in the language, for example, the meaning of the word “tagavor” (meaning king). According to Momjian, the word *tagavor* is derived from the root *eri-eli* word in Vannic language, from which *eri-û-eli* word derived meaning “city-noble-manager”.

With the example of Sumerian and the history of Sumer, the author emphasizes and argues the link between the law, language and history within their development and etymologizes several words, which despite being spread at large geographically, have some semantic origination connection.

Concentrating on the etymology of the Armenian word *zham* (meaning hour) or *sham*, Momjian introduces the history of the development of this word with its two meanings: 1) “temple” and 2) the 1/24 part of the day. Momjian also questions their being bor-

rowed from Iranian.

According to Momjian “temple” is derived from Subarian word *shaamu*, which, according to the author, was related to the temple economy in the past and meant “trading room” as well as a sanctuary of the god *Sha* or *Sa*. The author also brings facts and proves that long before the Vannic military-slavery character of statehood, starting from the 4th to 3rd millennia BC, due to the close cultural, trading and tribal ties with the Sumer society, an ancient statehood governed by priests and kings was organized in the Armenian Highland. Such statehood with its manufacturing and commercial institutions was typical of the primary relations of the slave democracy.

Key words: Origin of the State and Shaam Institution in the Armenian Highland, Yeghia Hovannes Momjian, Sumerian, Sumer Society, Trading Room, Temple Economy, Temple Trade.

ԹԵ ԻՆՉԵՐ ԵՆ ՀՆԱՐՈՒՄ ԹՈՒՐՔ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԸ

1933 թվականին Անկարայում տեղի ունեցավ «Թուրք լեզվի առաջին համագումարը», ուր մի շարք լեզվաբանների շարքում, քաղաքական հատուկ նկատառումով հանդես են եկել նաև ծագումով հայ մասնագետներ, որոնք ըստ պատվերի, թյուրք պաշտոնակիցների հետ առաջ են քաշել լեզվի պատմության վերաբերյալ համարձակ և ֆանտաստիկ մտքեր: Կարդացվող զեկուցումների մեջ հետաքրքրական է ոմն Մարթայանի «թեզիսներ» կոչված շարադրանքը, որ կրում է «Թուրք, սումեր և հնդեվրոպական լեզուների կապերը» վերնագիրը:

Թվելով թուրքերենի ազգակցությունը Ալթայան լեզուների հետ, զեկուցողը հայտնում է այն կարծիքը, որ թուրքերենը հնագույն կապերի մեջ է գտնվում սումերերենի, սանսկրիտի և կելտական լեզուների հետ, որոնց անվանում է Ալպյան կամ *Թրքո-ելվրոպական* լեզուներ: Ցույց տալու համար, այսպես կոչված «*հնդեվրոպական թուրքերի*» տարածման և կուլտուրական ազդեցության համաշխարհային սահմանները, Մարթայանը խոստանում է արդի լեզվաբանության պատմահամեմատական մեթոդներին զուգակցել լեզվի հնէաբանական մեթոդները: Թե ինչպես է ըմբռնում այդ առաջադրվող մեթոդի էությունը, [պարզ է դառնում, երբ, *խմբ.*] Մարթայանը հենց տեղում անցնում է *ալպ* բառի ստուգաբանական վերլուծմանը:

Մարթայանի ասելով *ալպ*՝ բառը հին թուրքերեն է, քանի որ նրանով կազմված են *Ալպադո, Ալպադիտ, Ալպաուտ* ձևերով անձնանուններ՝ նրա տարբեր

բարբառներում, որոնք, հնում իբրև թե ունեցել են *asilzade* - «ազնվագարն», «ազնվատոհմ» իմաստները: Հաստատելու համար իր կարծիքը, նա այդ բառերը բաժանում է երկու մասերի: Առաջին *alp* մասին վերագրում է «ազնիվ», «ազնվական» իմաստները, իսկ *ağs, ağıt, aut* մասերին՝ «ծնունդ», «տոհմ» իմաստները:

Հայտնի է, սակայն, որ այդ անունների երկու մասերն էլ նրանց վերագրվող իմաստներով գոյություն չունեն Ալթայան լեզուների ոչ մի բարբառում: Այստեղ է դրսևորվում Մարթայանի հնէաբանական տաղանդը:

Նստած երևակայության հրեղեն ձիուն, Մարթայանը հասնում է Եվրոպա, ուր լատիներենում հայտնաբերում է *alpes* բառը՝ որպես լեռների անուն: Նրա ասելով, այդ բառը ծագել է «թրքական ծագում ունեցող» կելտական լեզուներից և ունեցել «բարձր-լեռ» իմաստը: Այն պատճառով, որ «հնէաբանը» կոնկրետ օրինակներով ցույց չի տալիս լատիներեն *alpes* բառի մեջ եղած «բարձր» և «սար» իմաստների առանձին մասերը, նրա ստուգաբանությունը կորցնում է գիտականությունը և դառնում հասարակ հնարանք: Հնէաբանը զգում է այդ և պեղումներ կատարելով իռլանդերենում, հայտնաբերում է «կույտ» և «զանգված» նշանակող *alip* բառը, որտեղից ծագեցնում է *alpes* բառի *alp* ձևով ենթադրվող «բարձր» իմաստը, առանց ցույց տալու <լեռ> իմաստին հատկացվող բառամասը: *Alp* բառն ու, ենթադրաբար, նրան վերագրվող <բարձր> իմաստը համեմատում է *սպիտակ* նշանակող լատիներեն *albus*

բառի հետ, որովհետև, հավաստում է Մարթայանը՝ «Բարձր սարերի ձյունով» կամ կավճային սպիտակ ապառներով ծածկված գագաթները կապ ունեն ձյունի հետ, իսկ *albus* բառից էլ ծագել է Անգլիայի հին *albion* անունը:

Այս ստուգաբանությունը կատարելիս Մարթայանն ըստ երևույթին նկատի է ունեցել թրքերեն *ağ* «սպիտակ» և *dağ* «լեռ» բառերի հնչյունական և իմաստային կարծեցյալ կապերի պատրաստումը: Հաստատելու համար ձյունի բառին վերագրվող «բարձր» ու «ազնիվ» իմաստները, Մարթայանը վկայակոչում է հին հունարեն *albos* բառը, որի «վիշապ» իմաստով ցանկանում է լրացնել նրա տոհմական ցեղային բովանդակությունը, որ համատարած ազդեցություն է թողել անգլիական կղզիներից մինչև Ալյայան լեռները, մինչև Ալբանիա և Հունաստան, ուր այդ բառը *Ալվիոն* հնչյունափոխությամբ, իբր, հատկացվել է «Հերկուլեսից պարտություն կրած Նեպտունի խիզախ և քաջ որդուն»: Եվ քանի որ, Մարթայանի կարծիքով առասպելական *Ալվիոն* անունը ծագել է կելտական *Ալբիոն* անվան հնչյունափոխությունից և *Ալբիոն* էլ թրք-կելտական կամ պարզապես, ենթադրաբար, «ազնիվ» և «բարձր» նշանակող *alp* բառից, եզրակացությունը պատրաստ է՝ *Ալվիոն* < *Ալբիոն* < *Ալպ*-ը թրքական ծագում ունեցող կելտական ցեղերի անունն է և ծագումով թյուրք *Ալվիոն* < *Ալպի* կոնիվը Հերկուլեսի հետ ցույց է տալիս «ելրոպական թյուրքերի» դարավոր պայքարը հին հույների հետ:

Այժմ տեսնենք, թե Մարթայանը ինչպիսի փաստարկումներով է սումերերենը կապում թյուրքերենի հետ և բոլոր թյուրք լեզվաբանների նման [այն] անվանում *Sumer Türkce* - «սումերական թյուրքերեն»: [Սրանից] անպայման գալիս է Իրաքի նավթահանքերի ախորժակ գրգռող բուրմունքը: Կիսատ թողնելով թուրանական լեզուների ինչ-

ինչ բարբառներում երևան եկող *Alpağit*, *Alpağ*, *Alpaut* անունների ստուգաբանությունը, ուր չտրվեց *ağit*, *ağ* և *aut* մասերի նույնիսկ ձևական բացատրությունը, Մարթայանը բերում է սումերերեն և թյուրքերեն բառերի մի համեմատական ցուցակ, առանց ցույց տալու նրանց մերձավորության գիտական հիմքերը:

1. Սումերերեն *ad* «հայր» = թրքերեն *ata* «հայր».- Սումերական համապատասխան մեհենագիրը, որն ունի նաև *at* և *a* ընթերցումները, վերաբերում է <մայր>, <ստինք>, <արգանդ>, <եղեգն>, <ջերմություն>, <ձայն>, <արմավենու կորիզ> և <հայր> իմաստներին: Սրանք ծագելով մայրական տոհմի հարաբերություններից և աշխարհայացքից, հանդիսանում են բովանդակությամբ մոտիկ հասկացողությունների զարգացման երանգավորումները: *Ad* արմատը հիմնականում վերաբերում է «մայր» հասկացողությանը, ուր նշվող «ստինք» իմաստը պիտի հասկանալ «սնուցանող», «կերակրող» և «խնամող» բովանդակությամբ, էլնելով, անշուշտ, նախնադարյան հասարակության կյանքի կոլեկտիվ պայմաններից, ուր ծնվող երեխաները գտնվել են ամբողջ տոհմի խնամքի տակ: Որքան էլ սումերերենը մեզ է հասել ստրկատիրական զարգացած հասարակության հուշարձանների միջոցով, մենք պարտավոր ենք ինչ գնով էլ լինի յուրացնել արմատական պարզագույն բառերի հնագույն հասկացողությունները, այլապես ստուգաբանությունը կզրկվի գիտական արժեքից, դառնալով հնչյունական համադրումների չափազանց հեշտ բառախաղ:

Ելնելով բառերի մշտական զարգացման գաղափարից մեր ուշադրությունն է գրավում *ad* բառի «եղեգն» իմաստը, որ մեր արդի ըմբռումներով ոչ մի կապ չունի <մայր> հասկացության հետ: Եղեգնը, որ նախնադարյան բնակարա-

նային շինարարության մեջ մեծ դեր է կատարել որպես անփոխարինելի ծածկանյութ, դիցաբանական պատկերացումների մեջ դարձել է մայրության խորհրդանիշը: Սումերական դիցաբանության մեջ նա հանդիսացել է *Իշտար* աստվածուհու սրբազան բույսը, կապված նաև ստորերկրյա ջրերի գաղափարի հետ: Որպես բուսական Իշտարը, իմաստության սումերական աստված *Հան* եղեգնի միջոցով Ուտնապիշտիմին կամ Նոյին է հաղորդել ջրհեղեղի վերաբերյալ աստվածների գաղտնի որոշումը: Այս միևնույն բուսական Իշտարի արգանդից է վերածնվել հին Հայաստանի մեծնող հարություն առնող գարնանային աստվածությունը.

ընդ եղեգան փող՝ ծուխ ելաներ,
ընդ եղեգան փող՝ բոց ելաներ,
եւ ի բոցոյն վազեր խարտեաշն
պատանեկիկ...:

Որպես հասարակության հովանավոր աստվածուհու սրբազան բույս, եղեգը կապված է ջերմության և նախնական երաժշտության գաղափարների հետ, որից Աթենաս աստվածուհին պատրաստել է առաջին սրինգը և նրանով փոյուզական Մատիր Մարսիասը մրցության է հրավիրել Ապոլլոնին:

Սրբազան եղեգնի գաղափարից է ծագել հայերենի «նվագել» նշանակությամբ *ածել* բայը, որի *ած* հիմքը սղվել է «ձայն եղեգնի» իմաստն ունեցող անջատական *a*-ad վիճակից: «Մնուցանող-մայր», «ծնող-մայր» և «աճեցնող-մայր» իմաստներն ունեցող անջատական *a*-ad և *a*-at վիճակներից են սղվել հայերեն «լցնել», «տալ», «առաջացնել» և «աճեցնել» բայերի *ած*, *ած*, *ած* և *աճ* հիմքերը:

Ետնագույն ձևով, *ad* և *at* ձևերը կապվում են արմավենու կորիզի և, հավանաբար, նաև կենդանական սերմի գաղափարի հետ, որն ավելի շուտ վերաբերում է «բեղմնավորող» իմաս-

տին, քան «հայր» բառի արդի բովանադակությանը, որպես ընտանիքի մեծի:

Հայտնի է նաև, որ սումերերենում ստրկատիրական շրջանի կառավարողի...¹ «հայր» հասկացությունը արձանագրություններում դրսևորվել է *ab* և *ap* ձևերով, որն ունեցել է սեմիտական աստվածների *abu* ձևով: Որպես *Ap* ձևի «հայր» նշանակություն, օրինակ համագումարի զեկուցումներում բերվում է դիցաբանական *apsu* հասկացությունը, որին զեկուցող Սալին Ռիֆատը թարգմանել է որպես «հայր օվկիանոս» կամ պարզապես «հայր-ջուր»: Թարգմանությունը, որ հարմարեցված է թյուրքերեն «ջուր» նշանակող *Su* բառին, սխալ է և կամայական, որովհետև սումերերեն *Su* նշանակում է ոչ թե «ջուր», այլ՝ «խավար»: Սումերերեն *apsu* հասկացությունը վերաբերում է աշխարհի <արարչագործությունից> առաջ պատկերվող տիեզերական համատարած «հայր աղջամուղջին»:

Եթե սումերերեն *ad* արմատը կապ ունենար թրքերեն *ata* բառի հետ, սումերերենում որևէ ձևով պիտի նշված լիներ նաև թրքերեն «մայր» նշանակող *ana* բառի որևէ տարբերակը, որ չկա: Եթե Մարթայանը պնդում է թրքերեն «հայր» հասկացության ծագումը սումերերեն «մայր» հասկացությունից, ապա նա պարտավոր է տալ այդպիսի գարգացման պատմական հիմքերը: Դրանով նա իրոք կզբաղվեր լեզվական հնէաբանությամբ և մեծ ծառայություն կմատուցեր գիտությանը:

2.Սումերերեն *adam* «ածիլված» և թրքերեն *adam* «մարդ» .- Բացի հնչյունական նմանությունից համեմատականում գուրկ է գարգացման գաղափարից և իմաստային հիմքից: Բացի այդ, թրքական *adam* բառը ոչ թե <թրքո-եվրոպական> (կամ Ալթայան) բառ է, այլ վերցված է պարզապես արաբերեն

¹ Անընթեռնելի բառ

ԱԴ (adom, adam) ձևից և ոչ մի կապ չունի Մարթայանի ենթադրած սումերերեն «ածիլված» իմաստով բառի հետ: Եթե սումերացիներն իրենք իրենց <մարդ> են համարել ածիլվելու պատճառով, որ շատ կասկածելի է, {ապա} արարներն ընդհակառակը, մեծ պատիվ են համարել մազ ու մորուք թողնելը: Այնպես որ համեմատության իմաստային «ածիլվող = մարդ» գուգահեռն ինքնստինքյան վերանում է: Ինչ վերաբերում է արաբերեն ԱԴ բառին {ապա այն} անկասկած կապ ունի Հին Կտակարանի նախամարդու adam անվան հետ և ծագում է բաբելոնական դիցաբանության միևնույն աղբյուրից: Սա ևս բացատրված է սումերերենի անջատական վիճակում գոյություն ունեցող անջատական a-dam, a-dama ձևերի իմաստային զարգացումներով:

Սումերերենում dam, tam և dama նշանակում է «ամուսին», «այր», «տղամարդ», իսկ նրա առջև դրվող a արմատը՝ «ձիավոր» կամ «կառքով ճամփորդող», որով անջատական a-dam և a-dama բառացի նշանակել է «ձի կամ կառք վարող»: Հաշվի առնելով այն, որ դասակարգային հասարակության մեջ ձի և կառք վարելու իրավունքը պատկանել է գերագանգորեն ստրկատերերին, անջատական a-dam՝ բառը նշանակել է «կառավար», որից ծագել է դասակարգային հասարակության բնույթի հետ կապված հայերենի «կառավարություն» հասկացությունը: Այսպիսով a-dam հասկացությունը, որպես «կառավար», ըստ էության նշանակել է «ստրկատեր», «ազնվական» և ոչ թե «մարդ արարած», որպիսի իմաստին նա հանգել է ստրկատիրական հարաբերությունների վերացման ընթացքում, երբ նա կորցրել է իր ներքին իմաստը և արմատների բաղադրված adam վիճակով գիտակցվել դեմոկրատական բո-

վանդակությամբ, որպես նոր բառ: Այս ձևով են առաջացել հայերենի մարդ և պարսկերեն mērd ձևերը սումերերենի «կառավար» նշանակող անջատական mar-du վիճակի սղումից, և ոչ մի կապ չունի ենթադրվող հնդեվրոպական mrto արմատի հետ:

3.Սումերերեն uku «քուն» և թրքերեն uyku «քուն». - Սումերենում uku ձևով «քուն» կամ «քնել» բառ չկա, եթե չհաշվենք նրա օթևան իմաստը, որից կարող է ծագել բայական օթևանել ձևը: Որքան էլ օթևան բառի մեջ մտնի քնի և քնելու գաղափարը, [այն] չի կարող նույնանալ դրանց հետ, որ հանդիսանում է ուրույն հասկացություն: Բացի այդ, թրքերեն uyku բառը արմատական ձև չէ՝: Թյուրքերենում արմատական բուն ձևն է uyu, որից կազմվել է և՛ «քուն» նշանակող uyu ku չափված ձևը և բայական՝ uyu-mak, uyu-dum, uyu-du, uyu-dun, uyu-duk խոնարհման ձևերը, որոնց ընթացքում ոչ-արմատական մասնիկային ku մասը հապավվում է:

Ինչ վերաբերում է սումերերեն «քուն» և «քնել» արմատներին, Բարենտոնի աշխատության² մեջ նրանք երևան են գալիս №178 մեհենագրի էթնիկական I.dura, ur, u, 2.Ša, si, 3.laban, liber տարբերակներով և №601 մեհենագրի էթնիկական nâd, nâ, nu ձևերով, որոնց հետ առնչվում են սլավոնական, լատինական, իրանական լեզուներն ու հայերենը:

Էթնիկական nâ արմատի կրկնությամբ կազմված է հայերենի և իսպաներենի nana-ն, որ թե՛ քուն և քնել է նշանակում և միաժամանակ անունն է՝ օրորոցային nana կոչվող երգերի: Այս բառը <քուն> իմաստով եղել է նաև սլավոնական լեզուներում няня ձևով, որից առաջացող няняка > нянька բառը նշանակել է «քնացնող»: Միևնույն nâ արմատով են կազմված Մանակ. և

² Hilaire de Barenton, Hilaire de Barenton-Lexique Sumériens-Français, Paris, 1932

Svapna և իրանական xvafna բառերը <քուն> նշանակությամբ, որոնց Svap և xvaf մասերը անջատական վիճակում պիտի ունեցած լինեին «օթևան» կամ նրա նման մի լրացուցիչ իմաստ: Իրանական ձևերի նմանողությամբ է կազմված սաքսոնական Swefn(a) ձևը:

Էթնիկական ուս արմատով է կազմվել անջատական uku-ու <օթևանում – քնել> հասկացությունը, որի «օթևան» նշանակող uku մասի իմաստային մթազնունով լեզվական բարդությունը կորցրել է իր նշանակությունը և սղվելով առաջացրել հայերեն *քնել* բայի *քուն* հիմքը: Այս ուս արմատի հետ կապ ունի հին սլավոնական *с ѹ н ѹ* «քուն» բառը, եթե սա չի կրում պատահական բնույթ:

Որքան էլ ցավալի է, սումերական լեզվի «քուն» նշանակող բարբառային բազմաթիվ արմատներից ոչ մեկի հետ թրքերեն սյս բառը չի առնչվում, բացառությամբ անջատական սյս-սկու <քնել-օթևանում> ձևի հնարավոր գոյությունից, որի սղումով կարող էր առաջանալ սյսու հիմքը, որը չի ածանցվում բայական սկումակ և հարակից ձևերից: Բացի այդ, կազմության նման հնարավորությանը խանգարում է թե՛ այս արմատի բացակայությանը սումերերենում և թե՛ Մարթայանի, Մալին Ռիֆատի և այլոց այն սխալ տեսությունը, ըստ որի՝ իբրև թե բառաբարդացման և նախադասության մեջ սումերերենում բայը միշտ դրվում է գոյականից հետո և առհասարակ նախադասության վերջում, ինչպես թյուրքերենում: Իսկ եթե հնարավոր այս – սկու ձևը կազմվել է <քնել-օթևանում> ձևով, սա արդեն հակաթյուրքերեն է, որի հետ մենք գործ չունենք:

4.Սումերերեն *giš* «տղամարդ», թրքերեն *Kişi* «մարդ արարած». - Սումերական համապատասխան մեհենագրի դիմ. *giš* բառը հիմնականում ունենալով «ծառ», «փայտ», «գավազան» իմաստները, էթնիկական *es, ez, is, iš, miš, niš* և

mu տարբերակներով, փոխաբերաբար, ինչպես սումերական, այնպես էլ ուրարտական արձանագրություններում գործ է ածվում «իշխանություն», «առնականություն», <պատիվ> և նման իմաստներով: Այս տեսակետից հետաքրքրական է բիայնական արձանագրությունների *giš uldi, giš rari, gištiu*, «ծառի տեսակներ» և սրանց հակադիր անձնանունների առջև դրվող ուղղահայաց *յ* սեպագիրը, որ սումերական միևնույն *giš*-ն է՝ «մեծ մարդ», «թագավոր», «ազնվական», մի խոսքով *գավազան* կամ *իշխանություն* ունեցող անձնավորություն, իմաստներով:

Հայերենում *giš* արմատն իր բարբառային *iš* տարբերակով հանդես է գալիս հայերեն գիշատ, գիշեր և վիշապ բառերի մեջ բաղադրված վիճակներով: Մրանք սղվել են անջատական *giš-at, giš-er, u-is-ap* ձևերից: Մրանցից *giš-at* նշանակել է «ծառ – կտրող», վնասատու: Այգեգործական հասկացություն է, որն հետագայում փոխադրվեց անասնապահության բնագավառն ու ստացավ «հոշոտող» իմաստը: *Giš-er* նշանակում է <ծառի հերոս> վերաբերվելով ծառի թշնամի կրծողներին ոչնչացնելու ժամանակին վիշապների կողմից: Իսկ *u-is-ap* բառացի նշանակում է «պտղատու – ծառի – պահապան», որ լրացնում է «գիշեր» բառի իմաստային կոնկրետությունը:

Սումերերեն *giš*-ին և թրքերեն *kişi*-ին համեմատել չի կարելի, որովհետև ցույց չի տրվում նրանց ծառ գաղափարից ծագելու և փոխաբերական գործածության անցնելու հանգամանքները: Բացի այդ, սումերերենում *kiši* ձևով մի շարք բառեր են հիշվում, որոնք վերաբերում են բուսական վնասատուների անվանումներին: Մեր կարծիքով թրքերեն *kiši* բառը կապված է «էգ» իմաստն ունեցող *diši* բառի հետ: Սրանց *si*-արմատները, պիտի ունեցած լինեն «մարդ» կամ «արարած»-ի նման մի իմաստ: *ki* ար-

1 / 73 2016

ՎԵՍՏ
ԱՐԿԵՐՈՒԹԵՆՆ

մատը պիտի նշանակեր «որձ», իսկ *di* արմատը՝ «էգ»: Այս հաշվով *kiši-*ն նախապես կարող է նշանակել «որձ – արարած», իսկ *diši-*ն «էգ արարած», մանավանդ որ ազբեյջաներենում այդ բառն հաճախ գործածվում է *ši* ձևով, ինչպես՝ *ai- ši* «այ մարդ»:

5. Սումերերեն *kia* «գետափ» և թրքերեն *kiyi*՝ «եզերք»: - Սումերերենում *չկա* *kia* ձևով բառ, որն ունենար «գետափ» իմաստը: Մարթայանն այն սարքել է սումերերեն *ki* «տեղ», «վայր», և *a* «ջուր» բառերի համադրանքով, որը կարող էր ստանալ «ջրի –տեղ», «ջրուտ» իմաստը, բայց ո՛չ «գետափ»: Մարթայանի այդ հարմարանքը, որին թյուրքերեն ասում են *ույդուրմա*, նպատակ է ունեցել *kiyi* բառին վերագրելու սումերական գոյությունն չունեցող ձևի մերձավորություն: Եթե սումերերեն ենթադրվող *kia* ձևն ընդունվեր որպես *kiyi* ձևի տարբերակ, դրան կմիանար նաև թրքերեն <եզերք> իմաստով *kenar* բառը: Սա, անշուշտ, լավ մտահղացում է, բայց ինչ է՝ կարծում կոմբինատորը. եթե <տեղ> և <եզերք> հասկացությունները չունեն իմաստային նույնական արժեքներ, արդյոք սումերերենում կա՞ն *yi* և *nar* ձևերով արմատներ, որոնք ունենային «ջուր» կամ «գետ» իմաստները. ո՛չ, այդպիսի արմատներ չկան ոչ թյուրքերենում, ոչ էլ սումերերենում: Հետևաբար, ձախողվեց սումերական արմատներով «գետափ» բառ հնարելու և նրա միջոցով թրքերեն *kiyi* –ն բացատրելու փորձը:

Բացի այդ, Մարթայանը չի բացատրում, թե զարգացման ինչպիսի հանգամանքներով է ենթադրվող <գետափ> հասկացությունը կորցրել իր իմատը և հանգել <եզերք> իմաստին, որը գործածվում է բոլոր գոյականների հետ, անկախ նրանց ջրի հետ ունեցած հարաբերություններից: Էլ չենք խոսում այն մասին, որ թյուրքերենում *kiyi* և *kenar* «եզերք» բառերը, ծագելով տարբեր հասկացություններից, պիտի ժամանա-

կին ունենային տարբեր որակի իմաստներ, որոնք այժմ չեն գիտակցվում: Թրքերեն *kiyi* «եզերք» բառը, որը համեմատվում է <գետափ> իմաստով *kia* ձևի հետ չի գործածվում նույնիսկ «ջուր» իմաստի հետ առնչվող գոյականների հետ: Օրինակ՝ թյուրքերենում չի ասվում *deniz kiyisi, irmak kiyisi*, այլ ասվում է՝ *deniz kenari, irmak kenari, göt kenari* և այլն:

Բավական չէ արհեստական ձևեր հնարելը, անհրաժեշտ է վերականգնվող բառերն հավաստել զարգացման հանգամանքներով և պատմության հետ ունեցած նվազագույն կապերով:

6. Սումերերենում *ugu* «ծնել» և թրքերեն *öge* «մայր». - Սումերական մեհենագրի դիմաց *ugu* բառը հանդես է գալիս էթնիկական *muh* տարբերակով, որոնց տրվում է *générateur, génératrice* իմաստները, որ թարգմանվում են «սերնազոր-ծողներ», «ծնողք», «ընտանիք»: Այս իմաստների շուրջ որոշ լույս է սփռում էթնիկական *muh* ձևը, որ հայերենի *մուխ* բառն է և *ծուխ* բառի հետ փոխաբերաբար տրվում է «ընտանիք», «օջախ», «համայնք» հասկացություններին:

Սուք բառի «ընտանիք» և «համայնք» իմաստները, ծագում են, նրա «սնունդ» և «բնակավայր» նշանակող անջատական *u-gu* վիճակից, որ հասարակության նախնադարյան վիճակում նշանակել է «սնվելու վայր»: Սա էլ կապված է եղել որսորդական և ձկնորսական արդյունքների ռացիոնալ բաշխման սովորության հետ, երբ անհատորեն կամ խմբովին ձեռք բերված մսեղեն և բուսական սնունդը կենտրոնացվելիս է եղել տոհմապետի մոտ, որպեսզի այն բաշխվի համայնքի անդամների միջև հավասար բաժիններով՝ ըստ հասակի և տարիքի: Նայած տոհմի զարգացման աստիճանի տարբեր պայմաններին, տոհմապետը, որ համարվել է համայնքի հոգևոր պետը

կամ *սերնդագործողը*, կարող էր լինել թե՛ կին, թե՛ տղամարդ:

Նախնադարյան ընտանիքի պայմաններում, երբ ծնվող յուրաքանչյուր երեխա գտնվել է համայնքի անմիջական հովանավորության տակ և երեխաները, որպես մայր ճանաչել են առաջին հերթին իրենց խնամող կանանց խմբին, անհատ կնոջ մայրությունը տևել է ոչ ավելի քան 40 օր, որից հետո նա կվերադառնար իր հասարակական պարտականություններին:

Այսպիսին է անջատական ս-ցու բառի իմաստային հարաբերությունը «մայր» բառի մեր արդի հասկացության նկատմամբ: Նորագույն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ հայերեն *հայր*, *մայր*, *քույր*, *եղբայր* բառերը, որոնք արհեստական կապերի մեջ են դրվում հնդեվրոպական ենթադրվող նախաձևերի հետ, անջատական վիճակի բովանդակություններով այնքան հեռու են նրանց արդի իմաստներից, որ չունեն նույնիսկ ազգակցական-արենակցական որևէ նշանակություն:

Մարթայանի կողմից նշվող սցու բառը <ծնանալ> իմաստով, չկա սումերերենում, որպեսզի այն համեմատվեր թյուրքերենի ինչ-որ բարբառում թաքնված *öge* «մայր» բառի հետ, որից իբրև թե առաջացել է *öksüz* ձևով «որք» բառը: Հենց Մարթայանի այն վկայակոչումը, թե՛ թրքագետ Ռադլոֆը *öge* բառը համեմատել է ուլդուրական <ոգի> նշանակող *ok* բառի հետ, ինքնին վերացնում է նրանց առնչությունը սումերերեն սցու բառի հետ: Զեկուցողը, որ շարունակ ակնարկում է թյուրք լեզվի նախապատմությունը, չի բացատրում, թե զարգացման որպիսի հանգամանքներով է սումերերեն սցու-ն թյուրքերենում դարձել է *öge*: Ինչու, ինչ պատճառներով սումերական բառի երկու ս-երից մեկը թյուրքերենի *öge* բառի մեջ վերածվել է *ö*-ի, իսկ մյուսը՝ *e*-ի: Համեմատու-

թյան ընթացքում Մարթայանը չի բացատրում գոնե այն որակական տարբերությունը, որ կա <մայր> հասկացողության նախնական և արդի պատկերացումների միջև: Չէ՞ որ սումերերեն սցու և թրքերեն *öge* հասկացողությունների միջև ընկած է 6 հազար տարվա միջանկյալ մի ժամանակաշրջան, որի ընթացքում թյուրքերենն ապրած պիտի լիներ անսահման զարգացում: Այդ զարգացումը չի երևում Մարթայանի և առհասարակ թյուրք լեզվաբանների դատողություններում և թյուրքերենին վերագրվող «կուլտուրական» էքզանսիայի բարձրաբարբառ հավակնություններում:

Զեկուցման ժամանակ Մարթայանը բերում է հնդեվրոպական լեզուներում «կատու» նշանակությամբ բոլոր բառերն ու նրանց ծագեցնում է, ինչպես ինքն է ասում, «ալպյան թյուրքերենի» *kedi* բառից:

Կատուն սումերական արմատներով բացատրվող բառ է, որի բաղկացուցիչ արմատներով հայերենում կազմված են մի շարք մասնագիտական բառեր:

Սումերերեն *kat*-ը նշանակում է «բուրդ», «բրդեղեն գործվածք» իսկ ս-ն - «պահապան», «հսկիչ», որով հայերեն *katu* բառացի նշանակել է «գործվածքեղենի հսկիչ»: Այս հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, որ մկները սովորություն ունեն ամեն ամիս ձագ տալուց առաջ բրդից կամ աղվամազից փափուկ բույն պատրաստել իրենց ձագերի համար: Փոխանակ այն պատրաստելու չնշանակված բրդի մալանչներից, որոնք դժվարությամբ են ձևավորվում, մկները նախընտրում են գործ ունենալ գործված փափուկ կերպասների հետ, որոնց զգգգում են ժանիքներով և մաս առ մաս նրանց սանրվածքից կերտում իրենց բները: Այդ պատճառով հնում քարավանային առևտրականները կատուներ են մանածել իրենց հետ՝ պաշտպանելու

համար գործվածքեղեն ապրանքը իջևանների մկներից:

Սումերական և սուբարական առևտրականները, որոնք չինական և եգիպտական գործվածքները հասցնում էին եվրոպական և ասիական երկրներ, իրենց հետ աշխարհով մեկ տարածեցին Չինաստանի բրդոտ և Նուբիայի կարճամազ կատվի տեսակները:

Հայաստանի Բիսյնական թագավորության և Չինաստանի միջև կատարվող գործվածքեղենի առևտրի հետևանք է Վանի բրդոտ կատուն, որ բերվել է չինական հայրենիքից: Որ գործվածքեղենի առևտրի հետ սերտորեն կապված է եղել Հայասան և ինքն արտադրել է արևելյան և արևմտյան շուկաներում վաճառվող ապրանքների ամենանուրբ տեսակները, վկայում է, հայերեն *կտառ* բառը՝ անջատական *kat-a-u* սումերական արմատներով բառացի նշանակելով «գործվածք – գառան – բրդից»: Թյուրք ջարդարարների կողմից ամայացված հայկական նահանգներում զարգացման բարձր մակարդակի վրա էր գտնվում գործվածքեղենի արտադրությունը, կապված ներքին և արտաքին շուկաների հետ: Այդ մասին են վկայում ոչ միայն հայերի մեջ տարածված կատվապաշտությունը, այլև հայերեն *գործ, գործել, գործեք, գորգ, զգեստ, կարպետ, ճեճիմ* և նման բառերի ծագումը սումերա-սուբարական արմատներով բացատրվող անջատական վիճակի հասկացություններից:

Այնպես որ, «կատու» բառի ծագումն ու տարածումը սերտորեն կապված է գործվածքեղենի արտադրության և առևտրի գործունեության հետ: [Իսկ] թյուրքերեն *kesi* բառը փոխառություն է տարբեր լեզուներից և կապ չունի գործվածքեղենի թրքական արտադրության հետ:

Որպես սումերերենի և թյուրքերենի

ազգակցական առնչության ապացույց՝ Մարթայանը նշել է երկու լեզուներին վերագրվող կցական վիճակը: Բերելով սումերական «առավոտ» նշանակող *aguziqa* բառի բաղադրական վիճակի կազմությունը արմատական *a-qu-ziq* բառերով, որ սխալ է և պետք է լինի չորս արմատներով *a-qu-zi-qa*, այն համեմատվում է թրքերեն -----³ «-----»⁴ բառի կազմախոսության հետ: Պարզվում է, որ Մարթայանը պարզ պատկերացում չունի լեզվական տարբեր կառուցվածքների մասին:

Երբ մենք վերցնում ենք *a-qu-zi-qa* ձևը, որ արմատական կամ նախնական բառերի մեկուսի ձևով հանդես եկող միատեսակ անջատական վիճակի նախադասություն է, որ ունի «հեծյալ – ռազմիկ – լծասարք – առաջացում» նշանակությունը, այստեղ չկա քերականական ոչ մի մասնիկ, և նայած նախադասության ընդհանուր բովանդակության՝ բառերն ունեն գոյականական, բայական, ածականական և այլ իմաստներ և քերականական հարաբերություններն հասկացվում են լռելյան: Այնպես որ *a-qu-zi-qa*-ն կարդալով պիտի հասկանանք «հեծյալ – ռազմիկի – լծասարքի – առաջացում»: Այս նախադասությունը վերաբերում է մի հասկացողության, որով ցույց է տրվում արևի ծագման դիցաբանական պատկերացումը հեծյալ ռազմիկի հերոսական կերպարանքով: Բավական է պատմության դասագրքերում դիտել հին Հունաստանի արև աստծու՝ Հելիոսի նկարը կանգնած, հրեղեն ձիեր լծած երկանիվի վրա, որպեսզի հասկանանք սումերերեն *a-qu-zi-qa* նախադասության իմաստը:

Երբ հասարակության զարգացմանը զուգընթաց աղոտացել է այդ նախադասության ներքին իմաստը, բառն ստացել է բաղադրված *aguziqa* ձևը, ուր

³ Անընթերցելի բառ

⁴ Անընթերցելի բառ

առանձին արմատներն ու նրանց իմաստները, բաղադրվելով, առաջացրել են նոր որակի բառը՝ «առավոտ» իմաստով: Մա լեզվի բաղադրական վիճակն է, որի ընթացքում առաջացել են քերականական մասնիկներին նախորդող այն բառերը, որոնք իրենց իմաստներով կատարում են քերականական մասնիկների դեր: Այսպես օրինակ՝ *aquziqame* «առավոտ – շուտ» կամ մեր հասկացողությամբ՝ *առավոտներ*:

Ահա բաղադրական այս պարզ վիճակում է գտնվում սուվերբները, որից անցել են բազմաթիվ լեզուներ և հատկապես հայերենը, որն իր բաղադրված բառերի արմատներով և անջատական վիճակներով սերտորեն կապված է մնում սուվերա-սուբարական լեզուների հետ: Մենք ասացինք «բաղադրական պարզ վիճակ», նրա համար, որ հասկացության պարբերական փոփոխությունների ընթացքում լեզվական բաղադրությունները գնալով սղվում են ստանալով հետզհետե սեղմ և դինամիկ ձևերի հետ հնչյունական նորանոր կերպարանքներ, որոնք չեն եղել լեզուների նախնական վիճակներում: Սղման այդպիսի եղանակով է առաջացել հայերենի «Ք» - հնչյունը, որի օրինակը տրվեց «քուն» բառին նախորդող անջատական *uku-nu* վիճակի սղման ընթացքով: Ըստ որի, հասկացողությունը *uku-nu* ձևից անցել է միջանկյալ *kunu* - ձևից, որ երևան է գալիս գրաբարում սեռական հոլովի *kunoy* (քնոյ) ձևում, սղվելով նախագրաբարյան *kunu-i* ձևից:

Ինչո՞վ է տարբերվում լեզվի կցական սիստեմը բաղադրական սիստեմից: Անջատական վիճակից հետո նրա բաղադրական վիճակում լեզուն զարգանում է արմատական ձևերի և նրանց իմաստների աստիճանական տարբալուծման ճանապարհով, որի ընթացքում պարբերաբար առաջանում են իմաս-

տային բոլորովին նոր որակի բառեր և հնչյուններ:

Մրան հակառակ, կցական ձևին անցնելիս լեզուն պահում է անջատական վիճակի հիմնական հատկանիշը հանդիսացող բառերի արմատական ձևերը և նրանցով ստեղծում մասնիկների և օժանդակ բառերի մի բարդ մեխանիզմ: Արտահայտելու համար որևէ հասարակ միտք, համապատասխան արմատի վրա ավելացվում են մասնիկների և օժանդակ բառերի ամբողջ խմբեր:

Խոսելով լեզվի կցական վիճակի մասին, պրոֆ. Ն. Աճառյանը այսպես է բնորոշում նրա էությունը. «Այստեղ ... յուրաքանչյուր արմատի վրա դրված ենք տեսնում այլևայլ մասնիկներ, որոնք որոշում են ընդհանուր գաղափարի մասնավոր պարագաները և առարկաների միջև եղած առնչությունները»⁵: Որպես հատկանշական օրինակ թուրքերենի անջատականության, պրոֆ. Աճառյանը բերում է հետևյալ նախադասությունը.

sev-in-dir-il-e-bil-e-me-mis ol-sa-θdθ-m

«Եթե հրձվել տրվելու կարողացած եղած չլինեի»:

Մա կցականության հատկանիշն է, ուր բացի *sev*, *bil*, *ol* արմատներից, մնացած տասը մասերը մասնիկներ են, զուրկ ներքին իմաստներից: Մարթայանի բերած *a-qu-zi-qa* օրինակը, ուր գիտակցվում են բոլոր արմատների իմաստներն ու նրանցով կազմված նախադասության բովանդակությունը, ուր չկա քերականական որևէ մասնիկ, վերաբերում է լեզվի անջատական վիճակին, որ համեմատել չի կարելի արդի թուրքերենի ձևաբանության հետ, այնպիսի պայմաններում, երբ նրանց բաժանում է 6 հազար տարվա մի ժամանակամիջոց: Սուվերբերենը իր նախամասնիկներով և ետնամասնիկ-

⁵ Պրոֆ. Ն. Աճառյան- Ներածություն հայոց լեզվի լիակատար քերականությամբ. Էջ 211

ներով հանդերձ չունի կցականության թրթրական հատկանիշը, որը բուրոսվի ն տարբեր վիճակ է ներկայացնում:

Մարթայանն ու թուրք լեզվաբանները, որոնք թյուրքերենի կցական վիճակը դրոշ են դարձրել ի խնդիր կուլտուրական էթանագին նվաճումների և ռասայական սնափառության, չեն կարողանում ըմբռնել, որ լեզվի ձևաբանական վիճակը մնայուն դրություն չէ, որպեսզի այն դառնար ցեղային պատկանելիության հատկանիշ: Խոսելով լեզվական վիճակների փոփոխականության մասին, պրոֆ. Աճառյանը հետևյալն է ասում՝

«Լեզվի հնախոսության տեսակետից դատելով, անջատականությունը նրա նախնական վիճակի արտահայտությունն է, կցականությունը՝ ներկայացնում է միջին վիճակը, իսկ թեքականությունը՝ բարձրագույն շրջանն է:

Բայց, դատելով լեզվի կենսաբանության տեսակետից՝ այս բնորոշումները դուրս են գալիս սխալ, քանի որ տեսնում ենք, թե անապատի անգրագետ քոչվոր արաբները խոսում են աշխարհիս գերագույն թեքական լեզվով, որ թեքականությամբ գերագանցում է նույնիսկ Պերիկլեսի դարի հունարենը, մինչդեռ անգլիացիք խոսում են մի լեզվով, որ անջատական է: Պետք է ասենք, ուրեմն, որ լեզվի հիշյալ երեք վիճակները պարզապես նրա աճման տարբեր երևույթներն են՝ մեքենաբար առաջացած մեկը մյուսից և ուրիշ ոչինչ»⁶:

Յույց տալու համար լեզվական տարբեր վիճակների փոփոխական բնույթը, պրոֆ. Աճառյանը տարբեր լեզուներից բերում է բազմաթիվ օրինակներ, թե ինչպես թեքական կոչվող լեզուներում ծնունդ են առնում կցականության երևույթներ, մինչդեռ կցական տուգուսերենի մի բարբառում

նկատվում է ուժեղ ձգտում դեպի թեքական ձևերը:

Այսպես, առանց պարզ պատկերացում ունենալու լեզվական ձևերի և նրանց հատկությունների մասին, Մարթայանի հնեաբանությունը իրար է խառնում սանակրիտի, սումերերենի, իռլանդերենի, հաթերենի, թյուրքերենի և ընդամենը 50 բառով գիտությանը ծանոթ կոսայերենը և այլ լեզուների բառային և քերականական բեկորների հնչյունները, ապացուցելու համար, որ Եվրոպայում գոյություն է ունեցել «Ալպ» կոչվող մի թրթրական ցեղախումբ, որ իր «կուլտուրայի» ճառագայթներն է տարածել միջին Ասիայից մինչև Գանգես, մինչև Եփրատ, Տիգրիս, մինչև Վոլգա ու Դանուբ, մինչև այն «կավճային սպիտակ» կղզիները, որն այժմ կոչվում է Անգլիա...

Թյուրքերեն լեզվի ծանոթ համագումարից հետո ավելի ևս կատարելագործվեցին թյուրքերի հնեաբանական հնարքները [թյուրքերենին տալով] güneş-dili «արևային-լեզու» անունը: Սրա հիմքում ընկած է «սպիտակ» նշանակող թրքերեն ak բառը, որն իբր «սումերական թյուրքերենում» ունի «արև» իմաստը: Այնինչ, սումերերենում <արև> իմաստով ak չկա, էթե մենք բառն ընդունենք որպես կոնկրետ հասկացություն, որին չի կարելի ծռել-ծռոնել կպցնելով նրան մեր ցանկացած բովանդակությունը: Համենայն դեպս, երբ թյուրք լեզվաբանները կարողացան նույնացնել «սպիտակ» և «արև» իմաստները, այն ժամանակ հայտնի դարձավ ak բառի հրաշագործ կարողությունը: Նա սկսեց թյուրք լեզվաբանությանը ծառայել որպես մի կախարդական գորգ, որի վրա նստած մարդկանց երևակայությամբ սկսեց սավառնել ցանկացած ուղղությամբ: Այսպես:

Ак բառով կազմված բառեր կան

⁶ Պրոֆ. Ն. Աճառյան - Ներածություն հայոց լեզվի լիակատար քերականության. Էջ 208

սլավոնական լեզուներում: - Դա «ապացույց» է թրքական հնագույն կուլտուրայի ազդեցության: Ak բառով բազմաթիվ բառեր են հայտնաբերվել լատինական և անգլո-սաքսոնական լեզուներում - դրանք կելտեր կոչվող «թյուրքերի» լեզվից են վերցված: Ak –ով կազմված բառեր կան իրանական լեզուներում, - ո՞ւմ հայտնի չէ⁶, որ դրանք վերցվել են «սումերական թյուրքերենից», քանի որ Մարթայանը քննականորեն հաստատել է սումեր և սանսկրիտ անունների նույնությունը «հնչյունափոխական օրենքներով»: Ak բառով կազմված բառեր կան հին հունարենում, - հայտնի բան է, որ դրանք վերցված են *հիթիթ* (հեթիթ) կոչվող «թյուրքերի» լեզվից: Եվ վերջապես, 1935 թվականին մի թյուրք «լեզվաբան», որ կոչվում է Յահյա իլու, «Զյումհյուրիյեթ» թերթի էջերից այդ հրաշագործ ak-ը տարածեց նաև Խորենացու առաջին գրքի դիցաբանական անձնանունների վրա: Նրա ասելով՝ «Մ. Խորենացին, որ լավ գիտեր Բաբելոնի թյուրքերի պատմությունը, գրել է. «Հայերի նախահայրն հանդիսացող Հայկի մասին, որ բաբելոնացի մի թյուրք էր: Մա իր Արմեն-ak, այսինքն Արմեն-արև կամ պարզապես՝ Արմեն-թյուրք որդու հետ գաղթել եկել է Ուրարտու կամ Օրդու կոչված «թրքական երկիրը»...⁶: Ռասսայական այսպիսի ոճով բարբաջելուց հետո, Յահյա իլու կոչեցյալը եզրակացնում է, որ «Հայաստան» կոչվածը եղել է «մի հնագույն թրքական երկիր», որը իբր թե իլել են դրսից եկած հնդեվրոպացի հայերը:

Քանի որ այսպիսի անհեթեթություններն ասվում են ak բառի հրաշագործ կարողությամբ, անհրաժեշտ է երկու խոսք ասել ak մասով վերջացող այն բառերի մասին, որոնց վրա սրվել է թյուրք «լեզվաբանի»

քաղաքական ախորժակը: Սումերերենում նշվող ak արմատը, որը սերտորեն առնչվում է հայերենի մի շարք անձնանունների և բառերի հետ, ունի ոչ թե «արև», «լույս», «առավոտ» և «սպիտակ» իմաստները, այլ վերաբերում է տումարական և դիցաբանական բովանդակությամբ «լուսատուների – շրջան» հասկացությանը:

Հնում ak արմատով կազմված են եղել hai-ak, ara-mani-ak, arig-ak, arusi-ak, arbani-ak, sini-ak, lu-sini-ak, sin-anak անջատական ձևերը, որոնք սղվելով հանգել են հայերեն Հայկ, Արամանյակ, արեգակ, արուսեակ, արբանյակ, սենյակ, լուսնյակ և սնանկ բառերին: Տանք դրանց բացատրությունները.

1. Հայկ. - ըստ VII դարի աստղագետ - տումարագետ Անանիա Շիրակացու վկայության Հայակ կամ սղված ձևով՝ Հայկը, որպես աստեղային դիցաբանության ներկայացուցիչ՝ ներկայացված է եղել Օրիոն համաստեղությամբ: Եթե նկատի ունենանք, որ դիցաբանական հերոսի անվան անջատական ձևը հայ-ակ է, որի առաջին արմատով կոչվել է մեր ժողովուրդը, նա բառացի նշանակել է «Օրիոնի շրջան», որպիսին վերաբերվել է հին հայերի տումարական հասկացողությանը: Այսպիսով, համաստեղության բուն անունը եղել է հայ, իսկ նրա տարեկան շրջանը աստեղային տումարում՝ հայ-ակ, որից սղվել է դիցաբանական անձնավորությամբ Հայկ անունը:

2. Արամանյակ - անունն է դիցաբանական գույզ հերոսների, որի բարդության Արա-Մանի - ակ ձևն ունի «արշավող – գույզի – շրջան»: Վերաբերվել է Հրատ և Լուսնթագ (Մարս և Յուպիտեր) մոլորակների շրջանին: Հայկական դիցաբանության մեջ սրանք ներկայացրել են Վահագնը և Արամագը: Արամանյակ գույզի շրջանը հին

⁶ Անընթեռնելի բառ

Հայաստանում ծառայել է տոմարական և աստղագուշակային նպատակների համար:

3.Արուսյակ - անունն է Հայաստանի Աստղիկ կամ Վեներա մոլորակի: Բարդության արուսի-ակ վիճակում ունի «արուսի-շրջան» իմաստը, որ նշանակում է «ամուսնության շրջան»: Ծառայել է տոմարական հաշվումների:

4.Արքայակ - Լուսին աստվածուհու անունն է: Բարդության ար-բանի-ակ վիճակում ունի «մաքուր - ծննդաբերության - շրջան» իմաստը, որ վերաբերվել է լուսնի 9 ամսյա շրջանին: Սրանով է որոշվել կանանց հղության ճիշտ ժամանակաշրջանը, որ հավասար է 9 ամսից 9 օր պակաս:

5.Արեգակ- արևի անուններից մեկն է հայերենում, որի անջատական արիգ-ակ ձևում նշանակել է «արեգի-շրջան»: Վերաբերվել է արևի թվացող օրական պտույտին, որ համարժեք է 24 ժամվա տևողության:

6.Մենյակ - անունն է հնագույն հայերի լուսնական տոմարի առաջին շաբաթվա և որպես շրջան՝ լուսնի 6 օրյա պտույտին, որ որոշվում էր նրա աճող քառորդի փուլով: Բարդության սինի-ակ ձևում բառացի նշանակում է «սինի կամ լուսնի-շրջան»:

7.Լուսնյակ - լուսնական տոմարի երկրորդ շաբաթվա անունն է: Բարդության լու-սինի-ակ վիճակում բառացի նշանակում «մեծ - սինի - շրջան», որ լուսնական տոմարով հավասար է լուսնի 12 օրվա շրջանին, որը որոշվում է նրա օվալային փուլով:

8.Սինանակ-անունն է լուսնական տոմարի հինգերորդ շաբաթվա: Բարդության սին - անակ ձևը կազմված է հայերենի ժխտական առ մասնիկով, որ բառացի նշանակում է «սին - անշրջան»: Վերաբերվել է նորալուսնի այն փուլին, երբ [այն] չի երևում 4 օրով: Սրանից է առաջացել հայերենի *սնանկ* բառը:

Սրանք են այն հայերեն բառերը,

որոնց armen-ak «արմեն - արև» - «արմեն -թյուրք» ստուգաբանության նմանությամբ թրքացնելու փորձը ձախողվեց ցույց տալով güneş-dil-ի աղջամուղ-ջային սև կերպարանքը: Բայց ռասսայական հետազարանության համար դրությունը այնքան էլ հուսահատական չէ, քանի որ ak և aq բառամասերով սկսվող և վերջացող հայերեն բառերի քանակը զգալիորեն շատ է, որոնց եթե տրվեր թուրքերեն բառի «սպիտակ» իմաստը, Յահյա և Մարթայան էֆենտիների ստուգաբանությունները մեծ հաճույք կպատճառեին իրենց տերերին: Այսպես՝ օրինակ,

հայերեն ագռավ = «սպիտակ ռավ» որ մի ժամանակ՝ հայտնի չէ «թրքո - եվրոպական» որ բարբառում նշանակած կլինի «սպիտակ - թոչուն», կապված՝ արևի հետ:

հայերեն ակոռ = «սպիտակ - ռա» կամ «արևի - ճառագայթաձև ատամ», որ կապ կունենա «թրքական ծագում» ունեցող եգիպտական արևի աստված Ռա-ի հետ:

Ակադեմիա = «սպիտակ - մարդկանց - խումբ», որ կապ կարող է ունենալ «արևի նման լույս տվող մարդիկ» իմաստի հետ: Մի բառ, որն ըստ երևույթին «թրքո -եվրոպական» թուրքերից փոխ են առել հին հույներն ու լատիները:

Այժմ այդ արեգակնային ak-ը տեղափոխենք հայերեն էջ բառի վրա, որ կստացվի թրքերեն՝ eşâk: Ըստ երևույթին սա պիտի նշանակի «սպիտակ - էջ», որ Համադանում շատ կա, կամ «արեգակնային հրեղեն - էջ», որ դարձած կլինի պաշտամունքի առարկա: Սրանից պիտի ծագած լինի հայերենի ավանակ բառը, որ պիտի նշանակեր «սպիտակ - էջ», եթե ոչ՝ «արեգակնային - էջ» կամ «էջ - աստված», որովհետև թյուրքերի քոչվոր նախնիների մոտ բեռնակիր կենդանին նույնքան հարգի կլինի, որքան կատուն հայերի մոտ՝

գործվածքեղենի արտադրության և վաճառահանման կապակցությամբ:

Այս է Մարթայանի և Յահյա իլուի ստուգաբանության էությունը:

Ի՞նչ նպատակ է հետապնդում «պատմա - համեմատական և հնէաբանական» անունը կրող Մարթայանի և նրա ընկերների սydurmasyon բառախաղերը, որ իրար է խառնում ազնվականը, վիշապը, կավիճը, բարձր սարը, սպիտակը և արևը, որպեսզի Միջին - Ասիայից գաղթող երեկվա քոչվորների վերագրե համաշխարհային կուլտուրայի մեծագույն նվաճումները:

Օգտագործելով արևմտաեվրոպական և հատկապես անգլո-ամերիկյան հեղինակների յուրաքանչյուր միտումնավոր կարծիք, թյուրք լեզվաբաններն ու բանասերները մորթից դուրս են գալիս ապացուցելու, որ արդի օսմանյան թյուրքերը ոչ թե երեկվա քոչվորներից են, այլ իբր հանդիսանում են ուղիղ ժառանգները Մերձավոր Արևելքում ծաղկած սումերական, հաթական և ուրարտական հնագույն կուլտուրաների: Եթե մինչև 1933 թվականը թյուրքերենը համարվել է Ալթայան լեզուների ընտանիքին պատկանող անդամ, որի մեջ մտել են մոնղոլերենն ու տուրքուսերենը, այժմ այն համարվում է «թրքո - եվրոպական» և նույնիսկ <հնդեվրոպական> լեզու, առանց հրաժարվելու միջին - ասիական լեզուների ազգակցության գաղափարից, որի մեջ դրվում է ռասսայական և մեծապետական հավակնությունների հիվանդագին բովանդակություն:

Ելնելով նման տրամադրություններից, թյուրք լեզվաբաններն ու բանասերները թյուրք ցեղին են վերագրում այնպիսի բարձր կուլտուրա, որից, իբր, օգտվել են ոչ միայն հնդեվրոպական և սեմիտական լեզուներով խոսող ժողովուրդները, այլև հնագույն կուլտուրայի կրող չինացիները՝ որոնք իբր թե, թյուրքերից, սովորել են տպագրության արվեստը և վառողի գյուտը:

Զարմանալին այն է, որ համագումարում բոլոր այդ իմաստակությունները կարդացվել են այնպիսի թյուրքերենով որի 80 տոկոսը կազմում են արաբերեն և պարսկերեն բառեր: Այդ լեզուն այժմ ընդունել է այնպիսի մի վիճակ, որին հեշտությամբ կարելի էր անվանել պարսկախառն արաբերենի բարբառ, եթե չլիներ նրա քերականության կցական ձևը: Հնագույն կուլտուրայի տեր չինացիներին տպագրություն սովորեցնել հավակնող թյուրքերը՝ տպարան, դպրություն, գիր, գրականություն, գիրք, դպրոց, ուսում, գիտության, արվեստ, քաղաքակրթություն այլև առօրյա խոսակցական տասնյակ հազարավոր բառեր վերցրել են պարսկերենից և արաբերենից:

Թյուրք լեզվի առաջին համագումարից ներս, անցած մոտ երեք տասնամյակում լեզվի և պատմության ֆալսիֆիկացիոն կուրսը հասել է իր մոլեգնության աստիճանին: Փոխանակ բարելավելու թյուրք աշխատավորության օրավոր վատթարացող նյութական պայմանները, թյուրք բուրժուազիայի և կալվածատերերի գրչակները աշխատում են մի կողմից ռասսայական շովինիզմի թմբիթով քնացնել նրա զարթնող դասակարգային գիտակցությանը, իսկ մյուս կողմից միջոցներ են որոնում աշխատավորական ոչ թյուրք մասսաների նկատմամբ գործադրվող անցյալի արյունալի դատաստաններն ու ինչքի և տերիտորիանների կողոպուտներն արդարացնելու, այսպես կոչված «կուլտուր-պատմական» մոտիվներով:

Բայց որովհետև այդ բոլորը կատարվում է արդի լեզվաբանության մեթոդների համարձակ սպեկուլյացիաներով, արժի նորից և նորից անդրադառնալ թյուրք լեզվաբանության և բանասիրության մեթոդներին, ելնելով սովետական գիտության և թյուրք աշխատավորության ամենակենսական շահերից:

«ԹԵ ԻՆՉԵՐ ԵՆ ՀՆԱՐՈՒՄ ԹՈՒՐՔ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐԸ»

ԵՂԻԱ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ ՄՈՍՁՅԱԼ
Հնագետ, լեզվաբան, շումերագետ,

ԱՄՓՈՓՈՒՄ

Եղիա Մոսջյանի սույն քննադատական հոդվածն ուղղված է «պատմալեզվաշինարար», իրականում՝ կեղծարար, թուրք լեզվաբանների և լեզվի պատմաբան, ժամանակին թուրք լեզվաբանների միության գլխավոր մասնագետ Հակոբ Մարթայանի «թեզիսների» դեմ: Հոդվածը ոչնչացնող կրակի տակ է առնում հատկապես վերջինիս *թուրք, սումեր և հնդեվրոպական լեզուների կապերի* հավակնոտ դիտարկումները: Մարթայանը կարծիք էր հայտնել, որ թուրքերենը հնագույն կապերի մեջ է գտնվում սումերերենի, սանսկրիտ և կելտական լեզուների, ըստ իրեն՝ «ալպյան» կամ «թուրք-եվրոպական» լեզուների հետ: Թուրքերի կեղծարարական սայլին լծված, Մարթայանը կելտական լեզուներին վերագրել է թուրքական ծագում և այդտեղից էլ «բխեցրել» alpes-բարձր լեռ իմաստը: Դրա հետ է կապել նաև albus-ը, որից էլ

դուրս է բերել Albion-ը: Մոսջյանը ցույց է տալիս, որ Մարթայանը, բերելով սումերերեն ու թուրքերեն բառերի «համեմատական» մի ցուցակ, իրականում աճպարարություն է անում, չի բացահայտում այդ բառերի մերձավորության հիմքերը չի ելնում բառերի զարգացման պատմականությունից, սոցիալ-տնտեսական, մշակութային կապերի առնչություններից: Քննադատությունն արժեքավոր է նաև այն առումով, որ բացահայտում է կատարված կեղծիքների բուն նպատակը՝ «...եկվոր քոչվորներին վերագրել համաշխարհային կուլտուրայի մեծագույն նվաճումները»:

Բանալի բառեր. Թե ինչեր են հնարում թուրք լեզվաբանները, Եղիա Մոսջյան, Մարթայան, թուրք լեզվաբաններ, թուրքերեն:

“О ТОМ, ЧТО ВЫДУМЫВАЮТ ТУРЕЦКИЕ ЯЗЫКОВЕДЫ”

ЕГИА ОГАННЕСОВИЧ МОМДЖЯН

Археолог, языковед, шумеровед

“WHAT TURKISH LINGUISTS ARE INVENTING”

YEGHIA HOVHANNES MOMJYAN

Archeologist, Linguist, Sumer Scientist

РЕЗЮМЕ

Данная критическая статья Егиа Момджяна, направлена против турецких языковедов-фальсификаторов. Статья выступает против “тезисов” главного специалиста турецких языковедов, историка Акопа Мартаяна. Статья подвергает резкой критике претенциозные наблюдения автора *по связям между турецким, шумерским и индоевропейскими языками*. Мартаян выразил мнение, что турецкий язык находится в древнейших связях с шумерским, санскритским и кельтскими языками, по его словам, “альпийскими” или “турецко-европейскими языками”. Мартаян приписывал кельтским языкам турецкое происхождение, и, отсюда, выводил смысл *alpes* – “высокая гора”, а также *albus* – *Albion*. Автор показывает, что Мартаян, приводя “сравнительный” список шумерских и турецких слов, на самом деле лукавит, не выявляет основы близости этих слов, не показывает корни этих слов в связке с историей, с социально-экономическими и культурными реалиями.

Критическая статья Момджяна выявляет истинные цели фальсификаций, - “...приписать величайшие достижения всемирной культуры пришельцам-кочевникам”.

Ключевые слова: О том, что выдумывают турецкие языковеды, Егиа Момджян, Мартаян, турецкие языковеды, турецкий язык.

SUMMARY

This critical article by Yeghia Momdjian, is against the “theses” of forgers, Turkish linguists and Hakob Martayan, who was a historian-linguist, ex-chief specialist of Union of Turkish linguists.

The article denies Martayan’s ambitious observations on *the links between Turkish, Sumerian and Indo-European languages*.

Martayan expressed an opinion that the Turkish language has ancient ties with Sanskrit, Sumerian and Celtic languages. Serving the Turkish falsifiers Martayan ascribed Turkish origin to Celtic languages and “derived” from it the word “Alpes” meaning high mountain. He also connected the words “Albus” and hence “Albion” with it. Momjyan showed that by making a “comparative” list of Sumerian and Turkish words, Martayan is doing a trick: he does not reveal the roots of the closeness of those words he does not refer to the historical development of words, the social-economic and cultural ties. Momjyan’s criticism is valuable also because it reveals the key aim of these falsifications “... To ascribe the greatest achievements of the world culture to the nomadic newcomers.”

Key words: What Turkish Linguists are Inventing, Yeghia Momdjian, Martayan, Turkish Linguists, Turkish Language.

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ավելի քան 100 տարի առաջ, 1914թ. օգոստոսին բռնկված համաշխարհային պատերազմը նոր ժամանակների պատմության խոշորագույն իրադարձություններից է, վիթխարի ազդեցություն է գործել մարդկության հետագա ընթացքի վրա, անգամ այսօրվա բազում հիմնահարցերի արմատներ հենց այնտեղ պիտի փնտրել: Երկու հակադիր ռազմաքաղաքական խմբավորումների՝ Անտանտի (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) և Բալկանյան դաշինքի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բուլղարիա, Թուրքիա) միջև եղած հակասությունների հետևանքով բռնկված պատերազմը սուր խոփի նման անցել է բազում ժողովուրդների, նրանց թվում և հայոց ճակատագրի վրայով: Պատերազմն իր ոլորապտույտի մեջ է ներքաշել 38 պետություն, 74 մլն զինվոր ու սպա, սպանվել է 10 մլն, վիրավորվել և հաշմանդամ է դարձել 20 մլն մարդ: Միայն Վերդենյան հանրահայտ «մսադաջը»՝ ֆրանսիական այդ բնակավայրի համար ճակատամարտը, իսկ է շուրջ 1 մլն կյանք:

Աշխարհամարտն ահասարսուռ էր ինչպես ձեռնարկված ռազմական օպերացիաների, այնպես էլ նոր զինատեսակների, զանգվածային ոչնչացման միջոցների կիրառմամբ (տանկեր, ավիացիա, սուզանավեր, քիմիական զենք), ու նաև նոր ժամանակներում էթնիկ մաքրագարդումների՝ ցեղասպանության, հրեշավոր երևույթի առաջին դրսևորմամբ:

Աննախադեպ և ահռելի էին կոլոդ կողմերի կատարած ծախսերը: Եթե 1772-1913թթ. բոլոր պատերազմներում

ծախսվել էր շուրջ 6 մլրդ դոլար (1913թ. ոսկե դոլարի փոխարժեքով), ապա Առաջին աշխարհամարտը պետությունների վրա նստել է ավելի քան 80 մլրդ դոլար: Բոլորից շատ ծախսել է Մեծ Բրիտանիան՝ 24 մլրդ 143 մլն (երկրի հարստության 34,5 տոկոսը), Գերմանիայի ծախսերը կազմել են 19 մլրդ 894 մլն (24,7 տոկոս), ԱՄՆ, որ պատերազմի մեջ էր մտել միայն 1917թ. գարնանը, ծախսել է 17 մլրդ 300 մլն (8,8 տոկոս) դոլար:

Պատերազմը կլանել է գլխավոր կոլոդ կողմերի ազգային հարստության միջին հաշվով 1/3-ը, հողի երեսից ջնջվել կամ լուրջ ավերածությունների են ենթարկվել տասնյակ բնակավայրեր:

Համաշխարհային պատերազմը լուրջ փորձություն է եղել կոլոդ կողմերի, կառավարող շրջանների ու ժողովուրդների համար և առաջ է բերել սոցիալական ցնցումների վիթխարի ալիք: Ժողովրդական ելույթների լավան սրբել-տարել է երեք հետադիմական ռեժիմ՝ օսմանյան, ավստրո-հունգարական և ռուսաստանյան կայսրությունները: Հեղափոխական շարժումների ալիքները տարածվել են ամբողջ մայրցամաքներով, ուժգնորեն ճռճել տասնյակ երկրների հասարակական պետական կարգերը, ձևափոխել աշխարհի քաղաքական քարտեզն ու փոխել պետությունների միջև եղած ուժերի հարաբերակցությունը: Հոշակվել են նոր պետություններ՝ Հարավսլավիան, Հունգարիան, Ավստրիան, Հայաստանն ու Վրաստանը, առաջին անգամ պատմության թատերաբեմ է իջել կովկասյան թաթարների

“Ադրբեջան” հորջորջված պետությունը:

Այս ամենը դրել են նաև գաղութային համակարգի փլուզման հիմքերը:

Մարդկության առաջադեմ միտքը պատերազմի ավերածությունների ազդեցության տակ փորձել է գտնել միջպետական հարաբերությունների կարգավորման ու հակասությունների կառավարման ճանապարհներ, և այդ իսկ նպատակներով հիմնադրել է Ազգերի լիգան՝ ներկայիս ՄԱԿ-ի նախատիպը: Նրա շրջանակներում ձեռնարկվել են փորձեր՝ ստեղծելու միջպետական հարաբերությունները կարգավորելու համար համապատասխան ենթակառուցյուններ:

Տարափեղկված Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև, հայ ժողովուրդն այս պատերազմին պաշտոնապես չէր մասնակցում, սակայն այն առավել ծանր է անդրադարձել հենց մեր ժողովրդի ճակատագրին. երիտթուրքերի մշակած (Մալոնիկ 1911թ.) և գործողության մեջ դրված (1914թ.-ից) ծրագրով հայությունը շուրջ 800.000 քառակուսի կմ ընդգրկող տարածքի վրա ենթարկվել է ցեղասպանության, նրա մեծածավալ մի հատվածը՝ արևմտահայությունը, հայրենագրկվել ու կողոպտվել է, առաջացել է Յրոնք՝ հայկական սփյուռքի իրողությունը: Ցեղասպանության զոհերի ժառանգները, գրկված սեփական բազմադարյան հայրենիքում ապրելու իրավունքից, գաղթօջախներ են ստեղծել աշխարհի շուրջ 80 երկրներում:

Այս ամենով հանդերձ, երբ ցեղասպան պետությունը՝ Թուրքիան, չի ընդունում իր մեղքը (հանցագործությունը պետականորեն մշակված ծրագիր էր) և փորձում է խուսափել պատասխանատվությունից ու երևալ եվրոպացի, ուշադրություն է գրավում և առաջին պլան մղվում հայության հետ կապված ևս մեկ, ըստ մեզ՝ ռեալ գնահատականի արժանի հիմնահարց.

Դա պատերազմին պաշտոնապես չմասնակցող մեր ժողովրդի մաքառման և ազատատենչ ոգու դրսևորման իրողությունն է, ինքսհարգանքի ու ինքնապաշտպանության ծավալման ձևերն ու հանգամանքներն են, հայության պայքարի վերածվելն է Աշխարհամարտի ճակատներում ոչ պակաս ազդեցիկ գործոնի:

Պատերազմի մեջ ներքաշվելով ակամա, ի հեճուկս իր ճակատագրին, ողբերգական պատմությունն արտացոլող սահմոկեցուցիչ երևույթների, հայությունը կարողացել է հանդես բերել ապրելու ու պայքարելու զարմանալի և հույժ հարգանքի արժանի կամք: Փոքրինչ ուշքի գալով յաթաղանի առաջին ծանր հարվածներից, կամավորական մարտերով ու ինքնապաշտպանական պոռթկումներով բիբլիական մեր ժողովուրդը կարողացել է բարձրանալ մինչև պետականության վերականգնման բարձր աստիճանի: Պատերազմի իրողությունն իրենց համար ընկալելով որպես *հայրենական պատերազմ*, թշնամուն հակահարված տալու ինքնաբուխ, հանդուգն շարժումը հայությունն իր մեջ բյուրեղացրել է սեփական զինական ուժը ստեղծելով: Ու դեռ ավելին՝ հայությունը դրանք դուրս է բերել պատերազմի բեմ, իր բնօրրանում և Աշխարհամարտի մի շարք թեժ կետերում, ազդեցիկ շրջադարձերի առանցքում հանդես է եկել որպես գործոն: Եվ սա հարկ է դիտարկել որպես հայության նկատելի ներդրում Անտանտի բլոկի երկրների հաղթանակի գործում: Սա եղած փաստերին նորովի, սթափ հայացք նետելու արդյունքում հետևած եզրակացությունն է, Անդրանիկի, Արամ Մանուկյանի, Արամ Երկանյանի, Մկրտիչ Յոթնեղբայրյանի, Գարեգին Նժդեհի, Փիրումյան եղբայրների, Գուրգեն Տեր-Մովսիսյանի սերնդի կատարածի անաչառ գնահատականն է, պատմության մեջ նրանց արժանի տեղն

ամրագրելու առողջ նկատառում: Քիչ թե շատ հերոսական անցյալ ու պատմություն ունեցող ամեն մի ժողովուրդ կերպեր պատմության նման էջեր ունենալու համար: Որոշ երկրներում էլ նկարում-հնարում են դրանք՝ տուրք տալով սեփական պատմությունն արհեստականորեն «ազնվացնելու» հակազիտական կեղծարարական մղումներին: Հայ ժողովուրդը դրա կարիքը չունի, ու սակայն՝ ըստ արժանվույն չգնահատել սեփական ժողովրդի անցյալի հերոսական էջերը, ըստ էության կնշանակի մեղանշել քո իսկ կերպի սերնդի կատարած անօրինակ սխալագործությունների փաստերի առաջ. պատմությունը պիտի ներկայացվի անաչառ, առանց զեղծարարությունների ու գունազարդումների: Ինչպես իրավացիորեն, բազմիցս ընդգծում է քաղաքագիտության դոկտոր պրոֆեսոր Լևոն Շիրինյանը. «մենք պետք է հենվենք մեր պատմության վեհությունն և հզորությունն հաղորդող ազդակների վրա»²:

Ժողովրդի պատմական հիշողության մեջ դեռ թարմ են Դավիթ Բեկի ու Արցախի մելիքությունների, Մխիթար Սպարապետի հերոսական խոյացումները: Սակայն ներշնչման գլխավոր արտահայտությունը, ստրկության դարավոր քնից *արթնացնող գործոնը հայոց հայրուկային շարժումն է եղել: 1878-1918թթ. քառասունամյա շարժումն է թրծել Առաջին աշխարհամարտի ճակատներում մարտնչած հայոց կամավորական զնդերը, ապահովել նրանց բարձր բարոյական ոգին ու մարտական փորձառությունը: Հենց այդ մասին լավ իրազեկված լինելով էր պայմանավորված ցարիզմի քաղաքականությունը, որ ներգրավել էր հայկական ջոկատները պատերազմական գործողությունների պլաններում՝ որպես առաջապահ և հետախուզական ուժեր:*

Հայրուկային շարժման գնահա-

տականը, նրա խաղացած նշանակալից դերը հայապահպանության գործում, դեռևս կարոտ է համակողմանի վերլուծության և արժեվորման: Չպետք է մոռանալ, որ համիդյան «գուլումի» մուլեզնումի տարիներին (1894-1896թթ.) ֆիդայական փաղանգն էր, որ պաշտպան էր կանգնում շինականին: Անդրանիկի և Գևորգ Չաուշի գլխավորած կռիվը (1901թ.) Առաքելոց վանքում «լոկ պատահական դիմադրություն չէր, այլ ժողովրդի գիտակցությունը ցնցելու հերթական շարժում, որի շնորհիվ Տարոնի աչքը, սրբած հուսալքության արցունքն ու կակիծը իր թարթիչներից, հիմա շուտ է գալիս դեպի վեր, դեպի բարձունքները՝ լցված հույսով և հավատքի սպասումով, հիմա սրտանց ողջունում էր Սասունին ու անվախ ֆիդայուն: Ժողովուրդը դուրս էր գալիս... հեղձուկ խավարից և գտնում ապրելու կամք և պայքարելու սրբություն»¹:

«Ակն ընդ ական» ավետարանական դրույթը դարձնելով <գուլումի> պատասխանը, երբ դանակը դնում էին շինականի բկին, անպատվում ընտանիքը, հայ ֆիդային ու նրան սատարող ազատաբաղձ հոգևորականն էին դառնում ինքնապաշտպանության նախաձեռնողը, կազմակերպիչն ու հրամանատարը: Երևույթը շատ ցուցական է մեր այդ շրջանի պատմության համար, երևույթի նկարագիրը «մահ՝ իմացյալ» – ի շրջանակում է: Եվ պայքարի արդեն հաջորդ փուլում, Աշխարհամարտի տարիներին, շատ կարևոր է տեսնել, թե ինչպես դիմադրողական ինքնապաշտպանական ուժերի և կամավորական մարտերում, այնպես էլ պատերազմի ճակատներում փորձ ձեռք բերող հայ զինվորական ու քաղաքացիական կադրերը դառնում էին այն կորիզը, հիմքը, որոնցով էլ 1917-1918թթ. վճռորոշ ժամանակահատվածում ձևավորվել է հայոց բանակը՝ հայկական կազմակերպված ինքնու-

րույն զինուժը՝ գնե՛րալ Թովմաս Նա-
 զարբեկյանի գլխավորած հայկական
 կորպուսը: Հենց այս ուժն է հակահար-
 ված տվել Ղարաքիլիսայի ու Սարդա-
 րապատի պատերի տակ թուրքական
 բազմափորձ պետության կանոնավոր
 զորքին ու խուժանին:

“Յեղափոխություններից սրբագնա-
 գույնը, - գրել է Ավետիս Ահարոնյանը, -
 ժողովրդի ցավերից բռնկվող հրդեհն է”⁴:
 1878-1918թթ. ցավատանջ, համիդյան ու
 երիտթուրքական դժոխքի ճիրաններում
 ոգորող հայ հեղափոխական հրդեհի
 բոցերն առաջ բերելով Ադրյուր Սերո-
 բին, Անդրանիկին, Նիկոլ Դումանին,
 Սևաբեցի Սաքոյին, Վարդանին, Քե-
 ռուն ու Դրոյին, մաքրագործման և ժողո-
 վրդի ճակատագրին տեր կանգնելու
 ճանապարհ հանեցին նաև ցարական
 բանակի շարքերում բարձրացած բա-
 զում հայ զորականների, ինչպես գնե-
 րալներ Սովսես Սիլիկյանին, Թովմաս
 Նազարբեկյանին, գնդապետեր Ս. Ղա-
 զարովին, Զ.Ավետիսյանին, Բեյ-Մամի-
 կոնյանին, Ս. Սամարցյանին, այնպես էլ
 Դանիել և Պողոս Բեկ-Փիրումյաններին,
 Գարեգին Նժդեհին, կապիտան Գուրգեն
 Տեր-Սովսիսյանին և ուրիշների, ծայր
 առավ կամավորական շարժումը:

Աշխարհամարտի սկզբնական շրջա-
 փուլում կազմավորվել է կամավոր-
 ական 8 ջոկատ՝ 5-10 հազար զինվոր
 ու սպայով, նրանցից մարտերին
 մասնակցել է 6 ջոկատ: Սխրալից է
 յուրաքանչյուր ջոկատի անցած ուղին՝
 պսակված անմար փառքով: Եվ թեև
 1915թ. վերջին (ուշադրություն պետք է
 դարձնել տարեթվին. դա իրագործվող
 ցեղասպանության կուլմինացիոն ժա-
 մանակաշրջանն է) ցարիզմը ցրել է հայ
 կամավորական գնդերը՝ տարրալու-
 ծելով ռուսական բանակի զորամա-
 սերում, այդուհանդերձ, հայ զինական
 ուժը շարունակել է գործել և 1917-
 1918թթ. հանդես եկել որպես
 ինքնուրույն միավոր՝ Հայկական

կորպուս: Թույլտվությունը իջեցվել է
 Կերենսկու գլխավորած ռուսական
 Ժամանակավոր կառավարության կող-
 մից, այն Կերենսկու, որ ժամանակին
 հանդես էր գալիս որպես փաստաբան՝
 պաշտպանելով ՀՅԴ շահերը:

Բավականին տպավորիչ է կամա-
 վորական առաջին ջոկատի անցած
 ուղին լեգենդար Անդրանիկի գլխավոր-
 ությամբ: Այն գործել է որպես առաջա-
 պահ զորամիավորում (*շուրջ 2000 սվին*)
 ռուսական բանակի ձախ թևում:
 Ջոկատն իրեն անմար փառքով է
 պսակել հատկապես 1915թ. գարնանը
 Ուրմիա լճի մոտ, Դիլմանի ճակատա-
 մարտում՝ գործելով գնե՛րալ Թովմաս
 Նազարբեկյանի անմիջական հրամա-
 նատարությամբ: Անդրանիկը ոչ միայն
 ջախջախել է Խալիլի (Ադրբեջան պե-
 տության իրական հիմնադրի) թուր-
 քական բանակի առաջապահ ուժերին,
 այլև գրավել է Բաշկալեն և ապահովել
 ռուսական ուժերի կենտրոնացումն ու
 առաջ շարժվելը դեպի Վան: Այդպիսով
 հայ արծիվը ապահովել է նաև Վանի
 ինքնամոռաց պաշտպանների փրկու-
 թյունը: Հաջողության դեպքում թուր-
 քերը մտադիր էին գրավել
 Ատրպատականը, Նախիջևանը, ապա
 և՛ Միսիան-Գորիս-Շուշի գծով դուրս
 գալ Գանձակ (Գյանջա) ու հարվածել
 Բաքվին: Դա ճանապարհ կդառնար
 տիրանալու ոչ միայն Բաքվի նավթին,
 այլև՝ Վոլգային ու Միջին Ասիային:
 Թուրքերի առաջապահ ուժերի ջախջա-
 խումով և ռուսական հակահարձակ-
 մամբ Դիլմանում լուծվել է ևս մեկ
 ռազմավարական խնդիր. ձախողվել է
 Իրանն ու Աֆղանստանը Անտանտի
 դեմ հանելու գերմանա-թուրքական հե-
 ռուն գնացող պլանը:

Հայերի հնարավորությունները, մար-
 տական ոգին գնահատվել են ոչ միայն
 ռուսների, այլև ֆրանսիացիների ու
 անգլիացիների, անգամ թուրքերի կող-
 մից: Վերջինների բանակի կազմում,

սակայն, հայերը մասնակցել են ոչ որպես կամավորներ, այլ որպես Թուրքիայի քաղաքացիներ, և մեծիմասիվ ոչնչացվել հենց այդ պետության ծրագրով 1914-1915թթ. ընթացքում: Պետության քաղաքացին մեկնել է իր պարտականությունները պետության հանդեպ կատարելու, սակայն նրան ոչնչացրել են ու նաև սպառնալիք ստեղծել հայ զինվորների հարազատների համար՝ արքայերով Միջագետքի անպատները, այսինքն ոչնչացրել են զինվորի ինքնությունը պայմանավորող բոլոր ատրիբուտները՝ ընտանիքն ու բազմադարյան մշակույթը, իրականացրել հայրենագրկում:

Եղեռնահար ժողովրդի մարտական ոգու և անընկճելի կամքի դրսևորում էին նաև Հայկական (Արևելյան) լեզեռնի գործողությունները 1916-1920թթ.: Լեզեռնը ստեղծվել է 1916թ. աշնանը, Սայքս – Պիկո* անգլոֆրանսիական համաձայնության շրջանակներում, հայոց ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի կնքած համաձայնագրի հիման վրա: Համաձայնագիրը նախատեսում էր կազմալուծել մարդկության վզից ծանր քարի պես կախ ընկած Օսմանյան կայսրությունը:

Ֆրանսիական զորքերի կազմում հայերն արաբների հետ միասին կռվում էին օսմանյան ուժերի դեմ, դրա դիմաց Ֆրանսիան հայերին խոստանում էր ինքնավարություն Կիլիկիայում: Լեզեռնի ստորաբաժանումների ղեկավարները ևս ֆրասիացի սպաներ էին: Առաջին երեք գումարտակների կորիզը կազմել են Կիպրոսում հավաքված ամերիկահայերը, իսկ հոկտեմբերին (1918թ.) Բեյրութում ձևավորվել է նաև չորրորդ գումարտակը՝ լեզեռնականների ընդհանուր թիվը, այդպիսով, հասցվել է 5000-ի: Ծախսերն ամբողջովին դրված էին ֆրանսիական կառավարության վրա:

Իրենց ծանրակշիռ մարտական մկրտությունը հայկական այս ստորաբաժանումը ստացել է 1918թ. սեպտեմբերի 19-ին՝ Պաղեստինում, Արարայի բարձունքում՝ ջախջախելով թուրքական “Յըլդըրըմ” բանակի առաջապահ ուժերին: Հաղթանակը դաշնակիցներին հնարավորություն է տվել հետ շարժել թուրքերին և ազատագրել արաբական հողերի զգալի մասը: Ֆրանսիական և անգլիական ռազմական պատմաբանները բարձր գնահատականներ են տվել Լեզեռնի գործողություններին:

Մասնակցելով Միրիայի և Լիբանանի ազատագրմանը, 1918թ. նոյեմբեր-դեկտեմբերին լեզեռնը մտել է Կիլիկիա, մասնակցել նրա պաշտպանությանը: Մ. Տամատյանի ղեկավարած կիլիկիահայերի կառավարությունը փորձել է այն դարձնել հայկական բանակի հիմքը, սակայն, փոխված միջազգային իրադրության պայմաններում, ֆրանսիական կառավարությունը անցել է քեմալականների կողմը՝ վախենալով բոլշևիզմի ուժեղացումից: Հետևանքը եղել է կիլիկիահայերի նոր ողբերգությունը, գանգվածային նոր կոտորածները: 1920թ. լեզեռնը լուծարվել է:

Դիմանից և Էրզրումից հետո (1916թ. փետրվար) առանձնանում են Մարդարապատի և Ղարաքիլիսայի ճակատամարտերը, ինչպես և՛ Բաքվի կոմունայի օրերին ու դրանից հետո հայոց ինքնապաշտպանական մարտերը: Դրանց միանգամայն անկեղծ ու պերճախոս գնահատական է տվել ինքը՝ թուրքական ճակատի հրամանատար Վեհիբ փաշան.

“...Ղարաքիլիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները”: Միաժամանակ թուրք գեներալը խոստովանել է, որ պատրաստվում էին ետ քաշվել և լքել Ալեքսանդրապոլը, նույնիսկ Կարսը՝ ընկնելով հայ ժողովրդի դիմադրու-

* Օնթ. Սայքսը Անգլիայի արտգործնախարարն էր, Պիկոն՝ Ֆրանսիայի, - հեղ.

թյան առաջ:⁷

Թուրքերի 1918թ. անհաջողությունների պատճառները այսպես է բացատրել Թեհրանի (Իրան) «Ալիք» թերթը. «Պանթուրանական արշավը երկու ուժեղ հարված ստացավ՝ առաջինը 1918թ.՝ մայիսի 23-ից մինչև 28-ը, երեք ճակատներում՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսեի, որ հաղթականորեն մղեցին հայերը, հարվածելով թշնամու ողնաշարին, ապա նույն՝ 1918թվականի սեպտեմբերին Բաքվի ճակատում, որը դարձյալ հայերն էին մղում: ...Այդ ճակատամարտերը ամիսներով դանդաղեցրին թուրքական բանակի առաջխաղացումը...»⁸: Ինչպես պատկերավոր նշում է քաղաքագետ Լևոն Շիրինյանը, <...մինչև կյոթանար թանաքը Բաթումի դաշնագրի... տեքստի տակ, թալանից, ավարատությունից, թրքական եղեռնագործությունից արբեցած, սակայն Արարատյան դաշտից դուրս շարժված թուրանական հորդան խելակորույս մղումով նետվում է Բաքու>:² Այդ նպատակով ստեղծված, այսպես կոչված, <խլամական բանակի>, որ ստեղծվել էր Գանձակում Նուրի փաշայի գլխավորությամբ, ճանապարհը փակել են Բաքվի Կոմունայի հիմնականում հայերից կազմված Կարմիր բանակի և Հայոց Ազգային խորհրդի զորամասերը (Ղազարով, Ավետիսով, Գյուլխանդանյան): Գերազանցապես նրանց շնորհիվ զավթիչները մեծ կորուստներ են կրել: Մեկուսացված և որևէ օգնությունից (անգամ ռեալ համարվող բոլշևիկյան օգնությունից) զրկված Բաքվի ինքնապաշտպանական հայ ուժերը ի վերջո տեղի են տվել:

Հայերի դիմադրությունից ապշած, հանրահայտ Լյուդենդորֆը, որ տարված էր Թուրքմենիայիում և Թուրքեստանում նոր տարածքներ հիմնելու, Բաքվում նավթի վիթխարի արդյունահանում իրագործելու ծրագրերով, թուր-

քական «Արևելք» զորախմբի շտաբի պետ Էռնստ Պարագվինի միջոցով Բաքվի Հայոց Ազգային խորհուրդ է փոխանցել գերմանացիների պահանջը. «Բաքուն առանց քանդելու և ավերելու մեզ հանձնել և թույլ տալ, որ նրա նավթից օգտվենք»: Ընդ որում նրանք նախօրոք հարցը համաձայնեցրած են եղել Լենինի հետ: «Մենք համաձայն ենք», - հեռագրել էր «համաշխարհային հեղափոխության առաջնորդը» Ցարիցին՝ Իոսիֆ Ստալինին: Վերջինս համապատասխան հեռագիր է ուղարկել Կոմունայի ղեկավարությանը:

Գերմանացիք, այդպիսով, ձգտել են Բաքուն դարձնել Բեռլին-Բաքու-Բուխարա ստեղծվելիք նոր առանցքի հանգրվան, աշխարհամարտի ռազմավարական հանգույց: Հասկանալի է, որ նրանց նկրտումները պետք է բախվեին հայերի դիմադրությանը: Սակայն ուժերն անհավասար են եղել, իսկ կոմունարների հեռանալը առավել ծանրացրել է հայերի վիճակը: Բաքու մտած օսմանցիներն ու քաղաքի խուժանը արբեցել են հայերի արյամբ, կոտորելով շուրջ 30 հազար անզեն հայ բնակիչներ:

Կատարենք որոշ ընդհանրացումներ՝ հասկանալու համար, ինչ արդյունքներով էր հայությունը ավարտել 1918թ. առաջին կեսը և ամառը: Թուրքական պետության ծրագրած քաղաքականության հետևանքով արևմտահայությունը ավելի քան կիսով չափ գլխատվել էր, տալով մեկ ու կես մլն զոհ, ցիրուցան էին եղել նրա փրկված բեկորները, հայերը կորցրել էին իրենց պատմական հայրենիքի տարածքի 9/10-րդը: Եվ, այդուհանդերձ, իրողություն է նաև այն, որ հայերի կողմից յաթաղանին ցույց տված դիմադրությունը ևս կատարել է իր դերը՝ ձախողվել են գերմանաթուրքական բոլշևի առանձնապես օսմանյան թուրքերի պանթուրքական նվաճողական պլան-

ները: Առավել շոշափելին ու առարկայականն այն է, որ 600-ամյա ընդմիջումից հետո 1918թ. մայիսի 28-ին վերականգնվել է հայոց պետականությունը, հայերը նորից բարձրացել են ինքնուրույն պետականության կերտման աստիճանի: Լիովին հաղթահարել հայկական պատմեզը գերմանաթուրքական բռնկին այսպիսով չի հաջողվել, դեռ ավելին, հենց հայերի դիմադրությունն է այլ ելք հաղորդել պատերազմին: Մեջբերենք դարձյալ գերմանական բանակի ընդհանուր սպայակոյտի պետ գորավար Էրիխ ֆոն Լյուդենդորֆին.

“Գլխավոր ազդակը, որ գերման արեվմտեան բանակին խորտակումը առաջ բերաւ, վառելանյութի պակասն էր, որովհետեւ թուրքերը չկրցան ատենին գրաւել Բագուն, եւ հայերն էին, որ թուրքերուն արգելքը եղան Բագուն գրաւելու իր ժամանակին”:³

Տոն Լյուդենդորֆին երկրորդում է թուրք գեներալ Ալի Իսահան փաշան. “Եթե հայերը չլինեին, մենք կնվաճեինք Կովկասը”:⁵

Ավելի կոնկրետ և հստակ է փաստերին մոտեցել Գերմանիայում ԱՄՆ դեսպան Ջեյմս Ջերարդը. “Ամերիկացիք պետք է մի վայրկյան կանգ առնեն և խորհեն, թե ինչ կլինեն պատերազմի ելքը և տևողությունն անգամ, եթե թուրքերը 8 ամիս առաջ հասնեին Բաքու: Եվ նրանք ավելի կանուխ կհասնեին, եթե հայերը չդիմադրեին”:²:

Ահա սա էր ցեղասպան պետությանը հայերի կողմից տրված պատասխանի իրական գնահատականը: Եվ սա ինչպես կամավորական շարժման, այնպես էլ Վանի, Շապին-Գարահիսարի, Եդեսիայի (Ուրֆա), Սասունի, Մուշի ու Մուսա լեռան (Մուեղիայի) հերոսների ինքնապաշտպանական կռիվներին օտարի տված սթափ գնահատականն է, պատերազմի ճակատներում հայ կամավորական զնդերի խիզախություն-

ների գնահատականը, Հայկական կորպուսի դիմադրության և Բաքվի ինքնապաշտպանության գնահատականը: Դրանք բոլորը կապված են հայոց դիմադրական շարժման ընդհանուր, գոյատևման պայքարի տրամաբանությամբ, հայոց պատմության երևելի էջերից են, որպես՝ մեր ազգի նկատելի ներդրում Անտանտի հաղթանակի մեջ: Աշխարհամարտը, որ սկսվել էր որպես հայոց գոյատևման պայքար՝ կործանվող կայսրությունների փլատակների տակ չմնալու, ապրող ժողովուրդների ցանկից չանհետանալու համար, մեր ժողովրդի հերոս զավակների ջանքերով ստացել է հայրենական պատերազմի բնույթ և բերել տրամաբանական հանգուցալուծման՝ պետականության վերակերտման: Չլինե՞ր Հայաստանի առաջին հանրապետությունը, չէր լինելու նաև Խորհրդային Հայաստանը և հայոց հողերը վերջնականորեն բաժանբաժան էին արվելու հարևանների միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

- 1 Հ.Մ.Մուրադյան “Էջեր հայ ժողովրդի հերոսական անցյալից”, Ե.1983թ.
- 2 Լ.Շիրինյան “Պատմության հայկական գործունը”, “Ազգ” օրաթերթ, 29.11.2008թ.
- 3 Գ.Լազեան “Հայաստան և հայ դատը հայ և ռուս հարաբերություններուն լույսին տակ”, Ե.1981թ.
- 4 Ա.Վ.Ահարոնյան “Ավարայրի ոգեկոչումը”, Ե.1991թ.
- 5 Մ. Պողոսյան “Պանթուրքիզմը երեկ և այսօր”, Ե.1990թ.
- 6 Ջ.Գիբկոյան “Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը”, Ե.1967թ.
- 7 Ա.Շ.Հարությունյան “Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ.վականին և ինքնապաշտպանական կռիվները”, Ե.1984թ.
- 8 Մ. Պողոսյան, Կ. Պողոսյան “Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն”, հ.ե., գիրք առաջին, մաս Բ, Ե.2004թ.
- 9 “Ալիք” թերթ, 31 մարտի 1979թ.

ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԴԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌՈՒԲԵՆ ՎԱՉՍԳԱՆԻ ՊԱՐՄԱՍՅԱՆ

ՀՀ ժուռնալիստների միության անդամ, պատմաբան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում արծարծվում են նորագույն ժամանակների պատմության համար առանցքային իրադարձություններից մեկի՝ Առաջին համաշխարհային պատերազմի պատմության որոշ հիմնահարցեր՝ կապված այդ պատերազմում հայ ժողովրդի ճակատագրի ու նրա խաղացած դերի հետ:

Տարափեղկված Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև, Հայաստանը և հայ ժողովուրդը, որ պաշտոնապես այս պատերազմին չէր մասնակցում, ենթարկվել է ցեղասպանության ու հայրենագրկման, ունեցվածքի կողոպուտի և մշակութային եղեռնի:

Հոդվածում ընդգծվում և փաստերով ցույց է տրվում, որ վերը նշված իրողությամբ հանդերձ, հայությունը կարողացել է դրսևորել ոչ միայն ինքնապաշտպանական ոգի, այլև, ստեղծելով զինական ուժեր, դրանց դուրս է բերել պատերազմի բեմ, հանդես եկել որպես որոշիչ ևս մեկ գործոն և

Աշխարհամարտի մի շարք թեժ կետերում, ազդեցիկ շրջադարձերի առանցքում անցել վճռական ազդեցության, իր ներդրումն ունեցել Անտանտի երկրների հաղթանակի մեջ:

Նման եզրակացությունը կապված է ինչպես Ղարաբիլիսայի, Ապարանի, այնպես էլ Հյուսիսային Պաղեստինի Արարայի բեկումնային ճակատամարտի ու Բաքվի հայերի ինքնապաշտպանության հետ: Սրանք կասեցրել են թուրքերի առաջխաղացումը դեպի Բաքվի նավթահորերը, զրկել բլոկի երկլանջին վառելիքի համալրումից և, արդյունքում, կարևոր դեր ունեցել Քառյակ միության պարտության գործում:

Բանալի բառեր. Ռուբեն Պարսամյան, հայերի ինքնապաշտպանություն, Առաջին աշխարհամարտ, Արարայի ճակատամարտ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ О РОЛИ АРМЯН В ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЕ

РУБЕН ВАЧАГАНОВИЧ ПАРСАМЯН

Член Союза журналистов Армении, историк

РЕЗЮМЕ

В статье затрагиваются некоторые вопросы истории одного из ключевых событий Первой мировой войны в связке с судьбой армянского народа и его ролью в этой войне.

Разделенная между двумя империями – Османской и Российской, Армения и армянский народ официально не участвовала в этой войне, подверглась геноциду и лишению родины, растлению культуры, а их имущество было разграблено, став основой экономического роста современной Турции.

В статье подчеркивается и непредвзятыми фактами доказывается та реальность, что армяне не только сумели прибегнуть к самообороне, но и сформировали армейские силы, вывели их в театр военных действий, выступали в качестве еще одного определяющего фактора в горячих точках, поворотных событиях Мировой войны и, тем самым, внесли вклад в деле победы стран Антанты.

Подобное заключение связано как с героическими битвами при Каракилисе, Апаране так и с сражениями и в Северной Палестине (Арара), а также с героической самообороной Бакинских армян, - события, которые долгое время приостановили продвижение турецких войск в сторону Бакинских нефтяных шахт, лишили страны германского блока горючего, в итоге сыграли важную роль в деле победы стран Антанты над Германским блоком.

Ключевые слова: Рубен Вачаганович Парсамян, самооборона армян, Первая мировая война, Битва Арара.

A FEW QUESTIONS ABOUT THE ROLE OF ARMENIANS IN THE WWI

ROUBEN VACHAGAN PARSAMYAN

Member of the Union of Journalists of Armenia, Historian

SUMMARY

The article covers one of the key events in modern history: some issues of the history of World War I connected with the fate and role of Armenian people in that war.

Landlocked between the Ottoman and Russian Empires, Armenia and Armenian nation not officially participating in the war, was subjected to genocide and dispossession, looting of property and cultural extermination.

The article highlights and brings evidence, which show that despite the abovementioned events, the nation was able to demonstrate not only its self-defense spirit, but also created armed forces, brought them into the war, acted as a decisive factor in a number of hot spots of the war, had a decisive influence in vital periods of the war and had its contribution to the victory of the Entente countries.

This conclusion is not only connected with the crucial battles of Gharakilisa, Aparan and that of Arara in North Palestine, but also with the self-defense of the Armenians in Baku. These events prevented the advancement of Turks into the oil wells of Baku, deprived the block of fuel replenishment and, as a result, had a significant role in the defeat of the Quadruple Alliance.

Key words: Rouben Vachagan Parsamyan, self-defense of Armenians, World War I, Battle of Arara.

ՄԱԿ-ի ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է 2016Թ. ՀՈՒՆՎԱՐԻՑ¹

2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներ, որոնք ընդունվել են աշխարհի երկրների առաջնորդների կողմից ՄԱԿ-ի 2015թ. սեպտեմբերի պատմական գագաթնաժողովում: Առաջիկա 15 տարիների ընթացքում՝ առաջնորդվելով այս նոր նպատակներով, աշխարհի երկրները կհամախմբեն իրենց ջանքերը վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետևելով, որ ոչ ոք չանտեսվի:

Կայուն զարգացման նպատակները հիմնվում են հազարամյակի զարգացման նպատակների (ՀՁՆ) արձանագրած հաջողությունների վրա և նպատակաուղղված են վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով:

Նոր նպատակները բացառիկ են այնքանով, որ բոլոր այդ թվում հարուստ, աղքատ և միջին եկամուտ ունեցող երկրներին հորդորում են խթանել բարգավաճումը և միաժամանակ պաշտպանել մոլորակը: Այստեղ հաշվի է առնված, որ աղքատության վերացումը պետք է ուղեկցվի այնպիսի ռազմավարությունների կիրառմամբ, որոնք կնպաստեն տնտեսական աճի խթանմանը և մի շարք սոցիալական կարիքների բավարարմանը, այդ թվում՝ կրթության, առողջապահության, սոցի-

ալական պաշտպանության և աշխատանքի հնարավորությունների ոլորտներում՝ միաժամանակ լուծելով կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրին առնչվող խնդիրները:

Թեև կայուն զարգացման նպատակներն իրավաբանորեն պարտադիր չեն, կառավարություններից ակնկալվում են հանձնառությունների և ազգային ծրագրերի մշակում՝ ընդունված 17 նպատակներին հասնելու համար: Երկրներն առաջնային պատասխանատվություն ունեն իրականացնելու հետևողական գործողություններ և դիտարկելու նպատակների իրագործման առաջնացք, ինչը պահանջում է որակյալ ու մատչելի տվյալների ժամանակին հավաքագրում: Տարածաշրջանային հետագա գործողություններն ու դիտարկումները հիմնված կլինեն ազգային մակարդակի վերլուծությունների վրա և կնպաստեն հետագա գործողությունների ու դիտարկումների իրականացմանը գլոբալ մակարդակում:

Գլոբալ մակարդակով **169 թիրախներից բաղկացած 17 նպատակները** կենթարկվեն մշտադիտարկման համաձայն գլոբալ ցուցանիշների:

Կայուն զարգացման օրակարգ 2030 պատմական ակնարկ

2015թ. սեպտեմբերին աշխարհի **ավելի քան 150 երկրների** առաջնորդները ՄԱԿ-ի Նյու Յորքի կենտրոնական գրասենյակում մասնակցեցին

1 «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» (ՀՄԻԿ) հասարակական կազմակերպությունը 2006թ.-ից ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդում (ECOSOC) ունի հատուկ խորհրդատվական կարգավիճակ, հավատարմագրված է ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչությանը և իր բոլոր հրապարակումներում, այդ թվում՝ «Վասն արդարության» հանդեսում, վարում է ՄԱԿ-ի տեղեկատվական էջ:

Այս նյութը հրապարակվում է որպես այդպիսին:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման գազաթնաժողովին պաշտոնապես ընդունելու համար կայուն զարգացման նոր, հավակնոտ օրակարգը:

ՄԱԿ-ի 193 անդամ երկրներ համաձայնության եկան «**Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030**» խորագրով փաստաթղթի շուրջ, որի մեջ ներառված են հոչակագիրը, կայուն զարգացման 17 նպատակներն ու 169 թիրախները:

Հազարամյակի զարգացման նպատակներ

Հազարամյակի զարգացման նպատակները, որ ծնունդ են տվել պատմության մեջ աղքատության դեմ պայքարի առավել հաջող շարժմանը, ծառայում են որպես հենակետ Կայուն զարգացման օրակարգի համար:

Զարգացող աշխարհի գրեթե կեսը միայն երկու տասնամյակ առաջ գտնվում էր ծայրահեղ աղքատության մեջ: ՀԶՆ-ի ընդունումից ի վեր, ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց

թիվը ներկայում ավելի քան կիսով չափ կրճատվել է **1999թ. 1,9 մլրդ-ից 2015 թվականին հասնելով 836 միլիոնի:**

Այնուամենայնիվ, արձանագրված առաջընթացն ըստ տարածաշրջանների ու երկրների բաշխված է անհավասարաչափ, առկա են տեղ գտած զգալի բացթողումներ: Միլիոնավոր մարդիկ «մնացել են անտեսված», հատկապես ամենաաղքատներն ու իրենց սեռի, տարիքի, հաշմանդամության, էթնիկական կամ աշխարհագրական ծագման հետևանքով խտրականության ենթարկված անձինք: Ավելին, ներկայումս կլիմայի փոփոխությունը ազդում է մայրցամաքների բոլոր երկրների վրա, իսկ դրանից առավել շատ տուժում են ամենաաղքատ ու ամենախոցելի մարդիկ:

Կայուն զարգացման նպատակները իրենց համապատասխան լոգոներով, տես հանդեսի էտեի կազմի վրա:

Աղբյուրը
<http://www.un.am/hy/news/260#sthash.mJ1b6Nvf.dpuf>

THE UNATED NATIONS SUSTAINABLE DEVELOPMENT GOALS WENT LIVE¹

On 1 January, 2016, the United Nations 17 Sustainable Development Goals (SDGs) of the 2030 Agenda for Sustainable Development—adopted by world leaders in September 2015 at an historic UN Summit—officially came into force. Over the next fifteen years, with these new Goals that universally apply to all, countries will mobilize efforts to end all forms of poverty, fight inequalities and tackle climate change, while ensuring that no one is left behind.

The SDGs build on the success of the Millennium Development Goals (MDGs) and aim to go further to end all forms of poverty. The new Goals are unique in that they call for action by all countries, poor, rich and middle-income to promote prosperity while protecting the planet. They recognize that ending poverty must go hand-in-hand with strategies that build economic growth and addresses a range of social needs including education, health, social protection, and job opportunities, while tackling climate change and environmental protection.

While the SDGs are not legally binding, governments are expected to take ownership and establish national frameworks for the achievement of the 17 Goals. Countries have the primary responsibility for follow-up and review of the progress made in implementing the Goals, which will require quality, accessible and timely data collection. Regional follow-up and review will be based on national-level analyses and contribute to follow-up and review at the global level.

At the global level, the 17 SDGs with 169 targets will be monitored using a set of global indicators.

Background to the 2030 Agenda

In September 2015, more than 150 world leaders attended the UN Sustainable Development Summit held at UN Headquarters in New York to formally adopt an ambitious new sustainable development agenda.

Agreed by the 193 Member States of the UN, the Agenda, entitled “Transforming Our World: 2030 Agenda for Sustainable Development,” consists of a Declaration, 17 Sustainable Development Goals and 169 targets, a section on means of implementation and renewed global partnership, and a framework for review and follow-up.

The Millennium Development Goals

The Millennium Development Goals (MDGs), which produced the most successful anti-poverty movement in history, serve as a springboard for the Sustainable Development Agenda.

Only two short decades ago, nearly half of the developing world lived in extreme poverty. Since the MDGs, the number of people now living in extreme poverty has declined by more than half, falling from 1.9 billion in 1990 to 836 million in 2015.

However, progress has been uneven across regions and countries, leaving signif-

¹ The Armenian Constitutional Right-Protective Centre has a Special Consultative Status with the UN Economic and Social Council (ECOSOC) since 2006 is associated with the UN Department of Public Information and in all of its periodicals, including the Review "For the Sake of Justice", has a UN information page. This material is published as such.

icant gaps. Millions of people are being left behind, especially the poorest and those disadvantaged because of their sex, age, disability, ethnicity or geographic location. Moreover, climate change is now affecting every country on every continent, and the poorest and most vulnerable people are being impacted the most.

<http://www.un.am/en/news/260#sthash.yQNr0KvR.dpuf>

ՀԱՍՑԵՆ՝ ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ. +374 (322) 2-29-67,
Էլ. փոստ acrpc@acrpc.am
URL www.acrpc.am

ADDRESS: 1 Shirakatsi Lane, Building 2, Vanadzor, RA
Tel. (+374 322) 2-29-67
E-mail: acrpc@acrpc.am
URL: www.acrpc.am

**ՀԻՄՆԱԳՐՎԵԼ Է 1989թ.
FOUNDED IN 1989**

*Գրանցված է ՀՀ Արդարադատության նախարարությունում:
Գրանցման վկայական՝ թիվ 1016*

ISSN 1829-4871

**Հիմնադիր և հրատարակիչ՝ Հայկական սահմանադրական
իրավապաշտպան կենտրոն (ՀՄԻԿ) հասարակական կազմակերպություն**

Ստորագրված է տպագրության 2016թ. օգոստոսի 01
Ծավալը՝ 3,75 տպագր. մամուլ, տպաքանակը՝ 100

Տպագրվել է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատան տպարանում
